

613.89

44-88









22 FEB 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Января 1901 года.



624  
45

## ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Առողջապահական քսիւղ)

«Քաղաքակրթութեան հիմքը ընտանիքն է: Առաքինութիւնը ծաղկում է այն օջախում, որտեղ թագաւորում է սէրը ամուսինների մէջ: Տիեզերքի բոլոր լեզուների ամենաշքեղ և ամենավսեմ բառերն են. իմ կինը, իմ հայրը, իմ մայրը, իմ երեխան: Առանց այս բառերի աշխարհը կը դառնար մի ահագին որջ, իսկ միջի մարդիկ—անասուններ»:

Այսպէս է խօսում մի փիլիսոփայ, որ բնական է համարում միմիայն օրինաւոր միակնութիւնը: «Ո՛չ մի լեզուով չի կարեւոր նկարագրել այն փնասը, որ բազմակնութիւնը բերում է մարդկութեանը», ասում է նա:

Ամուսնական կեանքը, թէ ֆիզիքական

և թէ բարոյական տեսակէտներից, երջանկութեան մի անսպառելի աղբիւր է ամուսինների համար:

Ընտանիքը երկրային դրախտ է, եթէ նա բախտաւոր է. հակառակ դէպքում նա գժոխք է դառնում:

Բախտաւոր ընտանիքը կազմւում է այն ժամանակ միայն, երբ պսակուողները լուրջ ու գիտակցօրէն կերպով են վերաբերուել դէպի իրանց ընտրութիւնը, այսինքն. զեկավարուել են գիտութեան ցուցմունքներով:

Սէրը դէպի պսակ տանող միակ ուղին պիտի լինի, անձնական երջանկութիւնն ու հասարակութեան բարօրութիւնը—ամուսնութեան նպատակը, իսկ ցեղի տեսողութիւնը—նրա հետեանքը:

ԲԺՇԿ. Վ. ԱՐՄՐՈՒՆԻ

1901.



# I

## ԸՆՏԱՆԻՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սմուսնութիւնը հին դարերում.—Քաղմայրութիւն  
և բազմակնութիւն.—Սմուսնանալու երեք սխաւե-  
ները. առեւանգումն (աղջիկ փախցնելը), գնումն (բաշ-  
լըղ) և փոխադարձ համաձայնութիւն.—Կնոջ դու-  
րութիւնը.—Նախնական բնասնիք, արեւակցական բն-  
սանիք, պունալուս:

—

Շատ դարեր են հարկաւոր եղել մարդ-  
կութեանը, որ նա հասնէր երկու սեուերի  
համակեցութեան ազնուացած ձևին —միակ-  
նութեան և միամարդութեան:

Ընսանիքը նոյնպէս իր երկար, ախուր  
պատմութիւնն ունի, ինչպէս մարդկութեան  
բոլոր հիմնարկութիւնները:

Մեզ յայտնի չեն ընտանիքի էվոլյու-  
ցիայի բոլոր աստիճանները, որոնցով այս  
փրկարար հիմնարկութիւնը հասել է մեր  
ժամանակուայ միակնութեանը: Հետազո-

առութիւններից ակներև է եղել այն, որ քաղաքակրթութեան արշալուսին տղամարդու և կնոջ մէջ կարող էին գոյութիւն ունենալ միմիայն սեռական յարաբերութիւնները, և մօտ դարերի ընթացքում միայն դիտութիւնը և հասարակական կեանքը մշակել են և արդիւնել մի ուրիշ, աւելի բարձր, աւելի գաղափարական վերաբերումն դէպի կինը: Հին դարերում տղամարդը, իբրև աւելի ուժեղը, իշխող և տիրող էր, և նա նայում էր կնոջ վրայ, իբրև թոյլ էակի վրայ, որ ստեղծուած է նրան հաճոյք պատճառելու համար միայն:

Այս հայեացքն էր իսկապէս այն նսեմացնող, ստորացնող դերի պատճառը, որ խաղացել է կինը մարդկութեան կեանքի մէջ, ծառայելով տղամարդուն միայն իբրև էգ:

Նախնական դարերում ընտանիք չը կար: Կինը ամենքին էր պատկանում: սիրոյ զգացմունքը ձուլում էր սեռական կրքի հետ և տևում էր այնքան, որքան տարվանքը: Այս պայմաններում մարդը պիտի ազատ լինէր խանդոտութիւնից, որ զարգանում է միմիայն իսկական սիրոյ հետ: Չը կար

նոյնպէս և այն սրբազան կապը—օրդին, որ միջնորդ է և յաճախ գրաւական ամուսինների փոխադարձ յարգանքին ու սիրուն, որի վրայ, յամենայն դէպս, կենդրոնանում են երկու ծնող սրտերի ամբողջ քնքշութիւնը, նրանց բոլոր յոյսերը: Այս շղթան բացակայ էր, քանի ոչ ոք չէր ճանաչում երեխայի իսկական հօրը, որ իր կողմից չէր հոգում իմանալու, թէ ինչ հետեանք էր ունեցել իր մի ժամուայ սէրը... Երեխան մօր գաւակն էր: Նա աչքերը բաց էր արել և միայն մօրն էր տեսել, մօր գրկումն էր մեծացել, վերջապէս մօր անունն էր կրում ու պիտի միշտ կրէր:

Բազմաթիւ հետազօտութիւններ ու վիճաբանութիւններն են տեղի ունեցել հների մէջ գոյութիւն ունեցած «ամուսնական սխտեմների» մասին:

«Այս անվերջ վէճերից, ինձ թւում է, թէ պարզուել է մի բան միայն», ասում է Տարտը, «այն, որ նախնական ընտանիքի կազմութիւնը մի քանի տեսակ է եղել.— մի տեղ տիրել է միակնուքիւնը, միւս տեղ — բազմակնուքիւնը, մի ուրիշ տեղ — բազմայրութիւնը:

Այս ամուսնական ձևերի կողքին կարող էին գոյութիւն ունենալ, երևի, և տասնաւոր ուրիշ գրութիւններ:

Սակայն բոլոր գրութիւնների հիմքը եղել են կամ կնոջ առեանգ ումն, կամ նրա գնումն և կամ փոխադարձ համաձայնութիւնը:

Բազմայրութիւնը (պօլիանդրիա), երբ մի կին ապրում է երկու կամ մի քանի տղամարդկանց հետ, որոնք կարող են եղբայրներ լինել, — մինչև հիմի էլ գոյութիւն ունի Հնդկաստանի թերակղզում, Հիմալայի վրայ, Տիբէթում և Մալարարեան ծովեզրում:

Շատ աւելի տարածուած է եղել և է այժմս էլ, բազմակնութիւնը, որ, ինչպէս ասել ենք, կնոջ համար ստեղծում է մի վերին աստիճանի ստոր գիւրք:

Հնդկաստանում, Եգիպտոսում, Ասորեստանում ու Բաբելոնում, տիրում էր բազմակնութիւնը: Մովսէսի օրէնքը չէր արգելում մի քանի կին առնել, իսկ մահմեդականութիւնը սրբագործեց բազմակնութիւնը և քանդեց Զենդ-Աւեստի օրէնքը, որով իսկա-

կան կինը մէկ հաս էր, թէև թոյլ էր տրուում հարճեր էլ պահել:

Ամուսնութիւնը հին դարերում, իսկ մեր ժամանակներում ոչ-քաղաքակրթուած ազգերի մէջ, կատարում է կամ զօռով (յափշտակութեամբ) կամ գնումով:

Առեւանգումն կամ աղջիկ փախցնելը անտարակոյս ամենագուհիկ միջոցն է ամուսին ձեռք բերելու համար: Պատմական օրինակը—Սարկենեան կանանց յափրշտակումն է, որ կատարեցին նախնական Հռովմայեցիները, դաժան կերպով, մի խնջոյքի մէջ: Հին գերմանացիները, իսկ մեր օրերում Ղալմուխները, Չերքէզները նոյն կերպով են ամուսնանում: նոյն ձևը նկատում է Կամչատկայում, Նոր-Չելանդիայում, իսկ մի քանի հնգիկ ցեղեր և Սամոյեզները ուղղակի գողանում են պատահած աղջկան կամ կնոջը, ինչպէս քաղցած գաղանք հանդիպած որսը: Յունաստանում և ռուսաց երկրներում երևի աղջիկ փախցնելը նոյնպէս հասարակական վարք ու բարքի մէջ է մտած եղել: Յունաստանում հարսին փախցնելը և մի քանի օր պահելը հարսանիքի ծէսի մէջ էր մտնում: Երկրորդ ձևը—

զնումն է, կամ աւելի ճիշտն առած, փոխա-  
նակումն մի ուրիշ «ապրանքի» հետ: Կինը  
դառնում է մի ցանկալի առարկայ, որին  
տիրելու համար տղամարդը վճարում է իր  
ձին, իր տաւարը, մի զգեստ, մի զէնք, մի  
օղ, մի զարդ և այլն: Այս մի աւելի մեղմ,  
աւելի քաղաքակրթուած միջոց է. — կինը էլի  
որոշ զին է ստանում, թէև յաճախ աւելի  
էժան, քան մի որ և է թանկագին առարկայ:

Ժամանակակից մի քանի ազգերի և  
մահմեդական ցեղերի մէջ աղջիկն ուղղակի  
գնւում է փողով, և այսպիսով հարուստը  
հնարաւորութիւն է ունենում հարեմներ  
սարքելու: Մեր ժամանակներում այս ձևը  
գոյութիւն ունի մահմեդական ազգերի մէջ,  
ինչպէս և Կաֆրների և ուրիշ նեղրերի մէջ:  
Աֆրիկական ցեղերից մէկի թագաւորը կա-  
րող է մինչև 3300 կին ունենալ (բայց ոչ  
աւելի): Մադագասկար, Մարիիդ և հարևան  
կղզիների վրայ, Աֆրիկայում և ամերիկական  
հնդիկների մէջ, բազմակնութիւնը մինչև  
այսօր էլ բնական երևոյթ է:

Զինացիներն ու թիւրքերը (նոյնիսկ  
կրթուած դասակարգը) այժմն էլ պահպա-  
նում են ամուսնութեան այդ պախարակելի

ձեռք: Միանգամայն զարմանալի է, որ արդէն բաւականին քաղաքակրթուած ճապոնացիին ևս դեռ չի հրաժարուել հարեմական կացութիւնից: Ճշմարիտ է, այնտեղ, ինչպէս և Չինաստանում, օրինական է համարուում առաջի կինը միայն, այն ինչ Թիւրքիայում առաջին չորս կանայքն էլ իսկական ամուսիններ են:

Մարդիկ միշտ բողոքել են կնոջ այս ստրկական գիրքի դէմ: Նոյնիսկ հին դարերում, բազմակնութեան կողքին, մենք տեսնում ենք միակնութիւն, ամուսնական այս լաւագոյն ձեռք, որով հիմնուում է իսկական ընտանիքը, սրբազան օջախը:

Միակնութիւնը պահանջում է փոխադարձ հաւանումն եթէ ոչ հարսի ու փեսայի, գոնէ նրանց ծնողների մէջ: Յաճախ ծնողները նշանադրում ու ամուսնացնում են իրանց զաւակներին, թէև պսակուողները իսկի իրար տեսած էլ չը լինէին: Այսպէս էր նահապետական ժամանակներում արևելեան ցեղերի մէջ: Այն ինչ հռովմայեցի աղջիկը ինքն էր ընտրում իր փեսացուին, և ծնողները չէին ստիպում նրան ամուսնանալ չը սիրած տղամարդու հետ: Կելտ

օրիորդը նոյնպէս իր ընտրութիւնով էր ամուսնանում:— փեսացուն նա էր լինում, որին մատուցանում էր ըմպելիքը: Մի քանի սեւամորթ ցեղերի մէջ աղջիկն ազատ է գնալ մի քանիօր մի տղամարդու հետ անց կացնել և յետոյ պսակուել նրա հետ և կամ թէ կրկին վերադառնալ հօր տունը, ըստ իր հաճութեան: Այսպիսի փորձերն արգելք չեն լինում այդ աղջկան իր համար ամուսին գտնելու:

Անկարող լինելով աւելի երկար կանգ առնել այստեղ ընտանիքի էվօլիցիայի վրայ, որի մասին մի շարք գիտնականներ հետազօտութիւններ են արած, ես առաջ կը բերեմ Շրեօդէրի կարծիքը այդ կարևոր խնդրի մասին:

Նախնական ընտանիքում սեռական յարաբերութիւնները կատարւում էին ընտանիքի բոլոր անդամների մէջ, առանց խտրութեան, իսկ օտար մարդ ներս չէր ընդունւում: Ընտանիքը կազմում էր մի մարմին, որ անհրաժեշտ էր թէ գազաններից և թէ ուրիշ մարդկային խմբերից պաշտպանուելու համար: Նախնական ընտանիքի մէջ իւրաքանչիւր կին պատկանում էր բոլոր



տղամարդկանց՝ և ընդհակառակը: Չը կար  
ոչ մի հասկացողութիւն արենակցութեան  
մասին և ոչ իսկ մի նշոյլ խանդոտութեան:

Ընտանիքի զարգացման երկրորդ ֆազը  
կազմում է ւարենակցական ընտանիքը, որի  
մէջ սեռական կապ ունին միմիայն առաջին  
սորտի անհատները. — ծնողները, երեխանե-  
րը և եղբօր ու քրոջ զաւակները: Այս ըն-  
տանիքից դուրս էին վճռուում հետագայ  
սերունդները, որոնք հեռանում էին ու կազ-  
մում նոր արենակցական ընտանիքներ: Այս-  
տեղ արդէն հօրն արդելում է մերձենալ  
իր աղջկան, իսկ մօրը — տղային. բայց եղ-  
բայրներն ամուսնանում են քոյրերի հետ,  
եղբօր ու քրոջ զաւակները իրանց հօր ու  
մօր եղբայրների ու քոյրերի հետ:

Յետոյ մի մօրից ծնուած զաւակներին  
նոյնպէս արգելում է միանալ, և չհասու-  
թեան գաղափարը սկիզբն է ստանում: Սա-  
կայն հասարակաց ձեւը պահպանուած է  
մնում, այսինքն քոյրերը, կամ հօրեղբօր,  
մօրաքրոջ, քեռու աղջիկները ընդհանուր  
ամուսին են դառնում մի քանի տղամարդ-  
կանց, միայն սրանց մէջ եղբայրներ չը կան  
այլևս: Նոյնպէս և մի քանի եղբայրներ ա-

մուսնանում են միասին մի քանի կանանց  
հետ, որոնց մէջ իրանց քոյրը չը պէտք է  
լինի:

Այս էր պունալուա կոչուած ընտանիքը:  
Քաղաքակրթութիւնը, հիմնուած բրիս-  
տոնէական մարդասէր ուսմունքի վրայ,  
բարձրացրեց կնոջ դիրքը, ստիպեց, որ  
օրէնքը կնոջն էլ ճանաչէ իբրև իրաւաբա-  
նական անհատ, տալով նրան եթէ ոչ տղա-  
մարդուն հաւասար, գոնէ մի քանի իրա-  
ւունքներ: Այսպիսով նա հանեց կնոջը էգի  
ու գրաստի գրութիւնից: Աւանդ, ոչ ամեն  
տեղ: Մահմեդական, այսպէս ասած, հակա-  
կին ուսմունքը, հակառակ ամենատարրա-  
կան մարդասիրութեան զգացմունքին, Քրիս-  
տոսից 6 դար յետոյ, սրբագործում է կնոջ  
ստրկութիւնը, թոյլատրելով բազմակնու-  
թիւնը:

## II

### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՒԵԼՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ

Ամուսնութեան օգտակարութիւնը առողջապահական  
սեռակէտից.— Պատճառները.— Ազգայների հիւանդու-  
րիւնները.— Ժուժկալութեան վաս հետեւանքները կնոջ  
վրայ.— Ամուրիների ներվային դուրքիւնը.— Հիւսերիա  
եւ խելագարութիւն.— Ընտանեկան կեանքի բարոյա-  
կան կողմը:

Ամուսնական կեանքը մեծ առաւելու-  
թիւններ ունի ազգայութեան վրայ: Բազ-  
մաթիւ հետազոտութիւններ և ամեն երկր-  
ներում ժողոված վիճակագրական տեղեկու-  
թիւններ ակներև են արել այն իրողութիւ-  
նը, թէ ամուսնական կեանքը միայն կարող  
է իսկապէս առողջապահական համարուել,  
թէ ընտանիքի մէջ մարդ աւելի առողջ է  
լինում, աւելի տոկուն, աւելի գործունեայ  
և, որ գլխաւորն է, աւելի երջանիկ:

Այս վիճակագրութիւններն ապացուցել են, որ պսակուածները մէջ աւելի սակաւ են պատահում զանազան հոգեկան հիւանդութիւններ (հիստերիա, խելացնորութիւն), ինքնասպանութիւններ, վերջապէս վաղաժամ մահ, քան ազապներէ։ Ապացուցուած է և այն նշանաւոր ֆակտը, որ այս վերջինների մէջ քրէական յանցաւորների թիւը աւելի մեծ է, քան ամուսնացածների։ Կանայք նոյն չափով են օգտուում ամուսնութիւնից, ինչ որ տղամարդիկ, եթէ միայն ամուսնացել են հասունացած (չափահաս) հասակում։ Այսպէս, նոյն իսկ ծննդաբերական շրջանում (20—45 տարեկան), երբ կանայք ենթարկուած են լինում զանազան ծննդական վտանգալից հիւանդութիւնների, աւելի երկարակեաց են (ի հարկէ միջին թուով), քան նոյն հասակի օրիորդներն ու այրիները։ (Եթէ ազջիկը աւելի մատաղ, դեռահաս տարիքումն է ամուսնանում, բոլորովին հակառակն է նկատուում, ինչպէս կը տեսնենք յետոյ)։ Այսպէս, Եւրոպայի համարեա բոլոր երկրներում ժողոված ստատիստիկան ցոյց է տալիս, որ ամուսնացած թէ տղամարդը և թէ կինը  $1\frac{1}{2}$  մինչև 2 ան-

դամ աւելի երկար են ապրում, քան ամուրիները: Այս թուի մի մասը կազմում են ի հարկէ այն վատառողջներն ու թոյլերը, որոնք անընդունակ են լինում պսակի տակ մտնելու և ազապ են մնում: Այս տարբերութիւնը աւելի ևս մեծ է բարձր հասակներում: Եւ, ճշմարիտ որ, 100 տղամարդուց 60 տարեկանի հասնում են 48 ամուսնացածներ և միայն 22 ազապ: 80 տարեկան հասակ ունեցողների մէջ 9 պսակուածին ընկնում է 3 ազապ միայն:

Նկատենք, որ այրիները աւելի ևս վաղ են մեռնում, քան ազապները:

Ամուսնացածների այս պակասաւոր մահացումն (համեմատելով ամուրիների և մահաւանդ այրիների հետ) բացատրում է այն առողջապահական կեանքով, որ թէ տղամարդի և թէ կնոջ համար ստեղծում է համակեցութիւնը, ընտանիքը:

Ամենից առաջ սեռական յարաբերութիւնները մնում են մաքուր և անվտանգ. այդ ֆիզիքական ակտը կատարւում է շափաւոր կերպով, լաւ առողջապահական պայմանների մէջ, առանց այն յուղմունքների և



վատնգների, որոնց ենթարկուած են ազապ մարդու կամ կնոջ մերձաւորութիւնները:

Ես չեմ խօսում, այսպէս կոչուած, «բարձր դասակարգի», հարուստների «ազապ կեանքի» մասին իր անբուն գիշերներով, իր արբեցնող ու անբարոյականացնող ընթրիքներով և իր բոպէական «սիրով» գընուած (և յաճախ էլ, աւանդ, առողջութեան գնով գնուած) կանանց հետ: Աւելի խղճալի է պանդուխտ բանուոր դասակարգը, որ, թողնելով իր պապերի հողը, կամ առանց հողի մնալով, իսկ, աւելի յաճախ, նաւթային ճառագայթներից կուրացած, գնում է հեռու պանդխտութիւն և այնտեղ վատնու իր առողջութիւնը գինետաների ու պոռնկանոցների մէջ, թունաւորելով իր ամբողջ կամուածքը սպիրտով ու սիֆիլիսով:

Տղամարդիկ գոնէ հնարաւորութիւն ունին բաւարարութիւն տալու իրանց բնակ պահանջներին և նրանք աւելի քիչ են և թարկում այն բազմութիւներվային հաւանգութիւնների, որոնց հիմնաքարը 4 զիբական սիրոյ անբաւականացումն է: Բերանից տղամարդը աւելի զբաղուած լինելով իր պարապմունքներով, ֆիզիքական

մատուր աշխատանքով, ստրուկ չէ դառնում  
իր սեռական հակումներին:

Բազմաթիւ բժիշկներ այն կարծիքն են  
յայտնել, թէ սեռական ժուժկալութիւնը ոչ  
մի վնաս չէ հասցնում մարդու, թէ մինչև  
ամուսնութիւնը պէտք է անարատ մնալ:  
Անտարակոյս ժուժկալութիւնը ոչ միայն  
չի կարող առաջացնել ոչ մի հիւանդութիւն,  
այլ ընդհակառակը ազատ է պահում երի-  
տասարդներին զանազան հիւանդութիւննե-  
րից: Սակայն մեր կարծիքով այդ իրաւացի  
է միայն մինչև որոշ հասակ, քանի որ  
տղայի սեռական գործարանները չեն հա-  
սած իրանց զարգացման վերջնական աս-  
տիճանին: Անկարելի է ենթադրել, որ մի  
շարք կարևորագոյն գործարաններ կարող  
են անգործ մնալ, առանց ազդելու որ և է  
կերպով մարդու ամբողջ կազմուածքի վրայ:  
Տղամարդի վերաբերմամբ այդ կարծիքը  
գուցէ և ճշմարիտ լինի, բայց կնոջ վրայ  
բացառիկ օղջախոհութիւնը չէ կարող առանց  
հետևանքի մնալ: Եւ, իրաւ, կնոջ սեռական  
գործարանները բազկացած են մի շարք  
խոշոր մասերից, որոնցից կարևորագոյնը  
գաւակատունն է. կարելի է վստահ ասել,

որ կինը ամենից առաջ որդեծնութեան համար է ստեղծած: Նրա սեռական գործարանները հասել են չափազանց զարգացման ի վնաս միւս գործարանների, դարձնելով նրան աւելի նուսատ ու թոյլ, քան տղամարդը: Կնոջ արգանդն ու ստինքները կենդրոնացնում են իրանց մէջ նրա, այսպէս ասած, զգայնական կարողութեան մի խոշոր մասը, կարծես նրա ներվերի գլխաւոր կենդրոնացման տեղերը լինեն: Տեսէք, ինչ է դառնում մի յղի կին, որի արգանդը կրում է ապագայ երեխայի սաղմը և որի ծծերը փքուած են կաթի ճնշումից: |

Այսպիսի կարևոր օրգաններ չեն կարող երկար տարիների ընթացքում անգործունեայ մնալ առանց վտանգելու ամբողջ կազմուածքին: Մի շարք ներվային լոանգարումները (գրգռումն կամ ընկճումն) հետևանք են լինում յաճախ հասունացած կնոջ սեռային երկարատև ժուժկալութեան: Ամեն «պառաւած աղջկայ» վրայ նկատում է մի տեսակ յուսահատ յոգնածութիւն առօրեայ հոգսերից, դիւրագրգռութիւն, ներդայնութեան ու հիստերիայի երևոյթներ: Աւելի բարձր աստիճանները կազմում են



անընտրութիւնը, կամ կօշմարներով (սարսափելի երազներով) ու տարփական տեսիլներով լի քուն, յետոյ գալիս են սեռական օրգանների գրգռումները, միաւորութեան անսանձ պահանջը (սանձաժ, սակայն, կամքի ոյժով կամ ամօթխածութիւնից), յափշտակումն այն ամեն բանով, ինչ որ տարփական է, — վերջապէս կատալեպսիա և խելապակտումն։ Այս վերջինը հարիւր ձև է ընդունում, — հասարակ անամօթ շարժումներից ու ցինիկ խօսքերից սկսած մինչև զաղբելի գերզգայնութիւնը, որ ֆրանսիական բժիշկները կնքել են *fureur uterine* (արգանգային կատաղութիւն) անունով։ Միջին դարերում կանանց մենաստանների մէջ անպակաս էին տարփականութեան համաճարակները, — բազմաթիւ աղջիկներ, փակուած միասին, գատապարտուած ստիպողական կուսութեան, սեռական կատաղի գրգռման մէջ տարփական տեսիլներ էին ունենում։ Նրանք պատմում էին, թէ այս ինչ քահանան կամ այն ինչ գարշելի գեղը, մտնում է գիշերները իրանց ննջարանը և սեռական յարաբերութիւններ է ունենում իրանց հետ, կամ թէ իրանք թռչում են գնում Սարբա, գեերի խնջոյքը,

և գիշերները զազրելի օրգիւաների մէջ անցկացնում: Եւ պատմում էին այս բոլորը գարշելի մանրամասնութիւններով, համեմելով վաւաշոտ շարժումներով ու զազրալի հայհոյանքներով, առանց քաշուելու և, որ գլխաւորն է, առանց վախենալու զարհուրելի ինկուիլիցիայից, որ հարիւրներով ու հազարներով ողջ-ողջ այրում էր նրանց այդ գիւականութեան յանցանքի համար \*):

Ազապ մարդը չունենալով սեփական օջախ, «գուրս է գցում իրան» իր ամայի ցուրտ սնից ու դրսում որոնում այն, ինչ որ պակասում է նրան: Անկանոն ու անժամանակեայ անունդ զանազան տրակտիրներում, անկանոն ու անժամանակեայ քնել-զարթնելը խանդարում են ազապի մարսողութիւնը, սրտի ու միւս գործարանների կանոնաւոր գործնունէութիւնը և հարիւր տեսակ հիւանդութիւններ առաջացնում: Միւս կողմից տախտկալից մենակութիւնը, անկեղծ սիրոյ և յարգանքի անշահասէր ինամատարութեան և նոյնիսկ բարեկամութեան բացակայութիւնը, վերջապէս սեռական կեանքի անկանոնու-

\*) Մանրամասնութիւնը տե՛ս իմ «Հիպնոտիամ», II հատ.

7

Թիւնը—այս բոլորը ներվային է դարձնում  
ամուրի մարդուն, և հիասթափեցնում  
կեանքից, կտարելով նրա հոգեկան ոյժերը,  
ակներև անելով սրտի դատարկութիւնն ու  
աշխատանքի տաղնապի աննպատակութիւ-  
նը: Այս ներվային դրութիւնը, այս հիա-  
սթափումն ու անբաւականութիւնը կեանքից  
հասցնում է ամուրի մարդուն կամ ծայրայեղ  
եռամնջութեան կամ ծայրայեղ յուսահատու-  
թեան: Խելագարութիւնը և ինքնասպանու-  
թիւնը աւելի յաճախ են պատահում ազապ-  
ների (մանաւանդ այրիների), քան ամուս-  
նացածների մէջ: Ըստ Բերտիլիօնի, մինչդեռ  
այս վերջիններից հարիւրն են անձնասպա-  
նութիւն գործում, ամուրիներից իրանց սպա-  
նում են 115-ը, իսկ այրիներից 256-ը:  
Նշանաւոր և հասկանալի երևոյթ է այրի  
ինքնասպանների այս ահագին թիւը: Մար-  
տէնի ասելով, խելագարութիւնը համարեա  
երկու անգամ աւելի է ամուրիների մէջ,  
քան պատկուածների: (Պէտք է ի հարկէ  
նկատի ունենալ, որ շատերը հէնց հոգեկան  
հիւանդութիւնների պատճառով չեն ամուս-  
նանում):

Ընտանեկան կեանքը, նպաստելով ամու-

սիննների երկարակեցութեանը, պահպանելով նրանց զանազան հիւանդութիւններից, ներվայնութիւնից, խելագարութիւնից ու յուսահատութիւնից, կազմում է այն բարոյականացնող հնոցը, որի մէջ կռում-կոխում են աւելի տոկուն, աւելի ուժեղ բարոյական սկզբունքներ: Պսակուած մարդը թէ կինը անհամեմատ աւելի բարոյական են, քան ամուրիները, մանաւանդ երբ ամուսիննների կապը ամրապնդուած է զաւակի սրբազան կապով: Այսպէս, ամուսնացածների մէջ յանցանքների թիւը դարձեալ երկու անգամ աւելի քիչ է, քան ազապների: Իսկ յանցաւոր պսակուածների մէջ նկատուած է, որ զաւակատէր ամուսինները աւելի քիչ են յանցանքներ գործում, քան անզաւակները, դոնէ այդ ապացուցուած է մօր վերաբերմամբ: Ուրիշ խօսքով, ամուլ կանանց մէջ աւելի յաճախ են պատահում քրէական յանցաւորներ, քան զաւակ ունեցողների, - զաւակի ներկայութիւնը աւելի բարոյական է դարձնում կնոջ:

Մինչև այժմ մենք, հիմնուելով ժողովրդագրական թուերի վրայ, աշխատեցինք ցոյց տալ ամուսնական կեանքի առաւելու-

Թիւնները: Տեսանք, որ պոսակուած մարդը աւելի առողջ է, աւելի գործի ընդունակ, աւելի բարոյական: Այդ են ամուսնութեան, այսպէս ասած, ֆիզիքական շօշափելի առաւելութիւնները:

Կայ և բարոյական կողմը, որի բարիքները ոչ մի թուանշաններով չի կարելի արտայայտել:

Ամուսնական կեանքը, յետոյ երեխայի ներկայութիւնը ընտանիքի մէջ, ազնուացնող և մարդու մէջ ամեն մի լաւ զգացմունքը զարգացնող խթաններ են:

Մարդու գործունէութիւնը բղխում է երկու աղբիւրից—մտաւոր և զգացողական. ուրիշ խօսքով, նա գործում է կամ մի որ և է գաղափարի, կամ որ և է հոգեկան տրամադրութեան տակ (կիրք, սէր, ատելութիւն, մոլութիւն և այլն): Ընտանեկան կեանքը մի մեծ զարկ է տալիս այս երկու ձևի գործողութիւններին:

Ամենից առաջ նկատուում է էներգիայի, գործելու ոյժի աւելանումն, — ինչպէս նկատում է Սպենսէրը:

Մարդը թէ կիներ ամուսնանալով մի մեծ պատասխանատուութիւն են յանձն առ-

նում: Ոչ միայն նրանք պիտի օգնեն ու ուղեկցեն միմեանց կեանքի փշալից ուղիով, այլ պէտք է հոգս տանեն նոր սերնդի բարօրութեան և երջանկութեան մասին: Եւ նրանց համար ոչ մի աշխատանք ծանր ու ճանճրալի չէ թւում մինչ այն աստիճան, որ իր սիրած էակներին աւելի երջանկութիւն տալու համար մարդն աւելի է աշխատում, քան թոյլ կը տային նրա ոյժերը և ընկնում է չափազանցման մէջ, ի վրաս իր սեփական առողջութեան:

«Ոչինչ աւելի ընդունակ չէ մեղմացնելու մարդուն, ազնուացնելու նրա բնաւորութիւնը, ներշնչելու նրան առողջ ու բարձր գաղափարներ, քան մի էակի հետ ապրելը, որին սիրում է, որից կը ցանկանար յարգուած ու սիրուած լինել» (Մարտէն):

Ամուսնական կեանքը մեղմացնում է կրքերը, յափշտակումները, մոլութիւնները: «Կը սպակուի, կը դրստուի», ասում է Ժողովրդական փորձնականութիւնը: Ով չէ ճանաչում կրքոտ, կատաղի, անսանձ, նոյն իսկ անբարոյական երիտասարդների, որոնք մտնելով ամուսնական քաղցր լծի տակ, ուղղում են, լրջանում, յաճախ ազնուանում,

Նրբազգաց դառնում, կորցնում են իրանց ազեղ սովորութիւնները, խօսակցութեան ձևերը և օրինակելի «ընտանիքի դուլխ» դառնում:

Յամենայն դէպս, ժամանակի ընթացքում, փոխադարձ ազդեցութեան տակ, երկու ամուսինները համակերպւում են միմեանց հայեացքներով, ձգտումներով, իդէալներով: Նրանք ոգևորւում են, յուզւում, զայրանում միեւնոյն երևոյթներով: Այս միակերպումն կատարւում է նմանողութեան կամ ընդօրինակման մեծ ոյժով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հիպնոսումն, ներշնչումն \*): Եւ բանի որ հոգեկան շարժումները արտայայտւում են մեծ մասամբ դէմքի վրայ, այստեղից հասկանալի է լինում և այն, առերես տարօրինակ, երեւոյթը, որ ամուսինները վերջ ի վերջոյ սկսում են զարմանալի կերպով նմանուել իրար թէ՛ շարժումներով, թէ՛ խօսակցութեան ձևով և թէ՛ նոյն իսկ դէմքի գծագրութիւններով:

Ամուսնութիւնը մի մեծ բարիք է, նա մի ճանապարհ է, որ աւելի հեշտ և աւելի

\*) Տե՛ս իմ «Հիպնոտիսմ»:

հաստատ կերպով տանում է մեզ դէպի երջանկութիւն, եթէ երջանկութիւնը գոյութիւն ունի մեր ազմկալից դարում: Փրանսիական մի տաղանդաւոր գրող, Գիւստաւ Գրոզ, հասնում է մինչև անգամ այն եզրակացութեան, թէ ամուսնութիւնից դուրս չը կայ երջանկութիւն: «Ես չեմ հաւատում, որ ազապ մարդը կարողանայ երջանիկ լինել», ասում է նա: «Չկայ երջանկութիւն նրանց համար, որոնք մոլորուած լինելով, կամ մի որ և է հաշուով, խուսափել են հասարակական այս լաւագոյն օրէնքից»: Թողնենք չափազանցութիւնները: Մարդու կեանքի հորիզոնը կարող է մի ուրիշ աստղ ևս լուսաւորել, բայց և այնպէս մի մեծ պակասութիւն է կեանքի մէջ գրկուած լինել սեփական կին և հարազատ որդի ունենալու երջանկութիւնից...



### III

#### ԱՄՈՒՄՆԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՍԱԿԸ

Սեռական հասունութիւն.—Սմուսնական հասակը.—  
Վաղաժամ ամուսնութիւն.—Դաճանն ու սեռական  
հասունութիւնը.—Վաղաժամ ամուսնութեան վտանգ-  
ները քէ՛ ամուսինների եւ քէ՛ զաւակների համար.—  
Տարաժամ ամուսնութիւնը եւ նրա վտանգները.—Սն-  
հաւասար ամուսնութիւնը եւ նրա հետեւանմանքը:

—

Պսակուողների հասակի տեսակէտից ամուսնութիւնը երեք տեսակ է լինում. վաղաժամ ամուսնութիւն, երբ տղամարդը 21 տարեկանից, իսկ կինը 18 տարեկանից պակաս են. յարմար (ժամանակեայ) ամ., երբ տղամարդը 45 տ. մեծ չէ, իսկ կինը 30-ից. վերջապէս տարաժամ (ուշացած) ամ., երբ տղամարդը 45—60 տարեկան է և աւելի, իսկ կինը 30—45 տ. և աւելի:

Վաղաժամ ամուսնութիւն:

Ամուսնութիւնը, առողջապահական տես-

սակէտից, թոյլատրելի է այն ժամանակ միայն, երբ տղան ու աղջիկը հասունացած են. ուրիշ խօսքով՝ երբ նրանց սեռական գործարանները բաւականաչափ զարգացած են ամուսնական վտանգալից կեանքին դիմադրելու համար:

Այս է սեռական հասունութիւնը:

Այս պահանջը աւելի ևս ստիպողական է աղջկայ համար, որին վիճակուած է կրել իր վրայ ծննդաբերութեան ամբողջ ծանրութիւնը:

Զանազան երկրների օրէնսդրութիւնները, մանաւանդ անցեալում, մի անբացատրելի անհօգութեամբ անուշադիր են եղել գէպի ամուսնացողների ֆիզիքական հասունութիւնը և թոյլ են տուել ամուսնանալու նոյնիսկ երեխաների:

Անձանօթ լինելով սեռական գործարանների զարգացման կանոններին, նրանք հետևում էին կարծես ժողովրդի անմիա համոզմունքին, թէ «աղջկան փափախով խըփիր, եթէ վայր չը ընկնի, պսակիր»:

Այսպէս, հին հրէական օրէնքով տղան չափահաս էր դառնում 13 տարեկան և 1 օրական, իսկ աղջիկը 12 տարեկան և 1 օրա-

կան հասակում. սակայն աւելի մատաղ հասակումն էլ չէր արգելւում ամուսնանալ, բայց ոչ մի կերպով չէ կարելի պսակել տղային 9 տ. և 1 օրականից պակաս, իսկ աղջիկներին — 8 տ. և 1 օրականից: Հնդկաստանում 8 տարեկան աղջիկներին կարելի է մարդու տալ: Հռոմում ամուսնական չափահասութիւնը սահմանուած էր այսպէս. 14 տ. տղաների և 12 տ. աղջիկների համար: Նոյն հասակը սահմանել է և արեւմրտեան. եկեղեցին, իսկ բողոքականը երկուսեւի համար ևս 14 տ.:

Անգլիական պետական օրէնքը թոյլ է տալիս պսակուել տղաներին 14 և աղջիկներին 12 տ. հասակում: խստէն արգելւում է եօթ տարեկանների պակաս միայն: Պրանսիական օրէնսդրութիւնը ամուսնական հասունութիւնը որոշել է 18 տ. տղամարդկանց, 15 տ. աղջիկների համար: Գերմանիայում պաշտօնապէս արգելւում է ամուսնութիւնը 18 (տղայ) և 16 (աղջիկ) տարեկաններից պակաս հասակներում:

Ռուս պետական օրէնքով (1830 թ. Բարձրագոյն Ուկադը) ընդունուած է գերմանական չափահասութիւնը: Այս ընդհա-

նուր օրէնքից թոյլ են տրուում հետեւեալ բացառութիւնները. ա) Կովկասաբնակ ազգութիւնների համար ամուսնական հասակը սրոշուած է 15 (տղայ) և 13 (աղջիկ) տարին: բ) Թոյլ է տրուում թեմական առաջնորդներին կարևոր գէսքերում կէս տարով աւելի վաղ պսակել:

Մեր եկեղեցական կանոնները, եթէ չեմ սխալուում, թոյլ են տալիս ամուսնութիւնը 14 և 12 տարեկանների մէջ և ոչ աւելի վաղըրերի:

Այսպէս ուրեմն, նոյն իսկ նորագոյն օրէնսդրութեան տրամաբանութեամբ ամուսնանալու և սերունդ արտադրելու ընդունակ են համարուում 13—12 տ. տղան ու աղջիկը, որոնք հազիւ են դուրս եկել մանկութիւնից թէ իրանց ֆիզիքական զարգացմամբ և թէ մտաւոր կարողութեամբ, իսկ շատերն իրանց կազմուածքով և խելքով դեռ կատարեալ երեխաներ են...

Օրէնսդրութեան անհետեւութիւնն ակներև է: Մի երեխայի, որին ընդունակ չէ համարում ձայն ունենալ հասարակական ու քաղաքական խնդիրներում և որ զըրկուած է ամենաչնչին քաղաքական իրա-

ւունքներից անգամ, այդ անչափահասին նա հաւատում է մի ամբողջ սերնդի բարօրութիւնը, առողջութիւնը, նոյն իսկ կեանքը!..

Այսպիսի օրէնսդրութեան շնորհիւ է, որ վաղաժամ ամուսնութիւնը տարածուած է եղել և է նոյն իսկ ասենաքաղաքակիրթ երկրներում: Անգլիայում բոլոր ամուսնութիւններից 51% վաղաժամ է (տղամարդու համար), Ֆրանսիայում 27%, Իտալիայում 26%, Շվեյցիայում 23%, Բաւարիայում 19%: Ամենից բարձր տոկոսը տալիս է Ռուսաստանը, որտեղ անչափահաս ամուսնացող տղամարդիկ կազմում են 67%, իսկ կանայք մինչև 85%! Այս նշանակում է, որ Ռուսաստանում 100 մարդու գնացող աղջիկներից 85-ը դեռահաս են: Քաղաքներում դեռահաս տղաների պսակները գնալով պակասում են, և այդ հասկանալի է, քանի որ քաղաքներում տղամարդը աւելի ուշ է կարողանում իր համար մի դիրք ստեղծել և աշխատանք գտնել, քան գիւղում:

Առողջապահական տեսակէտից տղամարդը կարող է ամուսնանալ ո՛չ աւելի վաղ, քան 22—25 տարեկան (նայելով կազմուած-

քին), իսկ կինը 18—20 տարեկան հասակում միայն:

Ահա ընդհանուր կանոնը:

Նա հիմնուած է այն ֆակտի վրայ, որ այս հասակներում մրայն թէ՛ տղամարդու և թէ՛ աղջկայ սեռական գործարանները իրանց կատարեալ զարգացմանն են հասնում, և ընդունակ են դառնում ծառայելու զաւակածնութեան գժուարին ու վտանգալից գործին, առանց ընդհանուր կազմուածքին վնասելու:

Յիշած հասակում միայն (ի հարկէ մենք չենք խօսում այստեղ բացառութիւնների մասին) կնոջ զաւակատունը ուժեղացած է ու մեծացած, նրա ձուարանները զարգացած, ծծերը ամրացած, խոշորացած ու կտրացած (իսկապէս ծծերի միջի կաթնագեղձերը) և ընդունակ են դառած կաթ արտադրելու: Միևնոյն ժամանակ աղջիկն սկսում է գիրանալ, նրա կոնքը լայնանում է, քայլուածքը ծանրանում և առհասարակ բոլոր շարժուածքներն ընդունում են մի ինչ որ ծանրութիւն ու լրջութիւն:

Աղջիկների վաղաժամ ամուսնացումն,

երևի, մասամբ հիմնուած է այն սխալի վրայ, որով դաշտանի երևալը համարուած է սեռական կատարեալ հասութեան նշան: Սակայն ինչ է ապացոյցանում աղջկայ «լուսին տեսնելը», — այն ամիսայն, որ նրա ձուարանները արդէն ընդունակ են ձուիկներ արտադրելու և ուրիշ ոչինչ: Բայց այդ դեռ չէ նշանակուած, թէ նրա ձուիկները կարող են կանոնաւոր կերպով բեղմնաւորուել, չէ նշանակուած, թէ զաւակատունը պատրաստ է սաղմն ընդունելու և ապագայ երեխային տեղ տալու, այդ դեռ ապացոյց չէ, թէ նրա ամբողջ կազմուածքը, արիւնը, սիրտը, թոքը և այլն, բաւականաչափ զարգացած է սաղմին ինն ամիս սնուցանելու, աճեցնելու և կենդանի ու առողջ երեխայ արտադրելու:

«Նոր լուսին տեսած աղջիկը, դեռ բարորովին պատրաստ չէ ամուսնական կեանքի համար: Թիզիօլօգիական տեսակէտից անհրաժեշտ է, որ դաշտանը բացուելուց դոնէ երկու տարի անցած լինի» (Քիրքլինգ): Այն ինչ, նոյն հեղինակի բերած վիճակագրութիւնից երեւում է, որ միջին կլիմաներում դաշտանը բացուում է շուրջ 15 տ. հասակում (Բերլին, Լօնդօն, Պարիզ, Վիեննա,

Վարչաւա), հիւսիսում 16, նոյն իսկ 18 տարում (Կօպենհագէն, Շվեցիա, Լապլանդիա), իսկ շոք երկրներում (Կալկուտտա, Եգիպտոս) 12, նոյն իսկ 10 տարեկան երեխաներն արդէն տեսնում են: Աւելորդ է ասել, որ բոլոր աղջիկները մի տեսակ չեն կազմուած և մի կերպ չեն զարգացած: Մէկը 15 տ. հասակում արդէն բոլորովին կազմակերպուած է, մի ուրիշը 20 տարեկան դառած դեռ երեխայ է:

Ընդհանուր կարծիքով գիւղացի աղջիկները, աւելի ազատ կենցաղ ունենալով և ազատ լինելով քաղաքի վնասակար մթնոլորտից, ուսման ճնշող ազդեցութիւնից, աւելի շուտ են զարգանում ֆիզիկքապէս, քան քաղաքացիները, թէև սրանց մէջ աւելի վաղ է արթնանում սեռական կիրքը: Յետոյ պէտք է գիտենալ, որ Արևմտեան երկրներում աղջիկները աւելի վաղ են կազմուած, քան Հիւսիսում:

Բացի ֆիզիքական զարգացումից, ամուսնացողներից պահանջուած է որոշ չափով մտաւոր զարգացումն: Օրիորդը պիտի ժամանակ ու միջոց ունենայ ծանօթանալու կեանքի պահանջներին, հաշիւ տալու իրան



սեփական յակումների և իգէալների մէջ, որպէս զի կարող լինի գիտակցօրէն վերաբերուել դէպի ամուսնութեան ծանր խընդիրը: Շատ օրիորդներ օրիորդ չեն եղած. դպրոցի նստարանից նրանք ուղղակի ընկել են մի օտար մարդու գիրկէ: Սրանք գեամանուկներ էին, զուրկ փորձնականութիւնից, զարգացումից, զուրկ աշխարհահայեցողութիւնից, անփոյթ երեխաներ, որոնք ոչ մի բոպէ չէին սպրել անկախ կեանքով և ոչ մի ինքնուրոյն քայլ չէին արած: Եւ յանկարծ բաց են անում սրանք իրանց շուարած աչքերը և սարսափում այն ահագին պատասխանատուութեան առաջ, որ ըստանձնել են անգիտակցաբար, կամ աւելի ճիշտն ասած, որ ուրիշները կապել են նրանց վզին:

«Շատ օրիորդների պսակը ես կը յետաձգէի մինչև 24—25 տարեկան հասակը», ասում է Բիրբինգը:

Մի քանի խօսք վաղաժամ պսակների ֆնասակարութեան մասին:

Թէ՛ տղամարդի և թէ՛ կնոջ համար վաղաժամ ամուսնութիւնը ֆնասակար է:

Ամենից առաջ պատանի ամուսինները ֆնասուում են իրանց սեռական յարաբերու-

Թիւնների չափազանցումով, որովհետև նրանց սեռական գործարանները անընդունակ են գիմնադրելու չափազանց գործունէութեան: Հետեանքը յաճախ ակներև է դառնում: Տղամարդը հասնում է վաղաժամ յոգնութեան, ընդհանուր թուլութեան: Նրա տուկունութիւնն ու աշխոյժը թուլանում են, և առաջ են գալիս մի շարք ներվային դրութիւններ: Կնոջ վրայ նկատում է սեռական գործարանների անկանոն գործունէութիւն, չբերութիւն (գոնէ առաջին երկու տարիներում), կամ վիժումն, իսկ յղութիւնն ու ծննդաբերութիւնը ուղղակի վտանգալից են լինում:

Բայց միայն ծնողները չեն, որ տուժում են վաղաժամ ամուսնութեան համար. — նրանց երեխաներն էլ պատժւում են ծնողների անզգուշութեան պատճառով:

Գեռահաս ամուսինների սերունդը (բաւական է, որ ամուսիններից մէկը գեռահաս լինի) չէ հասնում յաճախ ֆիզիքական և մտաւոր զարգացման ցանկալի աստիճանի: — Շատ երեխաներ մեռնում են հէնց առաջին տարում: Աւելի ևս վտանգաւոր են գեռահաս պսակները, երբ նրանք կրկնում

են որդոց-որդի, այսինքն երբ մատաղ հասակում ամուսնացած մայրը իր աղջկան էլ վաղահաս է մարդու տալիս: Մի քանի հեղինակութիւններից երևում է, որ պատանեկան հասակում ամուսնացած տղաները 7 անգամ աւելի են մեռնում, քան նոյն հասակի ամուրիները, և 19 տարեկան հասակում նրանք այնքան են մահանում, որքան 70 տարեկանները, որոնք ամուսնացած են եղել չափահաս: Կանայք նոյնպէս աւելի են մեռնում դեռահաս ամուսնութեան մէջ, քան նոյն հասակի օրիորդները: Այսպէս 15—20 տարեկան հասակում սրահուած կանայք Յրանսիայում ու Բելգիայում մեռնում են 1 $\frac{1}{2}$  անգամ աւելի, քան նոյն հասակի օրիորդները, իսկ Հոլլանդիայում նոյն իսկ 2 անգամից էլ աւելի:

Տարածամ ամուսնութիւն:

Ոչ պակաս փեսասարեր է նաև ուշացած կամ տարածամ ամուսնութիւնը, երբ տղամարդը 45 տարեկանից բարձր է, իսկ կինը 30-ից:

Որոշ հասակից տղամարդի և կնոջ սեռական գործարանները կորցնում են իրանց թարմութիւնն ու ոյժը: Պր. Գիւպլէն

ցոյց տուեց, որ 51 ծերունիներէց (60—86 տ.) միայն 6-ը դեռ ընդունակ էին արտադրել բեղմնաւորող հեղուկ, իսկ մնացածի սեռական կենսունակութիւնը կամ բոլորովին կորած էր, կամ չափազանց թոյլ։ Յայտնի չէ, թէ յիշած վեց ծերունիներէց արտադրած սերունդը ինչ կը լինէր։ Այս հասակներում տղամարդու կազմուածքն սկսում է կորցնել իր էներգիան, իր կենսական ոյժը և սկսում է նրա բոլոր ֆունկցիաների նուազումն։ Գուցէ ամենից վաղ այդ նուազումն արտայայտւում է սեռական օրգանների վրայ, որոնք անընդունակ են դառնում արտադրելու լաւ կազմակերպուած, ֆիզիքապէս ու մտաւորապէս առողջ սերունդ։

Վերջապէս չկայ ծերունու մէջ այլևս բուն յակումն դէպի կինը, այն առողջ ֆիզիքական ձգտողական ոյժը, որ ստիպում է երիտասարդին մօտենալ կնոջ, և ոչ էլ դիմացկութիւն սիրահարական յարաբերութիւնների մէջ։ Իսկ եթէ նկատւում էլ է որ և է այդպիսի ձգտումներ, նրանք ընդունում են վաւաշոտութեան կերպարանք և

անդորացած, կիսաթառամած կրքի վերջին բռնկումն են դառնում:

Կնոջ համար տարածամ ամուսնութիւնը նոյն վնասներն ունի. 40—45 տարում յղիացած կանայք շատ դժուարութեամբ են տանում իրանց յղութիւնը և աւելի ևս դժուար է լինում նրանց ծննդաբերութիւնը, որովհետև նրանց սեռական խողովակը, որի մէջ պիտի զարգանայ և որի միջով պիտի անցնի երեխան, կորցրած են իրանց առաձգականութիւնն ու կծկման ոյժը: Այսպիսիների երկունքը ծանր է լինում և յաճախ պահանջում է միջամտութիւն: Վիճակազրութեան ասելով, 100 կանանցից, որոնք մեռնում են ծննդաբերութեան միջոցին, 35-ը միայն երիտասարդ հասակումն են մեռնում; իսկ մնացած 65 կանայք տարածամ ամուսնացածներն են:

Անհաւասար ամուսնութիւն: Ամենից զազրելին, ամենից հակառողջական և անբարոյական ամուսնութիւնը անհաւասար պսակն է, երբ պսակուողների հասակների մէջ մեծ տարբերութիւն կայ:

Յաճախ կարգում ենք լրագրներում բողոքներ այսպիսի անբարոյական ամուսնու-

Թիւնների դէմ, բայց դարձեալ 50—60 տ. ծերերը չեն քաշուում մի 15 տարեկան երեխայ իրանց կին ուղելու, իսկ այս երեխայի ծնողները չեն սարսափում իրանց աղջիկը այդպիսի ծերերին ծախելու: Այդ մի առուտուր է և զագրելի առուտուր, որի դէմ բողոքում է տարրական բարոյականութիւնը: Հարուստ ծերութիւնը գնում է աղքատ երիտասարդութիւնը, որովհետև ոչ մի ծերունի չի կարող ենթադրել, որ ջահէլ աղջիկը կարող է սիրել իրան: Նա պիտի հասկանայ, որ չի կարելի կապել անցեալը ապագայի հետ. իսկ անցեալն ինքն է, որ կանգնած է գերեզմանի եզրին, ինքն է, որ չորացած ծառի է նման, իսկ ապագան — այն նորաբողբոջ, դեռ չը բացուած կոկոնն է, որ նա անխնայ պոկում է իր կոշտացած ձեռով և թառամեցնում իր գարշահոտ շնչով...

Իսկ աղիջիկը... Եթէ նա գիտենար, թէ ինչ է զոհ բերում իր ճոխասիրութեանը, հարուստ ծերունու կիներ դառնալով: Առաջին համըրոյրը քաղում են չը սիրած, երբեմն նրան զղուելի չրթունքները, առաջին գգուանքը նա ստանում է սառը, տախտա-

կացած կրճքի վրայ: Նա տալիս է այդ չը սիրած օտարին իր կուսական քնքոյշ թարմութիւնը, տալիս է յաճախ զզուանքով, առանց ոգեկան յակման, առանց սիրային կրքի, նոյն իսկ առանց ֆիզիքական զուարճութեան:

Նրա միակ մխիթարութիւնը նրա զաւակները պիտի լինին, այն զաւակները, որոնք յղացած են առանց սիրոյ և ծնած առանց յոյսի...

Այն, այն սէրը, որ նա չի կարողացել տալ իր ամուսնուն, կը դարձնի իր մանկիկի վրայ: Այդ էակին կը նուիրի իր բոլոր հոգեկան ոյժերը, կը կրթի, կը մեծացնի, կը փչի նրա մէջ իր գոյութեան ամբողջ ոյժը և այդ կը լինի նրա մխիթարութիւնը: Բայց, աւանդ, այդ ամուսնութիւնից սերուած երեխաները փոխանակ սփոփելու իրանց մօր վշտերը, նոր ցաւերի ազբիւր են դառնում նրա համար: Նոր սերունդը թոյլ է և նուազ կազմուածքով, թոյլ են նրա հոգեկան ոյժերը, թոյլ է նրա մտաւոր ու ֆիզիքական կենսունակութիւնը: Խեղճ կնոջ սիրտը խոցում է ամեն անգամ, երբ աչք գցում է իր վատա-

առողջ, արնապակաս, խուլախտոտ, արատա-  
ւոր կազմուածքի տէր պերունդի վրայ, որից  
մէկը կամ մի քանիսը դատապարտուած են  
վաղաժամ վախճանի!

Այսպէս, դատապարտելի են թէ՛ վա-  
ղաժամ և թէ՛ տարաժամ ամուսնութիւն-  
ները, աւելի ևս յանցաւոր են անհաւասար  
պսակները: Այս բոլոր պսակների մէջ տու-  
ժում են ոչ միայն ամուսնացողները, այլ  
և նրանց սերունդը:

Բնական և իսկապէս առողջապահական  
ամուսնութիւնը պահանջում է՝ 1) որ տղա-  
մարդը լինի ոչ պակաս քան 22 տարեկան  
և ոչ աւելի քան 30 տ.: (Սառը երկրնե-  
րում, որտեղ մարդիկ աւելի ուշ են զարգա-  
նում ֆիզիքապէս, պահանջում է, որ ամուսնացողները 2—3 տարով աւելի մեծ  
լինին): 2) որ ամուսինների հասակի մէջ  
տարբերութիւնը 7 տարուց աւելի չը լինի:

Յանկալի է, որ առողջապահութեան  
այս հիմնական պահանջը մտցուէր եկեղե-  
ցական և քաղաքական օրէնսդրութեան մէջ,  
և այն ժամանակ մարդկութիւնը այլևս չէր  
արտադրի այն վատոյժ, ներվային, անըն-



գունակ և ծոյլ էակներից գոնէ շատերին,  
որոնք ամեն երկրներում և ամեն ժամանակ-  
ներում մի բեռն են դարձած հասարակու-  
թեան վրին:

## IV

### ՉՀԱՍ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Զհասութեան գաղափարը հին ու նոր ազգերի մէջ.— Մահամեղէն ու Մովսէսը.— Արեւմտեան եւ արեւելեան եկեղեցական ժողովների որոշումները ազգացական ամուսնութեան վերաբերմամբ.— Հայոց եկեղեցու սահմանած կանոնները.— Ի՛նչ հիմունք ունէր արեւակցական ամուսնութեան արգելումն.— Հենրի օւաձ բացատրութիւնները.— Քարոյական հիմունքը.— Արեւակցական ամուսնութեան ազդեցութիւնը քլ' ամուսինների եւ քլ' սերնդի վրայ.— Մրան վերագրած հիւանդութիւնները (խուլ-համբուժիւն, ներվալիւն հիանդութ., խելագարութ., վատասեռումն եւ ուրիշ.) Դորագոյն գիտական հայեացքները եւ ժառանգականութեան խաղացած դերը արեւակցական ամուսնութեան մէջ:

*Հետեւելով ամուսնութեան ինստիտուտի (հիմնարկութեան) զարգացման, մենք տեսնում ենք, որ արեւակցութիւնը հին դարերում արդեւք չէր լինում ամուսնութեան և որ չհասութեան գաղափարը քա-*

ղաքակրթութեան արդիւնք է, ինչպէս և շատ բարոյական սկզբունքներ:

Հին ազգերի մէջ ամենամօտիկ ազգականներն անգամ ազատ ամուսնանում էին իրար հետ (եթէ միայն այսպիսի կապերին կարելի է ամուսնութիւն անուն տալ). հայրը դստեր, մայրը որդու, եղբայրը քրոջ՝ Այս ձևի կապերը առօրեայ երևոյթներ էին հին պարսիկների, մեգացիների, հնդիկների, եթովպացիների մէջ (Persae, Midi, Indi, et Ethio- pes cum matribus et magis filiabus et nuptibus copulantus. St. Jerôme):

Պարսիկները մինչև անգամ աւելի մեծ յարգանքով էին վերաբերում գէպի մերձաւորագոյն միութիւնները և համարեա սրբացնում էին նրանց պտուղը: Փիւնեկեցիք պսակւում էին իրանց քրոջ հետ: Սկիւթացին կարող էր իր աղջկան կին վերցնել: Նոյնպէս և հօները: Հին գերմանացիք, գաւնիացիք ամուսնանում էին իրանց քրոջ հետ: Նոյնը անգլի ունէր և Եգիպտոսում, որոնց աստուածը (Օզիրիսը) ամուսնացած էր իր քոյր Իզիսի հետ և Կլէօպատրան եղբոր ու քրոջ զաւակ էր: Արաբները առաջներում միաւորւում էին իրանց մօր հետ ևս, բայց Մահամ

մէղը խիստ արգելք դրեց: «Մի ամուսնացէք այն կանանց հետ, որոնք ձեր հօր կիներն են եղած, այդ յանցանք է», ասում է զուրանը, և յետոյ աւելացնում է. «Արգելում է ձեզ պսակուել ձեր աղջիկների, քոյրերի, հօր ու մօրաքոյրերի, եղբօր ու քրոջ աղջիկների, ձեր ծծմայրերի, ձեր կաթնաքոյրերի, ձեր տատերի (!), ձեր կնոջ աղջիկների, որոնք ձեր հոգատարութեան ներքոյ են գտնուում»: Մովսէսը նշում է այն մարդուն, որ «կըքնի իր քրոջ, իր հօր կամ մօր աղջկայ հետ» (խորթութիւն), այսպիսիներին պատուիրում է հրապարակաւ սպանել: Մովսիսական օրէնքով (որ այսօր էլ ոյժ ունի հրէաների մէջ) թոյլ չէր տրուում ամուսնանալ առաջին երեք աստիճաններում միայն, իսկ չորրորդ աստիճանի ազգականների պսակը վաւերական էր համարուում (երկու եղբայրների կամ երկու քոյրերի զաւակների մէջ):

Խստօրէն պատժուում էր մծղնէութիւնը (արնախառնութիւնը) նոյնպէս և Մերսիկայում, աւստրալիական ցեղերի մէջ, Հաիտի կղզում: Չինաստանում օրէնսդրու-

թիւնն արգելում է պսակը նոյն իսկ ամենահեռաւոր ազգականների մէջ:

Քաղաքակիրթ ազգերի մէջ չհասութեան գաղափարը համարեա ամեն տեղ նոյնն է եղել:

Հռոմնւմ համակեցութիւնը եղբօր կամ քրոջ ազջկայ հետ արնախառնութիւն էր համարւում (incestus). Հռոմէական կայսրերից երկուսը (Կլաւդիոս և Անտօնիոս) փոխեցին այս օրէնքը և ամուսնացան իրանց եղբօր դստեր հետ: Սակայն օրէնքը վերականգնուեց: Կոնստանդին կայսրը այդպիսի ամուսնութեան համար մահի էր դատապարտում: Թէոդոս Մեծը նոյնպէս մահացույանցանք էր համարում մինչև անգամ երկու քոյրերի ու եղբայրների զաւակների (germani — двоюродные) միաւորութիւնը (4-րդ պորտ\*): Յուստիանոս թոյլատրեց այս պսակները, իսկ 615-ին Պարթիզում գումարած կրօնական ժողովը նզովեց այս աստիճաններում

\*) Պորտ համարում է ծնունդը: Պորտը հաշուելու համար պէտք է բարձրանալ վեր մինչև նախահայրը (որ հաշուի մէջ չէ մտնում) և իջնել միւս գծով (կողմնադիժ ազգակցութիւն): Օրին. հօրեղբօր թոռները կազմում են 6 պորտ:

սահմանած ամուսնական կապերը, 715-ինը աւելի ևս հեռու գնաց ու արգելեց յիշած ազգականների զաւակների պսակը ևս (6-դ պորտ), յետոյ Գուղիի ժողովը (874 թ.) արգելքը տարածեց աւելի հեռու (7-դ աստիճան): Հռոմէական կանոնները գնալով խստանում են և չհասութիւնը տարածւում է 14-դ պորտի վրայ:

Այս խստագոյն կանոնները (որոնք կրօնական ժողովներից դուրս գալով մտել էին աշխարհական օրէնսդրութիւնների մէջ համարեա ամբողջ Եւրոպայում) ամեն կողմից բողոքներ յարուցեցին, և լուտերական ժողովը 1215-ին ստիպուած եղաւ մեղմացնել նրանց ու հասցնել 8-դ պորտի, իսկ ստիպողական գէպքերում թոյլ տուեց և ժրխատումներ (dispensatio):

Արևելեան եկեղեցու կանոնները շատ չեն տարբերւում հռոմէականից:

Լուտերականների և բողոքականների եկեղեցական կանոնների մէջ չհասութեան աստիճանները աւելի սահմանափակ են: Ամուսնութիւնը չէ արգելւում բրոջ ու եղբոր զաւակների մէջ (4-դ աստիճան), և նոյն իսկ դժուար չէ լինում թոյլտուութիւն ստա-

նալ եղբօր կամ քրոջ զաւակի հետ պսա-  
կուելու համար (Յ-դ. պորտ):

Ռուսաց եկեղեցին, որ ընդունել էր  
արեւմտեան կանոնները, գնալով նոյնպէս  
մեղմացրեց արեւակիցների ամուսնութեան  
դէմ՝ յարուցած արգելքները ու այսօր նա  
թոյլ է տրուում 5-դ պորտում:

Մեզ համար աւելի հետաքրքրական է  
լուսաւորչական եկեղեցու սահմանած կա-  
նոնները: Դժբախտաբար նրանք չափազանց  
խառնաշփոթ են մինչև նոր դարերը: Մինչև  
հինգերորդ դարը ոչ մի որոշ կանոն չը կար  
չհասութեան մասին: Մեծն Ներսէս 365  
թուականին գումարում է յայտնի Աշտիշատի  
ժողովը, որի որոշումների մասին ենթա-  
գրութիւններ միայն կան: Սակայն Արիստա-  
կէս եպ. Սեդրակեանի ասելով, «այդ ժողո-  
վում արգելուած պիտի լինի նախ արեւակ-  
ցական չորրորդ աստիճանի ամուսնութիւնը.  
այլապէս բացատրել չի կարելի ժողովի կա-  
նոնագրութեան շարժառիթը, երկրորդ — ամ-  
ուսնութիւնը եղբօր կնոջ, որդու կնոջ, եղ-  
բօր որդու կնոջ և հօրեղբօր կնոջ հետ» \*):

\*) Ա. ր. եպ. Սեդրակեան, «Մամուսնական կնիքներ»:

Այս արգելումն ցոյց է տալիս, որ այս ձևի պատկներ կատարուելիս են եղել հայերի մէջ, երևի շահասիրական նպատակով (օր. իրանց տոհմական ժառանգութիւնները չբ կորցնելու համար), իսկ Խօրենացու խօսքերը, թէ «վասն ազահելոյ սեպհական ազատութիւնը», ենթադրել է տալիս, թէ այդ կանոնը ուղղուած է եղել ազատներին (իշխաններին) սանձելու նպատակով:

Սակայն, չը նայելով Աշտիշատի ժողովի այս որոշմանը, որ վերաբերում էր անխտիր «ազատաց և ոչ-ազատաց», մերձաւորների պատկները իշխանական տների մէջ չեն վերանում, այնպէս որ դեռ 8-րդ դարում Պարտաւի ժողովը հարկ է համարում յատկապէս մատնացոյց անել ազատներին, «զի անխտիր խառնին ընդ իւրեանց մերձաւորն անկարգ ամուսնութեամբ \*)»: Եւ ժողովը դիմում է աւելի խիստ միջոցի այդ արնախառնութեանը վերջ տալու համար, այն է —նզովքի:

Ինչպէս երևում է, հայերի մէջ ևս հեթանոսական, գուցէ և առաջին քրիստոնէա-

\*) Տե՛ս Վ. վ. Բաստամեան, «Յմուսնութիւն», «Փորձ» 1880 և 1881.



կան դարերում տեղի էին ունենում արե-  
նախառնական ամուսնութիւններ: Այսպէս,  
5-րդ Շահապիվանի ժողովը աւելորդ չէ հա-  
մարում արգելուած աստիճանների կողքին  
դնել նոյնպէս քրոջը, քեռորդուն, եղբորոր-  
դուն, հօրաքրոջը—մի հանգամանք, որ ա-  
պացոյց է, թէ այդպիսի կազերը տեղի էին  
ունենում: Այս ժողովը որոշ սահմաններ դրեց  
չհասութեանը և ընդունեց հռոմէական օ-  
րէնսդրութիւնը, այսինքն արգելեց ամուս-  
նութիւնը մինչև 8-րդ աստիճանը: Ուրիշ ժո-  
ղովներից ընդունուեց այդ կանոնը:

Այսպէս ուրեմն, մեր եկեղեցական կա-  
նոններով չհաս համարւում էր 7—8-րդ պոր-  
տը: Ուրիշ խօսքերով, լուսաւորչական եկե-  
ղեցականները և օրէնսդիրները չեն շեղ-  
ւում հռոմէական ու յունական եկեղեցի-  
ների սահմանած կանոններից, երևի նոյն  
խիղ զեկալարուել են նրանցով:

Խորքերի վերաբերմամբ քրիստոնէական  
եկեղեցին, չհասութեան տեսակէտից, նոյն  
օրէնքներն է սահմանել, ինչ որ են Մովսի-  
սական կանոնները, իսկ այս կանոնները խոր-  
թերին չէին զանազանում հարազատներից:  
Հայ եկեղեցին ևս խորթերի համար մի

և նոյն չհասական աստիճաններն է սահմանել, ինչ որ արեւակիցներէ: Մխիթար Գօշք թոյլատրելի է համարում ամուսնութիւնը նրանց մէջ միմիայն հինգերորդ աստիճանում: Նոյն խտութիւնը գործ էր դրում, երևի, և երկու կողմի չհասնելի վերաբերմամբ, այսինքն հօր զաւակների (առաջին պսակից) և մօր զաւակների (նոյնպէս առաջին պսակից) մէջ, թէև հռոմէական եկեղեցին արդեւք չէր լինում սրանց ամուսնութեան, իրաւացի նկատելով, որ ոչ մի արեւակցութիւն չը կայ նրանց մէջ: Մովսիսական օրէնքը, հարցին լոկ բարոյական տեսակէտից նայելով, ընդունում է հօրով և մօրով խորթ զաւակներին եղբայրներ, և նրանց հաւասարեցնում է հարազատներին:

Խնամէական կապը նոյնպէս սուրբ է համարուել միշտ և չհասութեան աստիճանները այստեղ համարեանոյնն են եղել, ինչ որ արեւակիցների մէջ: Այս չհասութիւնը սահմանուած էր նոյնպէս և Մովսէսի օրէնագրութեամբ:

Կան և ուրիշ տեսակ չհասութիւններ— կնիահայրական և որդեգրական, որոնք կազմում են հոգեւոր ազգակցութիւններ: Այս

ազգակցութիւնները չհասութեան տեսակէ-  
տից նոյնպէս հաւասարեցրել էին արեւակ-  
ցականին:

Սանիկը համարում է քաւորի հոգեոր-  
դին և նրանց սերունդների մէջ նոյն չհա-  
սութիւնն է դրուած, ինչ որ արեւակիցնե-  
րի: Այսպէս, քաւոր ու սանիկի միայն ծու-  
ները (թուների որդիքը) կարող են իրար  
առնել:

Հոգեզաւակը համարում է եղբայր որ-  
դեգրողի մարմնաւոր զաւակին, ու սրանք  
(իսկական որդին ու հոգեորդին) կարող են  
ամուսնանալ իրար հետ չորրորդ աստիճա-  
նում միայն (ըստ Ղրիմեցու):

Ահա այն կանոնները, որոնք գոյութիւն  
ունեն թղթի վրայ: Սակայն կեանքի մէջ գործ-  
նականապէս անգագար շեղումներ ու զեղ-  
ծումներ են կատարում հոգեւոր իշխանու-  
թեան կողմից, որ երբեմն անեւանելի դրու-  
թեան մէջ է գտնուում և ստիպուած է լի-  
նում բարոյապէս զիջանել ամուսնացողների  
պահանջին, իսկ յաճախ շահասիրական նը-  
պատակով դրդուած, — երբեմն էլ օտար ե-  
կեղեցում պսակուելու սպառնալիքի տակ  
թոյլատու թիւն է արձակում:

Հակառակ մեր սովորութեան, երկար կանգ առանք չհասութեան պատմութեան վրայ, որ, պէտք է ասած, չափազանց խառնաշփոթ է: Խնդիրը այն աստիճան կարևոր է, որ մենք պարտք համարեցիք նրան լուսաբանելու համար մի քիչ պարզել գոյութիւն ունեցած և ունեցող օրէնսդրութիւններն ու կանոնները:

Մենք տեսանք, որ ազգակցութիւն համարուել են և են այժմս էլ ոչ միայն արեւնակցութիւնը, այլ և խնամութիւնը և քաւորութիւնը:

Խնչ սկզբունքներով են արդեօք զեկավարուել եկեղեցական ժողովները, սուրբ հայրերը և նոյն իսկ քաղաքական օրէնսդիրները այսպիսի կանոններ հիմնելով, և այսպէս կաշկանդելով ամուսնացողների անհատական իրաւունքները:

Ունեն արդեօք այս որոշումները մի գիտնական յենակէտ, թէ՛ մի ուրիշ հիմունքների վրայ են դրուած:

Մենք չը կարողացանք մի որ և է գիտնական լուրջ շարժառիթ գտնել այդպիսի սահմանափակումը մեկնելու համար, եթէ չը յիշենք մի քանի տղայական դիտումներ

որոնք գիտնական լինելու յաւակնութիւն ունենա:

Այսպէս, լուտերանեան ժողովը և Ներսէս Շնորհալին իրանց որոշումները հիմնուած են այն ինքն ըստ ինքեան սխալ գիտումների վրայ, թէ մարդու մարմինը չորս բազաղբեալ նիւթերից է բաղկացած: Ներսէս Շնորհալին, սահմանելով չհասութիւն երկու կողմից մինչեւ չորս աստիճանը (ընդամենը 8 սորտ), բացատրում է իր որոշումն այն տարօրինակ գիտումով, թէ «քանզի բնութիւն մարմնոյ 'ի չորից տարերաց գոլով, յիրաւի եւ մարմնական ազգակցութիւն մինչեւ ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հօրէ երկուց եղբարց բաժանեալ, հաւասար ունին յինքեանս զհօրն գոյացութիւնս. իսկ առ ի նոցանէ ծնունդքն զկէս արեան եղբայրութեան, և երրորդ ծնունդն, որ յեղբարցն որդոց, զկիսոյն կէս արեան միայն. իսկ չորրորդ ծնունդն, որ ի սոցանէ, զչորեակ մասն մնացելոց: Եւ այս է սահման և կէտ արեան մերձաւորութեան» (Ընդհանրական):

Յակօր Դրիմեցին (երեւի օտար աղբիւրներից վերցրած), նոյնպէս ձգտում է բնա-

գիտական բացատրութիւն տալ, թէ ինչի ազգականները չհաս են մինչև չորրորդ պորտը: «Որդիք, որ ի սոցանէ (ծնողներից) առաջ գան, ունին զբոլոր արիւնն ազգականութեան, և թոռունքն զերրորդ մասն, և որդիք թոռանցն զերկրորդ մասն և թոռունք թոռանցն, որ է թոռինք, զմի մասն, և աստ վճարի արիւն ազգականութեան, սորա խնամինան և սոցա որդիքն, որ են ձագթոռինքն, առնուն զիրար»:»

Տարակոյս չը կայ, որ այս մեկնութիւնը շինծու է, որ հին օրէնադիրները և եկեղեցական ժողովները այդ գիտումներով չէր, որ ղեկավարուած էին իրանց կանոնները դնելով:

Վերջապէս, թէ այդ գիտումները կարող էին տեղի ունենալ, երբ խնդիրը արենակիցներին էր վերաբերուած, ինչ հիմք կայ արդելելու խնամիների կամ քաւոր ու սանիկի պատկները:

Կար մի ուրիշ շարժառիթ, աւելի յարգելի քան այս տղայական մօտիվները,—այդ բարոյական հիմունքն էր:

Ամեն ժամանակ բոլոր բանիմաց մարդիկ աշխատել են պահպանել ընտանիքի սըր-

բութիւնը, ներշնչելով գուեհիկ ամբոխին այն համոզմունքը, թէ ազգականի, ինամու հետ (և առհասարակ այն անձանց, որոնք մեր հաւատարմութիւնն են վայելում), սեռական կապեր հաստատելը մեծ մեղք է, և այդպիսիներին նղովում է եկեղեցին:

Թէ մովսիսական օրէնքը, թէ քրիստոնէական դարերում սահմանած չհասութեան կանոնները միշտ էլ լոկ այդ բարոյական կէտն են աչքի առաջ ունեցել: Մովսէսը արդելում է կին առնել այն աղջկան, որ մեր ինամատարութեան ներքոյ է գտնուում:

Այսպէս ուրեմն, օրէնսդիրներն աւելի բարոյական քան առողջապահական դիտումներ աչքի առաջ ունէին: Նրանց նպատակն է եղել սուրբ և անարատ պահել արենակցական և բարեկամական յարաբերութիւնները ու, հեռացնելով ամուսնանալու հնարաւորութիւնը, հեռացնել ազգականներից նաև սեռական յակումն: Մի խօսքով, նրանք միտք են ունեցել սահմանել յիշած անհատների մէջ այնպիսի մաքուր վերաբերումն ու սէր, որ գոյութիւն ունի եղբօր ու քրոջ, հօր ու զաւակի մէջ:

«Ընտանիքի և հասարակութեան վեր-

կութեան համար անհրաժեշտ է, որ մի քանի սերունդների միջից դուրս մղուի սիրոյ կիրքը: Պէտք է արգելել ամուսնութիւնը այն աստիճանի ազգականների մէջ, որոնցից մեծերը փոքրերի համար կարող են փոխարինել ծնողներին, ինչպէս են. հոգաբարձուները, խնամատարները: Իսկ այս հնարաւոր է միմիայն այն դէպքում, երբ օրէնքը, աւելի ևս ծէսերն ու սովորութիւնները, այնպիսի յարաբերութիւններ են ստեղծում ազգականների մէջ, որ կրքի ու սիրոյ ծագումն անհնար է դառնում:

Հեղինակաւոր Բիբլինգի այդ խօսքերը լոկ փիլիսոփայական նշանակութիւն չունեն: Դրանք լուրջ հոգեբանի, լուրջ խորհողի խօսքեր են: Գիտութիւնը, եթէ կամենաք, մինչև հիմա էլ ոչ մի լուրջ արգելառիթ չէ դնում հօր ու աղջկայ ամուսնութեանն անգամ, սակայն շատ դարեր առաջ մարդու բնազդումը անհնար է դարձրել այդ արիւնխառնութիւնը: Մեր կիրքը չէ յարում մեր մերձաւոր ազգականների վրայ և այս մի խոր հոգեբանական դրութիւն է, որի մասին խօսելն աւելորդ կը լինէր:

Այս բարոյական սկզբունքն աւելի ևս



Հոսեպի

կարևոր է պահպանել հայկական օջաղում,  
որտեղ մի քանի սերունդներ ու խնամիներ  
մի յարկի տակ են ապրում, որտեղ այդ-  
պիսի սուրբ հաւատարմութեամբ է վերա-  
բերում քենին փեսային, սանիկը իր քառ-  
բին: Ի՞նչ կը դառնայ մեր ընտանիքի վարք  
ու բարքը, եթէ խլենք նրանից յարաբերու-  
թիւնների սրբութիւնը:

Տեսնենք հիմի, թէ ինչպէս է նայում  
չհասութեան խնդրին բժշկական գիտու-  
թիւնը:




Շատ քիչ խնդիր կայ բժշկականութեան  
մէջ, որ այն աստիճան գործնական կարևո-  
րութիւն ունենար և որի մասին այնչափ  
հակասական կարծիքներ յայտնուած լինէր,  
որքան այս: Հարցը հետազօտողներն ու  
գիտնականները երկու բանակի են բաժա-  
նուած անցեալ դարի սկզբից: Մի մասը ազ-  
գականների ամուսնութիւնը իրար հետ մի  
ընական երեոյթ է համարում և ոչ մի մնաս  
չէ տեսնում դրա մէջ, եղել են նոյն իսկ  
այնպիսիներ, որոնք շատ ցանկալի և մարդ-  
կութեան համար շատ օգտակար են հա-  
մարել արեւակցական միութիւնները: Իրանց

դէմ կանգնած են մի շարք ուրիշ հետազոտողներ, նոյնպէս Ֆակտերով, փորձերով ու ստատիստիկայով զինուած, որոնք բոլորովին հակառակն են պնդում և ձգտում են ապացուցել, թէ այդ տեսակ ամուսնութիւնը ամեն տեսակ անբախտութեան աղբիւր է դառնում սերնդի համար: Այսպիսով կազմուել է մի ամբողջ գրականութիւն այս հարցի վերաբերեալ:

Եթէ մենք ցանկանայինք առաջ բերել այն բոլոր հետազոտութիւններն ու ստատիստիկական տեղեկութիւնները, որոնք դոյութիւն ունեն բժշկական գրականութեան մէջ, ստիպուած պիտի լինէինք հատորներ գրել: Միւս կողմից խնդիրն այնչափ նշանաւոր է, որ չենք կարող մի համառօտ ակնարկ չը գցել կարեւորագոյն աշխատութիւնների վրայ:

Ես չեմ խօսում այն հեղինակների մասին, որոնք միայն լոկ կարծիքներ են յայտնել ազգակցական ամուսնութեան վնասակարութեան կամ օգտաւէտութեան մասին:

Մեզ համար նշանակութիւն ունին միմիայն Ֆակտերը, գիտողութիւններն ու փորձերը:

Արեւակցական ամուսնութեան հակա-  
ռակորդների ասելով, սրանից առաջացած  
սերունդը լինում է թուլակազմ, արատաւոր  
ու հիւանդոտ: Նրա մէջ իբր թէ տարա-  
ժուած են լինում խուլ-համբուլիւն, ընկ-  
նաւորութիւն, ապուշութիւն, խելագարու-  
թիւն, աչքի և ուրիշ հիւանդութիւններ: Ա-  
մենից շատ աչքի է ընկնում խուլ-համբերի  
մեծ տոկոսը ազգակցական պսակի զաւակ-  
ների մէջ: 

Շրպոյի ստատիստիկայով, 290 խուլ ու  
համբ ծնուածներից 86-ը ազգականների  
զաւակներ են եղել, այսինքն մօտ 30<sup>0</sup>/<sub>0</sub>,  
ուրիշ հետազօտողներ գտել են 25<sup>0</sup>/<sub>0</sub>, 21<sup>0</sup>/<sub>0</sub>:  
Եւ նկատուած է, որ քանի մօտ է ծնող-  
ների արեւակցութիւնը, այնքան մեծ է  
խուլերի թիւը: Այսպէս, ըստ Բուդէնի  
ստատիստիկայի, հօրեղբօր, մօրաքրոջ, քեռու  
զաւակների ամուսնութիւնը տուել է 18  
խուլ, հօրեղբօր ու քեռու պսակը եղբօր ու  
քրոջ աղջկայ հետ—37, իսկ քրոջ սրդու ու  
մօրաքրոջ—70: Այս տեղեկութիւններից հե-  
ղինակները եզրակացնում են, թէ արեւակ-  
ցական ամուսնութիւնները մեծ քանակու-  
թեան խուլ-համբեր են տալիս. (Բուդէնի

կարծիքով 12—15 անգամ աւելի քան միւս  
ամուսնութիւնները): Հրէաները, որոնց մէջ  
սաստիկ տարածուած է ազգակցական միա-  
ւորութիւնը, տալիս են ամենամեծ տոկոս  
համրերի ու խուլերի: Փրանսիայում հրէա-  
ների մէջ աւելի յաճախ են պատահում այս  
արատ ունեցողները, քան ֆրանսիական հա-  
սարակութեան: Բերլինի խուլ-համրերի ինս-  
տիտուտի մէջ բժ. Լիբրայխը գտել է, որ  
341 հիւանդից 42-ը հրէաներ էին: Հաշուե-  
լով ազգաբնակութեան վրայ, տեսնում ենք,  
որ 10,000 կաթովիկներին ընկնում է միայն  
3-ից քիչ աւել խուլ-համր, այն ինչ նոյն  
թուով հրէաները տալիս են 27 հիւանդ:

Ապուլուսիւն ու խելագարուսիւն: Մի  
շարք հեղինակաւոր անձինք, որոնց շարքում  
և հռչակաւոր էսքիբօլը, որոշ կապ են  
գտնում այս դրութիւնների ու չհաս պսակ-  
ների մէջ: Այսպէս, հրէաների մէջ աւելի  
շատ են ապուշներն ու խելագարները, քան  
միւս եւրոպացիներին: Բժ. Նովը 17 ազգակ-  
ցական ամուսնութեան մէջ գտել է 97 երե-  
խայ, որոնցից 44 ապուշ էին, 12 խուլախ-  
տաւոր (ЗОЛОТЫХА), 1 թզուկ և 1 խուլ: Բժ.  
Բեմիսսը ասում է, որ 787 այդ ձևի ամուս-

նութիւննից 256-ի մէջ եղել են կոյրեր, խուլ-համբեր ու ապուշներ: Ճանապարհորդները նկատել են իրլանդական դաղութների մէջ Ամերիկայում, հօլլանդական կօլօնիայի մէջ Աֆրիկայում մեծ քանակութեամբ ապուշներ և խուլ-համբեր: Նոյն բանը նկատուած է ֆրանսիական մի կօլօնիայում: Անգլիայում 1847 թ. 17 միլիօն ժողովրդին ընկնում էր 15,000 խելագար, այն ինչ Իրլանդիայում (որտեղ արինակիցները աւելի քիչ են ամուսնանում միմեանց հետ) նրանց թիւը համեմատաբար երկու անգամ աւելի պակաս էր:

Ընկնաւորութիւնը ևս աւելի յաճախ է նկատուում իբրև այդպիսի ամուսնութեան պտուղ:

Մի քանի հեղինակներ պնդում են նոյնպէս, թէ արենակիցներից ծագած սերունդը, բացի յիշած հիւանդական դրութիւններից, յաճախ ունենում է զանազան արասներ և կուրութիւն: Փրանսիայում մի գիւղ կայ, Իզօ անունով, որ առաջ անշատուած ու կղզիացած էր ապրում հաղորդակցութիւնների դժուարութեան պատճառով և որտեղ ամենամօտ աղգականները ա-

ամուսնանում էին միմեանց հետ: Արդ, ժամանակի ընթացքում նորանոր սերունդների մէջ զարգացել ու՞ տարածուել էր մի հրէշութիւն (уродство), որ կոչւում է վեցամատութիւն (ձեռքին բուսնում էր վեցերորդ մատ).— Բնակիչները վեց-մասնանի էին դառել: Իսկ երբ որ հազորդակցութիւնները լաւացան և նրանք ամուսնական կապերով խառնուեցան ուրիշ երկրացիների հետ, կամաց-կամաց վեցերորդ մատը անհետացաւ, կարծես, հալուեց: Խելագարութիւնը Եւրոպայում աւելի յաճախ է պատահում հրէաների, քան միւս ազգերի մէջ: Այդ բանը մասամբ (ըստ Լըգուվէի) պէտք է վերագրել ազգակցական ամուսնութեան:

Եւ շեմ կամենում աւելի երկար կանդառնել այդ կարծիքների ու թուերի վրայ: Արեւակցական ամուսնութեան սերունդը, շատ հեղինակների կարծիքով, լինում է արատաւոր, հիւանդոտ, թուլակազմ և տրամադրուած սպառման:

Մի քանի ճանապարհորդներ զանազան կղզիներում ու կօլօնիաներում տեսել են, որ բնակիչները փոքրահասակ են դառել, կանայք մանր, նիհար, թուլամորթ, անտաշ

ու տգեղ, իսկ տղամարդիկ վաղ են ծերանում, երբեմն ուղղակի զզուելի գէմք ունեն, կորցրած են տղամարդուն յատուկ ֆիզիքական ոյժը, տակունութիւնն ու ճարպիկութիւնը. մի խօսքով, այդ կղզիներում աւրում է մի ընդհանուր այլասեռումն և դրա պատճառը հետազօտողները գտնում են ազգակցական ամուսնութեան մէջ, որ առօրեայ երեւոյթ է այնտեղ:

Դըվէն պնդում է, թէ Եւրոպայում արիստոկրատիան ֆիզիկապէս ու բարոյապէս ընկնում է, ստորանում և թէ Դօֆինէի ազնուական ցեղերը համարեա արդէն սպառուել են հէնց ազգակցական ամուսնութիւնների պատճառով: Պերիէն նոյնն է ասում հրէական շատ համայքների մասին: Դօկտօր Էլիօտսըն այդ բանը նկատել է նոյնպէս և անդլիաբնակ հրէաների մէջ: «Ոչ մի ազգի մէջ այնքան շիւ, կակաղ, ապուշ ու ամեն աստիճանի խելագարներ չը կայ, ինչքան հրէաների մէջ», ասում է նա: Ուրիշ գրողներ մատնանիշ են անում լեռնաբնակ համայքների վրայ, որոնք, կղզիացած ապրելով (օր. Սափոյայում), ստիպուած են

խնամխանալ իրար հետ և այդ պատճառով սաստիկ վատասեռուած են այժմ:

Ահա մի շարք ֆակտեր, որոնք, կարծես, այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում արենակցական ամուսնութեան վնասակարութեան մասին:

Սակայն այդ միայն առերես է: Մի ուրիշ շարք գիտնականներ ու հետազօտողներ եկել են հակառակ եզրակացութեան, հաւաքած լինելով համոզիչ ապացոյցների մի կոյտ:

Ամենից առաջ նրանք մատնացոյց են անում մինչև այժմ ժողոված ստատիստիկայի քչութեան ու անբաւարարութեան վրայ: Այսպիսի մի ահադին խնդիր որոշելու համար հարկ կայ աւելի ընդարձակ տեղեկութիւնների ու աւելի մեծ թուերի: Ի՞նչ նշանակութիւն ունի մի քանի արենակցական ընտանիքների պատմութիւնը, երբ որ միմիայն Ֆրանսիայում կատարւում են 3—4000 այդպիսի պատկեր: Յետոյ հրէաներին վերաբերեալ ստատիստիկան ոչինչ չէ ապացուցում, որովհետև, եթէ նրանց մէջ աւելի յաճախ են պատահում արատաւոր մարդիկ, ապուշներ, թուլամիտներ, նոյն իսկ խելա-



դարներ, նոյն չափով (եթէ ոչ աւելի) կան  
և զօրեղ տաղանդներ: Վերջապէս այս ազգի  
բացառիկ դրութիւնը եւրոպական անկախ  
տէրութիւնների մէջ (համարեա ամենուրեք  
հալածուած ու ճնշուած),—մի դրութիւն, որ  
աւելի դժուար է դարձրել նրանց համար  
կեանքի կռիւր, բաւական կը լինէր բա-  
ցատրելու այն ներվային երևոյթները, որոնց  
մի քանիսը վերագրուած են արենակցական  
ամուսնութեան:

Սակայն, մի կողմ թողնելով փիլիսո-  
փայական դատողութիւնները, դառնանք  
Ֆակտերին: Նրանք նոյնպէս հերքում են  
վերոյիշեալ կարծիքը:

Եւ, ճշմարիտ որ, վերև յիշած թուերի  
հանդէպ կարելի է դնել մի շարք ուրիշ  
թուեր, որոնք ապացոյց են, որ արենակ-  
ցութիւնը ոչ մի վատ ազդեցութիւն չէ  
ունենում սերնդի վրայ:

Բժ. Վուազէնը 1560 թուլախելքներից  
ոչ մէկի ծագման մէջ չի գտել արենակցա-  
կան ամուսնութիւն: Բուրժուան առաջ է  
բերում արենակցական ամուսնութիւնից  
ծագած սերնդի մի պատմութիւն: 130 տա-  
րուայ ընթացքում այս ազգակցական զոյգը

աճել է ու տուել 416 անհատ, և սրանցից մի քանիսը միայն հիւանդոտ են եղած և 8 հոգի միայն մեռած են մատաղ հասակում: Ուրիշ հեղինակներ բերում են համանման դէպքեր:

Համայնքների սերհատման դէմ մի շարք գրողներ նոյնպէս հակասական կարծիքներ են յայտնում:

Բիւլինէրը, Վերկլինը, Վունզէնը և շատ ուրիշներ նկարագրել են փոքր ու կղզիացած համայնքներ, որոնց մէջ դարերի ընթացքում տիրում էր չհաս ամուսնութիւնը և որոնք այնու ամենայնիւ յաղթանդամ, առոյգ անհատներից էին բաղկացած: Պետրի ասելով, ազգակցական պատկները օրէնք են դառել Սումատրայում և, չը նայելով արնախառնութեանը, բնակիչները իդէալական կազմուածք ունեն: Կան հեղինակներ, որոնք գտել են, որ ընդհակառակը արենակիցները ամուսնանալով, իրար հետ տալիս են աւելի լաւ, աւելի առողջ սերունդ, քան օտարները:

Այսպիսով խնդիրը մնում էր անորոշ, առարկութիւններն ու ֆակտերը հակասական էին ու ոչինչ չէին կարող վճռել:

Գիտնականները դիմեցին մի ուրիշ մեթօդի. նրանք փորձեր արին կենդանիների ու բոյսերի վրայ:

Այստեղ ևս խառնաշփոթ ու հակասական են ֆակտերը. Շիպոյի, Բուրժըլէի, Բօդուանի, Արկանուիլի փորձերը, Ալֆօրի, Լօնդօնի անասնաբուծական ուսումնարաններում արած դիտումները բերում են մեզ այն եզրակացութեան, թէ արենակից կենդանիների զուգաւորումն նսեմացնում է ցեղը, դադարեցնում է աճումը: Միւս կողմից հակառակն են ցոյց տալիս անգլիական ֆիրմաներում, սպանդանոցներում՝ արած դիտումներն ու փորձերը:

Խնդիրը մնում էր նոյն դրութեան մէջ, ինչ որ էր մի քանի դար առաջ, և հազարաւոր փորձեր ու դիտումներ լոյս չը գցեցին նրա վրայ:

Նորագոյն գրողները, կարծես, աւելի յակուում են ընդունելու հների կարծիքը այսպիսի ամուսնութիւնների վրասակարութեան վերաբերմամբ: Վիլկէնը մասամբ այդ կարծիքին է: Մանտեղացցան ևս ասում է, թէ չհասնելի սերունդը աւելի քիչ

է աճում ու բազմանում, քան հեռաւորներինը:

Այժմ բժիշկներն ու մարդաբանները մեծ դեր են խաղալ տալիս ժառանգականութեանը: Դեռ Պերիէն ճիշտ նկատել էր, որ «արենակցութիւնից ծագած դժբախտութիւնները ոչ թէ արնախառնութեան հետեւանք պէտք է համարել, այլ հիւանդական ժառանգականութեան»: Նոյնը պնդում էր Բուրժուան դեռ վաթսուհական թուականներին:

Նրգահանուր կարծիքը հետեւեալն է.

Ծնողների ֆիզիկական յատկութիւնները (լաւ թէ վատ) անցնում են սերնդին, հետեւաբար, մի և նոյն ընտանիքի անդամները ժառանգում են իրանց նախահօրից ու նախամօրից նրանց ֆիզիկական թուլութիւնները, ինչպէս և բարեմասնութիւնները (գոնէ մասամբ):

Օրինակ, եթէ ծնողները թոքախտաւոր են եղած, սերունդը նոյնպէս տրամադրուած կը լինի գէպի այդ հիւանդութիւնը և կարող է վարակուել նոյն ցաւով: Եթէ այս արատաւոր ծնողներից սերուածները ամուսնանան իրար հետ, պարզ է, որ նրանցից

ամեն մէկը կը տայ ժառանգին մի մասն իր հիւանդական տրամադրութիւնից: Այսպիսով նոր զաւակի մէջ կը գումարուեն երկու ծնողների հիւանդական տրամադրութիւնները և նա, հետևապէս, աւելի տկար կը լինի, քան ծնողներից ամեն մէկը: Յետոյ եթէ այս նոր զաւակը ամուսնանայ իր մի ուրիշ արեւակից ազգականի հետ (օր. իր հօրեղբօր աղջկայ հետ), նրանից ծագած սերունդը աւելի ևս թոյլ կը լինի կազմուածքով, աւելի ևս տրամադրուած թուրքախաի: Եւ, այսպէս, հիւանդական յատկանիշներն ու տրամադրութիւնները գնալով կը սաստկանան սերնդից սերունդ, կը փչացնեն, կը սերհատեն հետագայ սերունդները և կը հասցնեն ցեղը սպառման:

Յաւալին հէնց այն է, որ (ինչպէս նկատել են շատ հետազօտողներ) ժառանգականութիւնը ընտրում է ծնողների հէնց թոյլ հիւանդական կողմերը ու տալիս նոր սերընդին:

Այս ձևով ցեղը գնալով տկարանում է, նրա աճումը պակասում է ու դատարում: Անհրաժեշտ է դառնում նոր հոսանք, նոր արիւն, որ կենդանացնէր նրանց մէջ հանգած

կամ թուլացած կենսական ոյժերը և բարդաւաճման ընդունակութիւնը:

Արդի մարդաբանները նոր տարրերի ներհոսումն անհրաժեշտ են համարում հնացած հասարակութիւնները նորոգելու համար: (Տարաը, Սիգելէն, Լըբօնը):

Յաճախ ամբողջ դասակարգեր, քաղաքներ, որոնք ապրում են առանձնացած կեանքով, կարծես, ծերանում են, թառամում, ժողովուրդը նուազում է, կորցնում է իր տոկունութիւնը կեանքի կռուի մէջ: Եւ նրկատուած է, որ դրսեցիները խառնուելով բնիկներին, ազնուացնում ու նոր կենսական ոյժ են ներշնչում նրանց:

Երևակայեցէք ձեզ մի առողջ օտարական, որ կին է ուզում մի ժառանգական արատաւորի, օր. մի ներվային աղջկայ: Խնչ կը լինի սրանց սերունդը: Սա պիտի ստանայ իր մօրից նրա ներվային խանգարումներն ու հիւանդական արամադրութիւնները, բայց հօրից ժառանգած առողջ ներվերը, այսպէս ասած, կ'ոչնչացնեն, կ'անդօրացնեն հիւանդական սաղմերը:

Այս երկար հետազօտութիւնները բերում են մեզ հետևեալ եզրակացութեան.

1. Արեւակցական ամուսնութեան վնասակարութիւնը դեռ չէ ապացուցուած գիտնականապէս, սակայն դարեւոր դիտումները և մարդաբանական ցուցմունքները իրաւունք են տալիս մեզ մասամբ ընդունելու այդ ենթադրութիւնը:

2. Ազգակցական ամուսնութիւններից առաջ եկած սերունդների սերհատումն բացատրուում է ժառանգականութեան օրէնքով, որով սերունդների մէջ գումարուում են ծնողների արատները:

3. Վատասեռումն (вырождение) տեղի ունի այն դէպքում, երբ ամուսնացող ազգականների ընդհանուր նախնիները հիւանդոտ ու արատաւոր են եղած, և վատասեռումն այնքան աւելի մեծ է, որքան մօտ է ազգակցութիւնը: Հակառակ դէպքում (երբ ծնողները առողջ են) ժառանգները կարող են երկար սերունդների ընթացքում պահպանուել և աճել, չը նայելով արեւակցական միաւորումներին:

4. Արատաւոր ընտանիքին պատկանող անհատը, ամուսնանալով առողջ օտարի հետ, կարող է արտադրել բոլորովին առողջ սերունդ:

## VI

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՕՏԱՐ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՄԷՁ

Ազգերի միակերպումն ու ձուլումն ամուսնութեան միջոցով.—Մանեգազցայի կարծիքը այսպիսի միաւորութիւնների մասին.—Մրանց վսանգաւորութիւնը սերնդի տեսակէտից:

Ժամանակի ընթացքում, անդադար չփման շնորհիւ, եւրոպական ազգերն արդէն այն աստիճան միակերպուել են, որ ամուսնութիւնը կատարուում է անխտիր բոլոր ազգերի մէջ: Առօրեայ երևոյթ է եւրոպայում տեսնել սեւահեր ու թուխաչք սպանուհուն մի շէկ շվեդացու կին դառած:

Այսպէս գնալով կը հասնի, անտարակոյս, մի ժամանակ, երբ եւրոպական ազգերը ձուլուած կը լինեն միմեանց հետ ու կորցրած իրանց ազգային այն մի քանի ա-



աւանձնայատկութիւնները, որոնք դեռ ևս քիչ թէ շատ բնորոշում են նրանց:

Կը դայ անշուշտ մի ժամանակ, երբ այլ ևս ոչ ուս կը լինի, ոչ ֆրանսիացի, ոչ անգլիացի, այլ կը լինի մի մարդկութիւն, և բոլոր ազգերը համակերպուած ու հաւասարուած թէ ֆիզիկապէս, թէ դաւա- նութեամբ, թէ քաղաքակրթութեամբ և թէ աշխարհայեցողութեամբ:

Այսպէս է կատարում ձուլումն հաւասար քաղաքակրթութեան տէր ազգերի մէջ: Այստեղ իւրաքանչիւր ազգութիւն իր աւանձնայատկութիւններից մի բան մտցնում է ձուլարանի մէջ, այնպէս որ այնտեղից դուրս եկած նոր մարդկութիւնը կրում է իր մէջ կազմող ազգութիւնների բնորոշ կողմերը:

Ստոր զարգացման տէր ազգութիւնները ոչ թէ ձուլում են, այլ ուղղակի կլանում, հալում են մեծ ազգերի մէջ, առանց որ և է հետքի:

Մարդկութեան ֆիզիկական բարուղբման տեսակէտից պէտք է ասել, որ ազգերի խառնումը տալիս է առողջ ու աղնուացնող սերունդ, միայն անհրաժեշտ է, որ խառ-

նուող ազգերը մի ցեղի պատկանեն. օրինակ, բոլորը սպիտակամորթ լինեն: Հակառակ դէպքում աւելի լաւ ֆիզիկական յատկութիւններ ունեցող ազգը կը նսեմանայ: Այսպէս օրինակ, եթէ մի սպիտակամորթ ամուսնանայ մի նեղրուհու հետ, նրա սերունդը մուլատներ (կիսասևեր) կը լինեն և ուրեմն ցեղը կը վատանայ:

Մրանք են մարդաբանական կանոնները:

Մեզ աւելի հետաքրքրում են ամուսինների անհատական կեանքը և նրանց սերնդի առողջական դրութիւնը:

Խօսենք Մանտեգացցայի բերանով.

«Ամենայն ազգ արդիւնք է անհամար ֆիզիկական, բարոյական և մտաւոր տարբերի. ահա թէ ինչի անդլիացին այնչափ տարբերում է սպանացուց, իսկ իտալացին նորվեգացուց:

«Երբ կինն ու մարդը տարբեր երկրների զաւակներ են, նրանք տարբեր լեզուներով են խօսում: Բայց այդ դեռ ոչինչ. — նրանք տարբեր զգացմունքներ ունեն, ուրիշ կերպ են ատում ու սիրում: Նրանց բաղձանքներն էլ, ձգտումներն էլ տարբեր

են: Մենք ամենքս բազմաթիւ դարերի պատմութեան կենդանի հատուածներ ենք:

«Համաձայնեցնել ու ի մի ձուլել երկու անձնաւորութիւններ, որոնք ծնուել են տարբեր երկնքի տակ, ստացել են ոչ հաւասար կրթութիւն, որոնց կրօնական, բարոյական, քաղաքական ու աւանդական իդէալները տարբերուում են միմեանցից— այդ մի հնարաւոր, բայց չափազանց դժուարին գործ է և հազիւ է յաջողուում:

«Նայեցէք ձեր շուրջը և կը տեսնէք, որ այս տեսակի խնամութիւնները հիմնուած են մեծ մասամբ շահասիրական ու լաւ կապակցութիւններ ձեռք բերելու գիտումների վրայ, եթէ միայն անսանձ սէրը չէ լինում շառժառիթը, սէր, որի կատաղի ու ազմկալից ալիքները կլանում են այն ամեն գիտողութիւններն ու հաշիւները, որոնք խելացի ու խոհեմ պսակների հիմքն են կազմում: Ազգայնութեան սարբերութիւնը նուազեցնում է երջանկութեան հնարաւորութիւնը ընտանիքի համար. բայց հարիւր անգամ անելի պակաս են երջանիկ ընտանիքների թիւը, երբ ազգայնութեան սարբե-

բութեան վրայ աւելանում է եւ կրօնի գա-  
նազանութիւնը:

«Բուռն սէրը անհնար է առանց մեծ  
հաւատի: Ո՛վ սաստիկ է սիրում, նա չնչին  
է համարում այն արգելքը, որ ներկայա-  
ցնում է լեզուի, սովորութիւնների, վարք ու  
բարքի տարբերութիւնը. մի և նոյն է նրա  
համար, թէ իր կիները որտեղ է աղօթում—  
եկեղեցո՞ւմ, թէ մէջիդում:

«Սակայն այդ բուռն սէրը, որքանն էլ  
երկար լինի նրա տևողութիւնը, դարձեալ  
կը նուազի մի օր, կը հանդստանայ և կը  
փոխուի քաղցր ու թանկագին սովորութեան:  
Եւ երբ կրքի ծովը կը հանդարտուի, երբ  
ջուրը կը պարզուի ու թափանցիկ կը դառ-  
նայ, այն ժամանակ կ'երևան յատակին սըփ-  
ռած վտանգալից քարերը, որոնք կրօնի, յա-  
կումների և սովորութիւնների տարբերու-  
թիւնից առաջացած սպառնալիքների մարմ-  
նացումն են: Եւ այդ ապառաժները կը  
բարձրացնեն իրանց դլուխները ջրից դուրս  
ու կը խանդարեն, կը վտանդաւորեն նա-  
ւումն: Երբ մեղրամսի լուսինը կը ծածկուի  
թանձր ամպերի քամակին, մեր նաւակը կը  
խրուի անտարբերութեան տիղմի մէջ, կամ

կը փշրուի, դիպչելով ընտանեկան անհամա-  
ձայնութիւնների ու կռիւների ալիքներին,  
այն ժամանակ այլևս ոսկին ու տիազրս-  
ները անկարող կը լինեն ծեփելու նաւակի  
պատուածքները, և նրանցից շինած կար-  
կատանները չեն փրկի զոյգին, քանի որ հո-  
գիների ու մարմինների սրբազան միութիւ-  
նը ընդմիշտ կործանուած է արդէն»:

Միայն բարոյական դիտումներով չէ, որ  
դեկավարուել է Մանտեգացցան այս տողե-  
րը գրելիս: Նա խօսում է իբրև Ֆիզիօլօգ  
և հոգեբան:

Բեղմնաւորութիւնը, յղութիւնը, ծնուն-  
դը այնպիսի մեծ ու բարդ աղտեր են, որ  
ամեն մի հոգեկան տրամադրութիւն, ամեն  
մի յուզմունք ազգում է նրանց կանոնաւո-  
րութեան վրայ: Իսկ յիշած ձևի ամուսնու-  
թիւնները տարբեր տարրերի մէջ չէ կարող  
վրդովմունք չը գցել կնոջ հոգեկան աշխար-  
հում:

Եւ այդ հասկանալի է:

Այն բոպէից, երբ կինը ստիպուած է  
օտար խաչ ու աւետարանի տակ, օտար  
լեզուով իր վճռողական «այն»-ն արտասա-  
նել, երբ նրան շնորհաւորական համբոյր են

տալիս օտար ազգութեան և օտար դաւա-  
նութեան պատկանող մարդիկ—այդ ժամա-  
նակից նրան վիճակւում է մի յաւիտենական  
հոգեկան ճնշումն, որքան էլ նա օտարացած  
լինէր արդէն իր ազգութիւնից ու կրօնից:  
Կիզիչ յուզմունքներն անդադար սեղմում են  
նրա սիրտը:

Հէնց միայն այն պերսպիկտիվան—  
տեսնել իրանից ծնած զաւակին նոյնչափ  
օտարացած իրանից որչափ է ամուսինը,  
զգալ, որ իր արգանդում աճող սաղմը, որ  
սնւում է իր արիւնով, աշխարհ գալով,  
պիտի ընդմիշտ անջատուի նրանից, այդ  
միայն բաւական է, որ նա կորցնի իր հոգե-  
կան հանգստութիւնը: Եւ նրա անդադար  
յուզուած դրութիւնը, նրա խզճի յարատե-  
տանջումն, հիւանդոտ ու ներվային կը գար-  
ձնէ արգանդի զաւակին: Արդարացի է, ու-  
րեմն, ժողովրդի մէջ դարերով ընդունուած  
այն կարծիքը, թէ յղի կնոջ հոգեկան շար-  
ժումները (վախը, ուրախութիւնը, բարկու-  
թիւնը, վիշտը և այլն) սաստիկ փնասում են  
երեխային:

## VII

### Ժ Ա. Ռ Ա. Ն Գ Ա. Կ Ա. Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ֆիզիկական ու բարոյական ժառանգականութիւն.—  
Առավիզով.—Առաջգնաց ու յետագնաց ժառանգակա-  
նութիւն.—Ծնողների համանման եւ հակասական  
յատկանիւթների փոխանցումն սերնդին.—Պայսմանի  
բէօրիան.—Հիւանդական ժառանգ.—Ժառանգակա-  
նութեան ոյժը.—Ընտրողութեան օրէնք ամուսնու-  
թեան մէջ.—Ժառանգաբար փոխանցնող հիւանդու-  
թիւնները.—Պէտք է բացատրել ժողովրդին հիւանդա-  
կան ժառանգականութեան օրէնքները:

«Պատուը ծառից հեռու չի ընկնի». «Ծա-  
ռը արմատից է փտում»:

Ժողովրդի խորիմացութիւնը այս ա-  
ռածներով է արտայայտում ժառանգակա-  
նութեան մեծ օրէնքը:

Ձաւակը նմանում է ծնողներին:

Նա արդիւնք է երկու ծնողների արմա-  
տական յատկութիւններին, նրանց կենսա-  
կան ոյժի պտուղն է:

Յեզի յատկանիշները կարմիր թելի նման անցնում են սերունդների միջով, կազմելով նրանց գլխաւոր բնորոշ յատկագոյնը:

Մարդկային ցեղը, ինչպէս և կենդանիներինը, ինչպէս և բոյսերինը, մի և նոյն օրէնքով է ղեկավարւում—ժառանգականութեան օրէնքով:

Առողջ ծառը առողջ պտուղներ կը տայ, հիւանդը — հիւանդ:

Այս է ժառանգականութիւնը իր ամենապարզ արտայայտութիւններով:

Մենք չենք կարող այստեղ մանրամասնութիւնների մէջ մտնել ժառանգականութեան բարդ թէօրիաների մասին: Այդ մեղ շատ հեռու կը տանէր և մեր նպատակից դուրս կը լինէր:

Կ'ասենք միայն հետևեալը.

Ժառանգականութիւնը լինում է Թիզիկական և բարոյական կամ հոգեկան:

Ֆիզիկականը վերաբերում է մարմնի կազմին և ձևին: Յաղթանդամ ծնողներից կը սերունեն լաւ կազմուածքով զաւակներ. մեծ ըթանի ու սև մազերով հօր զաւակը կարող է նոյնպէս մեծ ըիթ ու սև մազեր ունենալ:



Հոգեկանը վերաբերում է սերնդի ընդունակութիւններին, բարոյականութեան, առհասարակ մտաւոր աշխարհին, խելագար, ընկնաւոր ծնողի զաւակը կարող է ներվային լինել և նոյն հիւանդութիւններն ստանալ: Մեծ, հանճարեղ երաժշտի, բանաստեղծի որդին նոյն ընդունակութիւնները կարող է ունենալ և այլն:

Հէնց միայն այն մեծ օրէնքը, որ ամեն կենդանի իր նմանն է ծնում և ոչ ուրիշ— այդ ժառանգականութեան ամենախոշոր յայտնութիւնն է:

Ամուսիններից իւրաքանչիւրը կարող է իր յատկանիշները տալ զաւակին: Բայց չը գիտենք, թէ ո՛ւմ յատկութիւններն են դերակշռում որդու մէջ.— հօրը թէ մօրը:

Մի ընդհանուր կարծիք կայ, որ սակայն դեռ ապացուցուած չէ, այն է, թէ տղան աւելի նմանում է մօրը, իսկ աղջիկը— հօրը: Յաւակցաբար այս մասին մենք բաւարար հետազոտութիւններ չունենք:

Կայ և ասավիզմ— նախանմանութիւն, երբ ժառանգական յատկանիշները թուչում են մի սերունդ, օրինակ, անցնում են ոչ որդուն, այլ թոռանը: Ատավիզմը ահագին

?

122  
1

դեր է խաղում հիւանդական ժառանգութեան մէջ:

Յաճախ ծնողները առողջ են, այն ինչ որդիքը մի որ և է արատ ունեն, կամ ներվային հիւանդութեան տէր են, կամ բարակացաւոտ ու սիֆիլիսոտ:

Շատ ընտանիքների մէջ հիմնական բնորոշ դժերը համարեա անփոփոխ անցնում են մի քանի սերունդների միջով, այսպէս յայտնի են Նապօլէօնների պատմական դիմագծերը: Բայց ընդհանրապէս ամուսնութիւնների միջով տոհմային յատկանիշները կարող են փոփոխուել—սաստկանալ կամ նուազել:

Առաջին դէպքում (երբ յատկանիշները սաստկանում են) ժառանգականութիւնը կոչւում է առաջգնաց կամ պրօգրեսսիվ, երկրորդում յետագնաց կամ ըրեգրեսսիվ: Ամուսնութեան մէջ ամուսիններից իւրաքանչիւրը իր մի քանի յատկութիւնները մտցնում է նոր էակի կազմի մէջ: Եթէ այդ յատկութիւններն ունի և միւս ամուսինը, պէտք է սպասել, որ որդու մէջ նրանք կարտայայտուեն աւելի ուժեղ կերպով, աւելի

պարզ, աւելի սաստկացած, քան ծնողներից  
ամեն մէկի մէջ:

Այսպէս, օրինակ, եթէ հայրն ու մայրը,  
երկուսն էլ սեւամորթ են, կամ մեծ քիթանի  
են, հաւանական է, որ որդիքը աւելի ևս  
սև դուրս գան և աւելի մեծ քիթ ունենան,  
քան ծնողներից իւրաքանչիւրը:

Այս օրէնքը աւելի ևս պարզ է և ապա-  
ցուցիչ հիւանդական ժառանգականութեան  
մէջ:

Օրինակ. եթէ երկու ծնողներն էլ  
տուբերկուլոզ (բարակացաւ) ունեն, նրանց  
զաւակը աւելի տրամադրուած կը լինի բա-  
րակացաւ ստանալու, քան եթէ նրանցից  
մէկը միայն հիւանդ լինէր:

Հիմա վերցնենք հակառակ դէպքեր,  
երբ ծնողների յատկանիշները ոչ միայն հա-  
մանման չեն, այլ ուղղակի հակասական  
են եւ միմեանց ոչնչացնում են:

Սեւամորթ տղան ամուսնանում է շիկա-  
հեր աղջկայ հետ.—զաւակները լինում են  
(ընդհանրապէս) միջակ գոյնի—չազանակա-  
գոյն: Բարձրահասակ մարդը և կարճահա-  
սակ կինը կը տան միջահասակ որդիք: Մեծ  
քիթանի հօր ու փոքր քիթանի մօր զաւակը

կարող է միջակ քիթ ունենալ և այլն և այլն:

«Բաւական է նայել մեր շուրջը, ասում է մի գիտնական, որպէս զի համոզուենք, թէ մարուր տիպեր շատ քիչ կամ բոլորովին չը կան: Ամեն քայլափոխում հանդիպում ենք սև մազերով ու բացգոյն աչքերով մարդկանց ու կանանց, տեսնում ենք երկար դէմքեր մինչդեռ գլուխները կոր են, կամ այնպի ՚ի դիմագծեր, որոնք կարծես ուրիշ դէմք! Ի համար էին ստեղծուած և պատահաբար են կպել այս դէմքին, օր. չափազանց կարճ քիթ, չափազանց հաստ ծնօտ: Մի քանիսնեքի գլուխը չափազանց մեծ է, համեմատելով հասակին, միւսների թւերն ու ոտներն են չափազանց երկար: Պատահում է—փոքր գլուխ հաստ պարանոցի վրայ, կամ անհամաչափութիւն մի և նոյն մարմնամասի երկու կէսերի մէջ—քիթի մի կողմը աւելի կարճ է, քան միւսը, քիթի միջապատը ծուռն է, աչքերը զանազան գոյն ունին, կամ դրուած են անհամաչափ (չափազանց մեծ կամ փոքր) բների մէջ. ճրքան յաճախ են պատահում անհամաչա-

փութիւնն զանգոսկրերի ու կոնքի ոսկրերի մէջ»:

Ո՞րք չէ տեսել այնպիսի դէմքեր, որոնց մի կողմը միւսից աւելի երկար է ու չէ նմանում միւսին:

Այս բոլորը հետեանք է ժառանգականութեան այն օրէնքին, որով ծնողներից իւրաքանչիւրը կարող է իր յատկանիշներից իր որդուն տալ: Սակայն միշտ այսպէս չէ լինում:

Երբեմն զաւակներից մէկը կարող է պարզապէս ժառանգել միայն հօր կամ միայն մօր յատկանիշները ամբողջովին, առանց նուազման, կարծես միւս ծնողից ոչինչ ժառանգած չը լինի:

Օրինակ. բարակացաւոտ հօր մի աղջիկը հիւանդանում է այդ ցաւով, թէև մայրը բոլորովին առողջ եղած լինի, այն ինչ միւսը բոլորովին առողջ է մնում: Ուրեմն առաջինը ստացել է միմիայն հօր հիւանդական ժառանգութիւնը և մայրը նրան ոչինչ չէ տուել, այն ինչ երկրորդը ստացել է մօր առողջ ժառանգութիւնը, և հօր հիւանդական սաղմերը չեն զարգացել նրա մէջ:

Եւ, յիշաւի, երբեմն բաւական է, որ

ծնողներից մէկը հիւանդական մի որ և է  
յատկանիշ ունենայ, զաւակներից մէկը կամ  
մի քանիսները ամբողջովին կարող են ժա-  
ռանդել այդ հիւանդութիւնը, չը նայելով որ  
միւս ծնողը բոլորովին առողջ է:

Հետեւաբար հիւանդոտ տղամարդը ա-  
մուսնանալիս չը պէտք է մխիթարէ կամ  
արդարացնէ իրան նրանով, թէ իր ամուսի-  
նը առողջ է և ուրեմն սերունդն էլ առողջ  
կը լինի: Նա պէտք է հասկանայ, որ իր  
բոլոր որդիքը կարող են հիւանդոտ ծնուել:

Վայսամանը, իր հետազօտութիւնների  
հիման վրայ, ճշմարիտ է, եկել է այն եզ-  
րակացութեան, թէ ստացական յատկանիշ-  
ները չեն անցնում ժառանգաբար: Օրինակ,  
ստը կամ թևը կտրած մարդու որդին անտա-  
ու անթև չէ լինում, կամ կուրացածից կոյր  
չէ ծնում: Նա փորձեր է արել, կտրել է  
դաշտամկերի պոչերը, յետոյ սրանց ձագե-  
րինը, թռուներինը և այլն մինչև մի քանի  
սերունդներ, բայց դարձեալ նոր ծնողները  
պոչեր ունէին:

Այսպիսի փորձերի իսկի հարկ չը կար,  
ինչպէս իրաւացի նկատում է պրօֆ. Չիժը,  
քանի որ յայտնի են համանման դէպքեր

մարդկանց մէջ ևս. օրինակ. չը նայելով դարերի ընթացքում կատարուած թլփատման, հրէաները թլփատ չեն ծնուում:

Սակայն կասկած չը կայ, որ որոշ տեսակի հիւանդութիւններ (թէև նրանք ստացական լինեն և ոչ ժառանգական) կարող են փոխուել սերնդից սերունդ:

Մտանք այնպիսիներն են, որոնք հարուածում են մարդու ամբողջ կազմուածքը, եւ ոչ թէ մի անդամը կամ մի մասը:

Եթէ հայրը կտարուած ոտ ունի, կամ մի կոյր աչք, զաւակները այդ չեն ստանայ, որովհետև դրանք ընդհանուր հիւանդութիւններ չեն, այլ մարմնի մի մասի տկարութիւն են կամ արատ:

Ընդհակառակը, եթէ հայրը արբեցող է, կամ բարակացաւ ունի, այսինքն, երբ նրա ամբողջ օրգանիզմը թունաւորուած է ալկոհոլական կամ բարակացաւի թոյնով, այն ժամանակ ահագին հաւանականութիւն (եթէ ոչ հաւաստիութիւն) կայ, որ սերունդները հիւանդ կը լինեն:

Ուրեմն այս ժառանգականութեան թէօրիայով, ժառանգաբար անցնում են այն հիւանդութիւնների սաղմերը, որոնք հա-

բուածում են ծնողների ամբողջ կազմուածքը և ոչ թէ մի մասը:

Մի ուրիշ պայման ևս: Այս հիւանդութիւնները պիտք է երկարատեւ (хронический) լինեն: Սրբնթաց հիւանդութիւնները, որոնք նոյնպէս թունաւորում են ամբողջ կազմուածքը, բայց արագընթաց են, հետք չեն թողնում օրգանիզմի վրայ: Այսպիսիներն են բոլոր սուր-վարակիչ կոչուած հիւանդութիւնները (խօլերա, ժանտախտ, տիֆ, քութէշ, դիֆթերիա, կարմրուկ, ծաղիկ և ուրիշները):

Վարակիչ հիւանդաբեր թոյնը, մտնելով մարդու արեան մէջ, սոսկալի արագութեամբ ածում ու տարածում է ամբողջ մարմնի մէջ, թունաւորելով նրան. մարդս հիւանդանում է: Ապա մի քանի ժամանակից յետոյ (մի քանի օր կամ մի բանի շարքով) հիւանդը կամ մեռնում է, կամ թոյնը ոչնչանում է մարմնի մէջ, դուրս մղում, և հիւանդն առողջանում:

Այսպէս ամեն ինչ վերջանում է: Յարատեւ հիւանդութիւնների մէջ թոյնը, ընդհակառակը, կամաց-կամաց, երկար ամիսների ու տարիների ընթացքում, քանդում



է մարդուս կազմուածքը և հիւանդացնում  
է նրա բոլոր օրգանները: Եւ քանի որ ա-  
պագայ սերնդի սաղմերը իրանց մէջ պա-  
րունակում են ամբողջ կազմուածքից ստա-  
ցած հիւթեր, հետեւաբար իրանք էլ հի-  
ւանդոտ կը լինին: Այս թէօրիան փորձնա-  
կանապէս ապացուցուած է այսօր: Յայտնի  
գիտնականներ, Շարրէն և Գրէյ, ենթարկել  
էին արու և էգ ճագարներին զանազան հի-  
ւանդաբեր միկրոբների ազդեցութեան (գիֆ-  
թերիտի, բարակացաւի միկրօբների) և տե-  
սել էին, որ նրանց միաւորումը կամ անալը-  
տուղ էր մնում, կամ վիժումներ էր տալիս,  
կամ թէ չէ սատկած ձագեր էր տալիս: Իսկ  
եթէ ձագերը կենդանի էլ ծնւում էին, նրանք  
լինում էին վատասերուած, այսինքն թը-  
ղուկային (քիչ զարգացած), զանազան հրէ-  
շաւորութիւնների (անկանոն կազմի) տէր,  
կամ հիւանդ:

Այս երևելի փորձերը միանգամայն բա-  
ցատրում են, թէ ինչի հիւանդ ծնողների  
սերունդը վատասերւում է, թէ ինչի սիֆի-  
լիտտի, բարակացաւոտի, արբեցողի զաւակ-  
ները հիւանդ են լինում ու երկար չեն ապ-  
րում:

«Փառանգականութիւնը ներկայանում է մեր առաջ այսօր իբրև մի անհատականալի ճակատագրական ոյժ, որ ղեկավարում է մեր վիճակը, հակառակ մեր կամքին: Փառանգականութիւնը տուել է մարդկութեանը ամենամեծ բարիքներ և միևնոյն ժամանակ նաև անհամար չարիքների պատճառ է եղել: Խորհողի ու բժշկի ամենամեծ կոչումն է տիրապետել այդ ոյժը, հեռացնել նրա աւերիչ զօրութիւնը և դարձնել նրան դէպի մարդկութեան բարիքը: Այո, այս մի մեծ ոյժ է, եթէ լաւ ըմբռնուած է»:

Ինչ չի կարելի անել ժառանգականութեան մեծ օրէնքի ոյժով:

Անասնաբուծութեան մէջ այս օրէնքը ամենալայն գործադրութիւն է ստացել: Կամենում են լաւացնել մի որ և է կենդանու (խոզի, ոչխարի, հաւի և այլն) ցեղ, այսպէս կանեն:

Ընտրում են շատերի միջից մի զոյգ ամենալաւ անհատներ (էգ ու որձ) և աճեցնում: Սրանց ձագերի միջից նոյնպէս ընտրում են լաւագոյն մի զոյգ, աճեցում և այլն: Այսպիսով մի քանի սերունդներից յետոյ կը ստացուին ամենալաւ անհատներ: Այս

ընտրական ձևը արդէն զարմանալի հետեւանքներ է տուել Եւրոպայում անասնապահութեան գործում.—կազմուել են կամ ուղղակի ստեղծուել մի շարք նոր անասնական ցեղեր, օրինակ. ոչխարի այնպիսի ցեղ, որի բուրդը զարմանալի առատ է և երկար, մինչև գետին է հասնում; կամ ահագին գմակ ունի. խոզեր, որոնք համարեա ամբողջովին ճարպ են դարձած. բարակ, թեթև ձիեր, որոնք կարծես ստեղծուած են արշաւելու համար և այլն:

Մարդկային ցեղը այս տեսակէտից ոչքնչով չէ տարբերուում միւս կենդանիներից: Մարդիկ էլ յաջող ընտրութիւնով կարող են բարելաւել իրանց սերնդի առողջական վիճակը:

Յաղթանդամ ու գեղեցկատես տղան ու աղջիկը անտարակոյս կը տան ընտիր սերունդ, որ, նոյնպէս յաջող ամուսնութիւնների շնորհիւ աւելի ևս կազնուացնէ ցեղը և այլն:

Այս—ընտրովի ամուսնութեան առաւելութիւններն է:

Սակայն շատ չեն մեր մէջ այդպիսի միաւորութիւնները:

23.2.1917

Մեր երիտասարդներից շատերը, կամ չը հասկանալով ամուսնութեան վեհ նշանակութիւնը, կամ շլացած օժիտով և խոտտացուած հասարակական գիրքով, անուշադիր են մնում գէպի գիտութեան պահանջները, յանդգնում են զոհել ապագայ սերնդի բարօրութիւնը իրանց եսամոլութեանը:

Հիւանդ տղամարդը, որ կապուած է մի անմեղ արարածի հետ, մի հրէշ է, մի մեղապարտ, և ոչ մի գիտում չէ կարող արդարացնել այդպիսի մարդուն: Նա կրկնապատիկ յանցաւոր է, որովհետեւ ոչ միայն անբախտացնում է իր կնոջը, այլև ամբողջ սերունդներ: Մի ծնող, որ իր երեխային դցում է մի վատառողջ մարդու գիրկը, ուղղակի զոհ է բերում իր զաւակին և իր թոռներին:

Աւելի ևս զաղրալի են այդ մարդիկը, եթէ շարժառիթը շահասիրական է:

Յեղը որոշ դրոշմ ունի և սերունդները ծնւում են կնքուած այդ դրոշմով:

Արատը, հիւանդութիւնը անցնում են իսկօրէն կամ փոփոխուած, սաստկանալով կամ նուազելով, սերնդից սերունդ մինչև

ցեղի կատարեալ սպառումն կամ վերականգնումն:

Ծնողների արատը, հիւանդութիւնը ցեցեր են, որոնք ծծում են սերունդների առողջ հիւթերը ու կամաց-կամաց քանդում ամբողջ ցեղի օրգանիզմը:

Հիւանդ ծնողը, որ դիտակցաբար ամուսնանում է, մի յանցաւոր է և չարագործ թէ իր ամուսնու, թէ իր սերնդի առաջ:

Շատ դժբախտ արարածներ, յղացած ու ծնած հիւանդութեան մէջ, ամեն իրաւունքով կ'անիծեն իրանց ծնած վայրկեանը, իրաւունք կ'ունենան մէկ օր, տանջանքից յուսահատուած, այսպէս խօսել իրանց ծրնողներին. «Ի՞նչ կուրացաք փոխադարձաբար. դու, հայր—մօրս օժիտով, իսկ դու, մայր—հօրս հասարակական դիրքով, և չը մտածեցիր, որ անարժան էք ամուսնանալու և ծնող դառնալու: Ի՞նչ ամենազազրելի եսամոլներ էք և չարագործներ, աւելի անողորմ, քան բոլոր եսամոլները, և աւելի անդուլթ, քան աշխարհիս բոլոր չարագործները»:

Տեսնենք, թէ որոնք են ժառանգաբար անցնող հիւանդութիւնները: Սրանք սակաւաթիւ չեն: Մենք կը թուենք միայն կարևորագոյնները.

1. Սիֆիլիս.
2. Տուբերկուլոզ (բարակացաւ) և խուլախտ (զօլօտուխտ).
3. Ներվային զանազան հիւանդութիւններ.
4. Ալկօհօլիզմ:
5. Ռախիտիզմ կամ անգլիական հիւանդութիւն:
6. <sup>սպառնալից</sup> Խլիբզ (քաբէ) և ուրիշները:

Այս հիւանդութիւնները չեն բաւականանում անհատին հարուածելով, այլ իրանց աւերիչ ներգործութիւնը անց են կացնում սերունդների վրայ ևս:

Մենք կ'աշխատենք բացատրել մի առ մի նրանց խաղացած դերը ամուսնական կեանքի մէջ:

Մենք յաւակնութիւն չունենք կարծելու, թէ այս փոքրիկ էտիւդը պիտի փրկէ մեր ազգը սպառնացող և արդէն տեղ-տեղ յայտնուած վատասեռման վտանգից: Ո՛չ, մեր բաղձանքը կատարուած կը լինէր, եթէ

կարողանայինք համոզել գոնէ մի քանի ազնիւ երիտասարդների, որ նրանք ազնուաբար վերաբերուեն դէպի ամուսնութեան սրբազան ակտը, որ չը վաճառեն իրանց խիղճը: Մենք երջանիկ կը լինենք, եթէ կարող լինենք համոզել մի քանի ծնողների, չը շլանալ փեսացուի գիրքով ու հարստութիւնով և չը ծախել իրանց զաւակներին:

Այս ձևով միայն հնարաւոր է երջանկութիւնը ամուսնութեան մէջ:

Մենք համոզուած ենք, որ շատերը անգիտակցաբար են վատ պսակներ անում և իրանց ձեռով իրանց անբախտացնում:

Նրանք մի արդարացումն ունեն, այն է — որ «ոչ գիտեն թէ զինչ գործեն»:

Եւ, յիրաւի, շատերը չեն հասկանում իրանց վարմունքի ահագին ըիսկը:

— «Ի՞նչ կայ, թէ մի քանի տարի առաջ սիֆիլիս եմ ունեցել. հօ բժշկուել եմ»:

— «Ի՞նչ փնաս իմ ընտանիքին, թէ մայրս թոքախտից է մեռել. ես հօ առողջ եմ»:

— «Ի՞նչ անենք, թէ ես արբեցող եմ ու արբեցողի որդի. այլ ևս չեմ խմի, պըրծաւ գնաց»:

Այսպէս են դատում շատերը:

Բայց այդպէս խօսողները չեն հասկա-  
նում, որ ոչինչ չէ կորչում բնութեան մէջ,  
որ սաղմի մէջ գումարուած են նախնիների  
յատկանիշները: Չը գիտեն, որ նորածին  
օրգանիզմը մի հայելի է, որի մէջ անդրա-  
դառնում են պապերի ու ծնողների պատ-  
կերները:

Այո՛, ցաւակցաբար ոչինչ չէ խուսափում  
անողորմ ժառանգականութիւնից: Չը կայ մի  
յատկութիւն, Ֆիզիկական լինի նա թէ բա-  
րոյական, որի մասին հաւաստի լինէին, թէ  
չի անցնի դաւակներին: Ծանր է և սպառ-  
նալից այս օրէնքը ու խորհել է տալիս մեզ:

Մենք ուզում ենք պարզել ամուսնացո-  
ղի պատասխանատուութիւնը սերնդի առաջ:

Բժիշկը երբեմն ստիպուած է շօշափել  
շատ փափուկ խնդիրներ, ինչպէս ասում են  
— ետ քաշել ալկովի \*) վարագոյրները:

Կար ժամանակ, երբ անվայել բան էր  
համարւում խօսել վեներական ախտերի մա-  
սին, սեռական կեանքի, նոյն-իսկ ծննդա-  
բերութեան մասին:

\*) Ննջարանի խորշը, ուր դրուած է մահճակալը:



Չարմանալի լօգիկա էր այդ:

Մարդիկ զգում էին այս խնդիրների մեծագոյն կարևորութիւնը, հասկանում էին, որ տգիտութիւնը մայր է ամեն տեսակ չարիքի, գիտէին, որ վտանգից ազատուելու միակ միջոցը զգուշացումն է:

Ի՞նչպէս պաշտպանի մարդ իրան վատ ցաւից, եթէ չը գիտէ թէ ինչ է նրա իսկութիւնը, ինչ են նշանները, ինչպէս է անցնում նա մէկից միւսին: Ի՞նչպէս կարող է յղի կինը զգուշանալ յղութեան ու ծննդկանութեան բազմաթիւ վտանգներից, եթէ չը հասկացնենք նրան, թէ ինչ են այդ մեծակտերը և ինչպէս պիտի պահպանէ կինը իրան այդ ծանր ժամանակամիջոցում:

Ո՛չ, գիտութեան մէջ ոչինչ ամօթալի բան չկայ:

Այդ հասկացել են արդէն ամենքը և բարբերախտաբար այլ ևս ոչ ոքի ամօթխածութիւնը չէ հարուածւում բժշկական տեղեկութիւններ կարգալով:

Անցած դարի յատկանիշներից մէկն էլ գիտութիւնների և մասնաւորապէս բժշկական-առողջապահական գիտութիւնների ժողովրդականացումն է: Բժշկականութիւնը

||  
Արամ  
T.T.

դուրս է եկել իր քրմական խորհրդաւոր  
չրջանից և դառել է ժողովրդի սեփականու-  
թիւն:

Դէն գցենք ուրեմն կեղծ ամօթխածու-  
թիւնը և խօսենք ժողովրդի հետ պարզ  
լեզուով նրա օգտի համար, համոզուած լի-  
նելով, որ միայն լոյսը կարող է հալածել  
խաւարը:

Սրա մէջն է հասարակութեան փրկու-  
թիւնը:

---

## VIII

### ՍԻՖԻԼԻՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Սիբիլիսով վարակուելու ձևերը.—Սիբիլիսի արտա-  
յայտութիւնները.—Նրա խաղացած դերը ամուսնու-  
րեան մէջ.—Հիւանդին—իբան սպառնացող վտանգը.  
—Ընտանիքին սպառնացող վտանգը.—Սիբիլիսի ազ-  
դեցութիւնը ժառանգների վրայ (վիժումն, երեխա-  
ների մահանումն).—Ժառանգական սիբիլիսի արա-  
տար երևոյթները.—Վաստատումն ու նրա նշան-  
ները.—Սիբիլիսի ազդեցութիւնը երկրորդ սերնդի  
վրայ.—Սիբիլիս ունեցողը կարո՞ղ է ամուսնանալ եւ  
ի՞նչ պայմաններում.—Փուրնիէի հինգ պայմանները.  
—Սիբիլիսը բուժելի հիւանդութիւն է.—Ռժեկուրեան  
փրկարար ազդեցութիւնը.—Ռժեկի դերը ամուսնու-  
րեան խնդրի մէջ:

Այն ախարը, որ ամեն ազգեր կնքել են  
վաս ցաւ անունով, վերակալան հիւանդու-  
թիւններից ամենասարսափելին է թէ իր  
հիւանդական երևոյթների ծանրութիւնով,  
թէ ժառանգականութեան ոյժով:

Սա մի վերին աստիճանի հեշտ վարա-

կիչ հիւանդութիւն է, որ անցնում է հիւանդից առողջին կամ անմիջապէս, կամ մի ուր եւ է առարկայի միջոցով, որի վրայ ընկած է վարակիչ թոյնը:

Վարակման ամենալայն ճանապարհը— մտերիմ սիրային յարաբերութիւններն են կնոջ ու տղամարդու մէջ, այս պատճառով էլ նրանք կոչւում են վեներական (Վեներա—սիրոյ չաստուածուհու անունով): Բայց սակաւ չեն և կողմնակի, անմեղ կերպով վարակուելու միջոցներ:

Սիֆիլիսի արտայայտութիւնները բազմաթիւ ու բազմատեսակ են: Ամենքից վտանգաւոր արտայայտութիւնները, վարակման տեսակէտից, սիֆիլիսական խոցերն են, ջրջրուկները. որովհետեւ սրանցից արտադրուած հեղուկի մէջն է գտնւում սիֆիլիսի վարակիչ թոյնը:

Այսպիսի խոցեր և ջրջրուկներ գտնւում են բերանի մէջ, պռօշների, լեզուի վրայ, յետոյ շէքում, սրբանի շուրջը և այլն:

Այս պատճառով էլ սիֆիլիսը յաճախ փոխւում է հիւանդից առողջին համբոյրի միջով, կամ երբ մի և նոյն բաժակով են խումնւմ, կամ սիֆիլիսոտի գործածած թաշկի-

նակով ու երեսարբիչով սրբւում և այլն։ Սափ-  
րիչները վարակուած ածելիով կտրում են  
առողջ մարդուն ածիլելիս ու թոյնը լցնում  
նրա արեան մէջ, կամ բազանիքներում ա-  
ռողջ մարդը նստում է մի նստարանի վրայ,  
որի վրայ իրանից առաջ մի սիֆիլիսոտ էր  
նստած, և վարակւում է։

Այս և սրանց նման շատ դէպքեր կարող  
են յաճախ պատահել և տարածել սիֆիլիսը  
անդգոյշ մարդկանց վրայ, որոնք կը տանեն  
այդ ցաւը իրանց ընտանիքի մէջ ու կը հի-  
ւանդացնեն իրանց կանանց, երեխաներին  
և այլն։

Յաճախ վարակումն սկսւում է ծծի  
երեխայից, որին հիւանդացնում է ծծմայ-  
րը կամ դայեակը, երեխան վարակում է  
մօրը, մայրը—հօրը և այլն։

Սիֆիլիսով վարակուելու ճանապարհ-  
ները անթիւ են. ծառաները, հիւրերը,  
լուացարարները, խանութից գնած խաղա-  
լիքները, նոյն-իսկ գրքերը և այլն կարող  
են իրանց հետ թոյն մտցնել ընտանիքի մէջ։

Այս ձևով է, որ մի բանուոր, երբ այդ  
հիւանդութիւնն ստանում է քաղաքում, կա-

րող է, վերադառնալով իր գիւղը, կարճ ժամանակում վարակել ամբողջ գիւղը:

Ահա թէ ինչ է այս ցաւի վարակիչ ոյժը:

Հայերի մէջ ևս արագ տարածւում է այդ ախտը, շնորհիւ այն կեանքին, որ վարում են հազարաւոր պանդուխտ բանուորներ արգիւնաբեր քաղաքներում (Բագու, Բաթում, Թիֆլիս): Սրանք հիւանդանում են քաղաքներում, և վերադառնալով հայրենիք, տանում են մտցնում ցաւը իրանց ընտանիքի մէջ: Հիւանդանում են նոյնպէս վաճառականները Ռուսաստանի քաղաքներում, հիւանդանում են ուսանողները, հիւանդանում են անառակ կեանք վարողները: Մի մեծ սարսափելի հոսանք է սկսուել, հոսանք, որ բացի նրանից, որ պղծում է հայ անարատ ընտանիքը, նաև սպառնում է սերհատել ազգը:

Անկարելի է թուել այստեղ մի առ մի այն բոլոր աւերումները, որ սիֆիլիսը կատարում է մարդուս մարմնի մէջ: Հիւանդանում է մաշկը, որի վրայ դուրս է տալիս զանազան ցաւեր, յուզաթաղանթները (բերանի, քթի, բզի, նրբանի), որոնց վրայ երևում են խոցեր, ջրջրուկներ. յետոյ հա-

բուածուում են ոսկրները (օր. ըթի ոսկրները) բոլոր ներքին գործարանները, ուղեղն ու ողնուղեղը: Միֆլիսը կարող է կուրացնել, քառացնել, անդամալոյծ դարձնել, կաթուածահարել հիւանդին: Չը կայ ոչ մի մարմնամասն, որ ազատ մնար սիֆիլիսի աւերիչ զօրութիւնից:

Մի խօսքով նա քայքայում է հիւանդի ամբողջ կազմուածքը և առաջացնում է հարիւր տեսակ հիւանդութիւններ, որոնք եթէ լաւ բուժուած չեն եղած, կարող են տանել անխուսափելի կերպով դէպի մահ:

Մենք ծանօթացանք այս ախտի իսկութեան հետ:

Այժմ խօսենք այն դերի մասին, որ նա կատարում է ամուսնութեան մէջ:

Մի մեծ մասնագէտ, որի անունը հռչակուած է դիտութեան մէջ և որ սիֆիլիսի վերաբերեալ խնդիրներում միանդամայն հեղինակութիւն է, Պարիզի պրօֆ. Փուրնիէն, մի շարք հատորներ ունի դրած այս հիւանդութեան մասին, և նրանց մէջ շօշափել է նաև ամուսնութեան խնդիրը:

Մենք ընդարձակօրէն օգտուում ենք

այստեղ նրա ահագին փորձնականութիւնից  
և զարմանալի լուրջ հայեացքներից:

Սիֆիլիսոտ մարդը, մտնելով ամուսնա-  
կան լծի տակ, մի ահագին պատասխանա-  
տըւութիւն է յանձն առնում թէ իր կնոջ  
և թէ իր սերնդի առաջ:

Ըստ Փուրնիէի, ամեն սիֆիլիսոտ, մա-  
նաւանդ ու գլխաւորապէս այնպիսիները,  
որոնք վատ են բժշկուել կամ բոլորովին չեն  
բժշկուել թէ հիւանդութեան լրջութիւնը  
չը հասկանալով, թէ ուղղակի ոչինչ նկատած  
չը լինելով, այդպիսիները չը պէտք է վստա-  
հանան ամուսնանալու մինչև այն ժամանակ,  
երբ խուսափած կը լինեն իրանց անձին  
սպառնացող վսանգից, եւ թէ իրանք կը դա-  
դարեն վսանգաւոր լինելուց կնոջը, սերնդին,  
հասարակութեանը:

Բացատրենք այս չորս կէտերը մի  
առ մի.

Ա. Հիւանդին իրան սպառնացող վը-  
սանգը:

Սիֆիլիսի երրորդական երեւոյթները \*)

---

\*) Սիֆիլիսը երեք շրջան ունի.

Առաջին շրջանի երեւոյթը միակ է, այն է—



չափազանց յաճախ պատահում են այն ան-  
ձանց, որոնք անբաւարար կերպով են բժըշ-  
կւում,— և ընդհակառակը նրանք հազուա-  
գիւտ են այն անձանց վրայ, որոնք չեն են

---

սիֆիլիսական խոցը, որ դուրս է գալիս մարմնի աչն կէ-  
տում, որտեղ թոյնն է դիպել:

Այս առաջին արտայայտութիւնից յետոյ մի երկու  
կամ անելի ամիս անց, երևում են զանազան ցաներ կամ  
դուրս ետուածներ մաշկի և չուղաթաղանթների վրայ  
(բերանի մէջ, լեզուի վրայ, բզի, քթի մէջ): Սրանք  
զանազան կեղեր են, բծեր, կամ ջրջրուկներ և կազմում են  
Երկրորդ օրջանը: Այս բոլոր երևոյթները կարճ թէ եր-  
կար միջոցում անցնում են առանց որ և է հետքի, որով-  
հետև նրանք մակերեսութեան են և չեն վնասում նշա-  
նաւոր գործարանները: Առաջին և երկրորդ շրջանների  
միւս լատկանիչն աչն է, որ նրանք վարակիչ են.— այս  
բոլոր խոցերի, ջրջրուկների հեղուկը (արտադրութիւնը)  
ընկնելով մի ուրիշի չուղաթաղանթի կամ մաշկի վրայ  
(եթէ մի ամենամանշան քերծուածք կամ ճեղքուածք  
անգամ կայ), փոխադրում է նրա վրայ վարակիչ թոյնը:

Յրորդ օրջանում հիւանդութիւնը անելի խոր է  
հարուածում մարդուն, վնասում է նրա ամենանուրբ և ամե-  
նակարևոր օրգանները (օր. ուղե դը, ողնաշարը, ոսկրները,  
ներքին գործարանները և այլն), առաջացնելով հարիւր  
տեսակ հիւանդութիւններ, որոնցից շատերը անբուժելի են  
և յաճախ սպանում են հիւանդին. (կաթուած, ողնուղեղի  
լատաջգնաց լարատե բորբոքումն (որից անդամալուծու-  
թիւն), ընդհանուր պարալիչ, խելագարութիւն և այլն և  
այլն):

Այս երրորդ օրջանում երևոյթները վարակիչ չեն:  
Տե՛ս իմ «Սիֆիլիս» գիրքը:

Թարկուած սիստեմական և երկար բժշկութեան:

Թէ որչափ յաճախ են պատահում երրորդական երևոյթները, այդ մասին զարմանալի պերճախօս է Ֆուրնիէի վիճակագրութիւնը:

Նա գիտել է երրորդական սիֆիլիսի 4800 դէպք, որոնք դասաւորուած են հետևեալ կերպով.

Ուղեղային, ողնուղեղային և ներվային սիֆիլիս (ուղեղի ողնուղեղի և ներվերի հիւանդութիւններ, սիֆիլիսից առաջացած) . . . . . 1857 դէպք.

Մաշկի հիւանդութիւններ 1451 »

Ոսկրների . . . . . 519 »

Ֆիթի, բերանի, բզի, լեզուի սիֆիլիս . . . . . 860 »

Մնացածը ուրիշ գործարանների և մարմնամասերի սիֆիլիսն է: Աչքի է ընկնում ներվային հիւանդութիւնների սոսկալի թիւը: Այս պատճառով սիֆիլիսը համարոււմ է ներվային սիստեմի թոյն, և սկզբնապատճառ ներվային հիւանդութիւնների մեծագոյն մասի:

Կարելի է վստահ ասել, որ ուղեղի սիֆիլիսը ամենասարսափելին է, որովհետև առաջացնում է անդամալուծութիւն, կուրութիւն, խլութիւն, ընկնաւորութիւն, խելագարութիւն, մահ:

Ուղեղային սիֆիլիսը ամենից վտանգաւորն է, և մեծ մասամբ անբուժելի: Այսպէս, 100 հիւանդից Ֆուրնիէն կարողացել է բժշկել միմիայն 22-ին, 19-ը մեռել են, իսկ 59-ը թէև ապրում են, բայց անբուժելի արատներով.— թևերի, ստերի լուծութիւն (параличь), կամ խելպակասումն և այլն,— որ մահուան չափ ծանր են:

Ամեն սիֆիլիսոտ, որ միտքն է դրել ամուսնանալ, պիտի լուրջ կերպով մտածի այդ խնդրի վրայ, իմանայ, որ փրկութիւնը բժշկութեան մէջ է և որ, եթէ չը բժշկուի կամ բժշկութիւնը անբաւարար լինի, նա ապագայում կը դգայ հիւանդութեան սոսկալի ոյժը:

Ահա մի երիտասարդ. նա ամուսնանում է, առանց կանոնաւոր կերպով բժշկուած լինելու. վեց ամսից յետոյ յանկարծ վրայ է գալիս մի որ և ուղեղային հիւանդութիւն, և նա մեռնում է, թողնելով իր

կնոջն ու փոքրիկ երեխային սոսկալի գրութեան մէջ:

Մի յայտնի նկարիչ, որ իր սիֆիլիսը բողբոջովին անբժշկել էր թողել, ամուսնանում է և մի երեխայ է ունենում: Մի քանի տարուց յետոյ սկսւում է դէմքի սիֆիլիս, որ նա նոյնպէս չէ բժշկում: խոցերը ուտում են դէմքը, քրքրում-ոչնչացնում են քիթն ու վերին շրթունքը, մտնում են քթածակերը, կրծում են ներսի ոսկրները, քիւմքը, բուզը և այլն: Այս ողորմելի մարդը ուղղակի մի զազրելի ու զզուելի հրէշ է դառնում, որ սոսկումն ու զայրոյթ է յարուցանում ամենքի մէջ: Այսպէս նա քարշ է տալիս մի քանի տարի էլ իր ողորմելի գոյութիւնը, Աստուծուց մահ խնդրելով:

Մի ուրիշ նկարիչ, մեծ տաղանդի և մեծ ապագայի տէր, ամուսնանում է լաւ չը բժշկուած: Սկզբում ամեն բան յաջող է գնում, նա հարստանում է և մի որդի է ծնում: Բայց երկար չէ վայելում այս բախտը. նա կուրանում է: Հետեանքը—ընտանիքի սնանկանալն ու կատարեալ անբախտանալը:

Մի երիտասարդ, որ հակառակ Ֆուր-

նիէի կամքին, ամուսնանում է, սրակից հաղիւ երկու օր անց, մի սաստիկ կարկամումն է ունենում (ընկնաւորութիւն), յետոյ շուտով վրայ են գալիս ուրիշ ուղեղային երեւոյթներ, կաթուած, խելացնորութիւն և մահ:

Այսպիսի դէպքեր շատ կան գրականութեան մէջ: Բաւականանաք այս մի քանիսով, որ քաղում ենք Պուրնիէի գրքից \*):

Բ. Ընտանիքին սպառնացող վտանգը:

Ամենից առաջ ի հարկէ վարակւում է կինը:

Այսպէս, երկու ամուսիններն էլ սիֆիլիստա են. ինչ կը լինի սրանց սերունդը: Խօսելով ժառանգականութեան մասին, մենք ասել ենք, որ եթէ երկու ծնողներն ևս նոյն հիւանդութիւնից ունեն, նրանց զաւակը շատ աւելի շնս ունի նոյն հիւանդութիւնն ստանալու, քան եթէ ծնողներից մէկն է միայն հիւանդ: Սիֆիլիսում այս կանոնը ակներև է, և այն երեխաներն են ամենից յաճախ սիֆիլիստա ծնւում ու սիֆիլիսի վա-

\*) Syphilis et Mariage, Fournier.

տագոյն ձևն ստանում, որոնց երկու ծնողներն էլ հիւանդ են:

Ի՞նչ սոսկալի ոճիր—զգալ, որ ինքը վարակիչ հիւանդութիւն ունի, հասկանալ, որ կարող է այդ ցաւը տալ կնոջը, և այնուամենայնիւ ամուսնանալ:

Մի անմեղ երեխայ սիրում և հաւատում է երիտասարդին, նետում է իրան նրա գիրկը, բերում է նրան անմեղութեան հետ միասին թարմութիւն և առողջութիւն: Եւ սիֆիլիստաը մի ժամուայ մէջ ընդ միշտ անբախտացնում է այս երեխային, և նրա առաջին համբոյրը պղծում է աղջկայ մաքուր արիւնը իր սոսկալի թոյնով:

Ի՞նչ կայ աւելի դարշելի և աւելի սոսկալի քան այդ մարդը:

Տեսէք թէ ի՞նչ է պատմում նոյն Փուրնիէն.

«Մի քանի տարի առաջ, ինձ պատահեց տեսնել մի սոսկալի տեսարան. մի կին, որին վարակել էր նրա ամուսինը, դառել էր մի կատարեալ հրէշ: Դէմքը, կամ այն, ինչ որ մի ժամանակ դէմք էր եղել՝ այլանդակուած էր, փոս ընկած, կամ պարանոցի նման ձգձգուած սպիներով: Քիթից ոչ մի

հետք չէր մնացած. նրա տեղ երևում էր մի մութ փոս, ինչպէս մեռելի գանգի վրայ»:

Եւ քանի-քանի այսպիսի դէպքեր, անպաշտպան զոհեր. սրիկայութեան, տխմարութեան կամ շահամոլութեան զոհեր:

Հիմա հարցնում ենք. ինչ կարող է լինել այսպիսի ընտանիքի կեանքը. որչափ ատելութիւն ու դայրոյթ պիտի զգայ կինը դէպի իր այրը, որ այդպէս անխնայ կերպով քանդել է նրա գոյութիւնը:

Կորչում է սէրն ու յարգանքը, ընտանիքը դառնում է դժոխք երկուսի համար ևս ու համակեցութիւնը ամեն ինչի տանջանք:

Գ. Սիֆիլիսի ազդեցութիւնը ժառանգւնի վրայ:

Սիֆիլիսի ամենամեծ վտանգը՝ սերունդների վրայ ունեցած ազդեցութիւնն է:

«Մի բառ միայն կայ այդ ազդեցութիւնը ընտրուելու համար, — այդ սարսափելի բառն է», ասում Ֆուրնիէն:

Ի հարկէ (դարձեալ ասենք), այս ամենը վերաբերում է չը բժշկուած կամ վատ ու կարճ ժամանակ բժշկուած սիֆիլիսին:

Լաւ խնամուած սիֆիլիսը կարող է  
սալ բոլորովին առողջ սերունդ:

Տեսնենք հիմի, թէ ինչպէս է արտա-  
յայտուած սիֆիլիսի ազդեցութիւնը ժա-  
ռանգների վրայ:

Ամենից առաջ յիշենք վիժումները:

Սիֆիլիսով հիւանդ, կամ սիֆիլիսոտ  
ամուսին ունեցող կլինը (ինքը կարող է վա-  
րակուած չը լինել) յաճախ վիժում է ար-  
գանդի պատուղը: Այս վիժումները առհասա-  
րակ կրկնուում են մի քանի անգամ: Մի կլին  
կարող է վիժել հինգ, վեց, տասը և աւելի  
անգամ: Ընդհանրապէս, երբ մի կլին մի  
քանի վիժումներ է ունենում, հաւանական է,  
որ ընտանիքի մէջ սիֆիլիս կայ:

Եթէ կլինը չէ վիժում, նա ծնում է  
յաճախ կամ արդէն մեռած երեխայ, կամ  
հիւանդ, որ երկար չի ապրելու:

Շատ սիֆիլիսոտ ընտանիքներում բոլոր  
երեխաները մեռնում են և ջեղը սպառուում  
է. այսպիսի դէպքեր գիտութեան մէջ հա-  
րիւրներով են յիշուած:

Նզել են դէպքեր, երբ ութ, տասը,  
տասնըմէկ երեխաներից ոչ մէկը կենդանի  
չէ մնացել:



Ֆուրնիէն յիշում է 90 կանանց պատմութիւնը, որոնք սիֆիլիս էին ստացել իրանց ամուսիններից: Տեսէք, թէ ինչ է եղել դրանց սերունդը: Այդ կանանցից 50-ը վիժել կամ ծնել են մեռած երեխաներ, 38-ը ծնել են կենդանի երեխաներ, որոնք շատ շուտով ամենքն էլ մեռել են, և միայն երկուսի զաւակներն են կենդանի մնացել:

Ահա թէ ի՞նչ է ժառանգական սիֆիլիսի կործանիչ զօրութիւնը:

Սա մի սոսկալի կոտորած է:

Սակայն բոլոր երեխաները չեն կոտորւում: մի քանիսն ապրում են: Այստեղ մեծ դեր են խաղում մի քանի ֆակտորներ.— ծնողների սիֆիլիսի հասակը, ծնողներից հայրն է հիւանդ, թէ մայրը, թէ երկուսն էլ. բժշկութիւնը և այլն:

Գ. Սիֆիլիսական ժառանգական վասսետումն կամ արասաւորումն:

Մենք ասացինք, որ սիֆիլիսոտաների երեխաները կարող են իրանք ևս սիֆիլիսոտա ծնուել. ուրիշ խօսքով. նրանք կը ներկայացնեն նոյն երևոյթները, ինչ որ ծնողները,

այսինքն երկրորդական և երրորդական սիֆիլիսի նշաններ:

Բայց երեխան կարող է և չը կրել իր վրայ իսկական սիֆիլիսի երևոյթներ, և այնու ամենայնիւ հիւանդոտ, արատաւոր լինել:

Եթէ սիֆիլիսոտի երեխան չէ մահանում մօր արգանդի մէջ, կամ չէ ծնւում մեռած, այլ աշխարհ է գալիս առերես առողջ, այդ դեռ չէ նշանակում: Թէ նա զերծ է ծնողների ախտի ազդեցութիւնից: Ընդհակառակը, այդպիսին յաճախ կրում է իր մէջ վատ ցաւի հետքերը, որոնք և կազմում են ժառանգական սիֆիլիսի արտաներնու ակերումներ:

«Այս արատաւոր երևոյթները, ասում է Փուլընիէն, որոնք հարիւր ձևեր են ստանում, համարեա բոլորը առաջ են գալիս կազմուածքի աճման շեղումներից, որոնց հետեանքն է գործարանների անկանոն կազմութիւնը, բնորոշ գծերի, ախլի վրիպումներ բնականից, մինչև անգամ հրէշութիւններ:

Այստեղից է զաւակի կենսականութեան և դիմացկոտութեան նուազումն. այստեղից

է նրա ֆիզիկական ու բարոյական նուաստութիւնը (որ ի հարկէ զանազան աստիճանի է լինում), համեմատելով առողջ ծնողների զաւակներին հետ, որոնք աւելի լաւ են օժտուած բնութիւնից և աւելի պատրաստուած են կեանքի կռուի համար. մի խօսքով, այստեղից է ճանապարհը դէպի այլասնումն:

Անհնար է այսպիսի մի փոքրիկ տեսութեան մէջ նկարագրել այն ահագին քանակութեամբ արատաւոր և հիւանդական երեւոյթները, որոնք նկատուում են սիֆիլիսական սերունդների վրայ:

Կը թուենք գլխաւորները միայն:

Պրօֆ. Ֆուրնիէի հետ մենք այս արատաւորութիւնը կը բաժանենք երեք կարգի.

1. Այնպիսիներ, որոնք հարուածում են մի որ և է օրգան, մի որ և է մարմնամասն.

2. Այնպիսիներ, որոնք արտայայտուում են անհատի ամբողջ կազմի մէջ.

3. Այնպիսիներ, որոնք կազմում են իսկական հրէշութիւններ:

Առաջին կարգի պատկանող ժառանգական—սիֆիլիսական արատաւորութիւնները

հետևեալներն են (գլխաւորները), — գանգի անկանոնութիւններ (չափազանց մեծ, անհարթ, երկու կէտերն անհամաչափ գլուխներ, փոքրագլխութիւն, ջրգողագլխութիւն), ատամների, ծնօտների արտաւորութիւններ, բթի, աչքերի, ականջների, ողնաշարի անկանոն կազմութիւն, կորութիւն:

Յետոյ անկանոն կազմութիւն և անկանոն աճումն ընդհանրապէս զանազան մարմնամասերի. օր. անդամների (չափազանց երկար ու չափազանց կարճ ոտներ ու ձեռներ), բազմամատութիւն, կպած մատներ, ոտների, ձեռների ծռումներ: Ուղեղի կողմից նկատուում է ընդունակութիւնների անբաւարար զարգացումն, կամ նրանց չեղումները, խուլ-համբութիւն: Զանազան վտանգալից անկանոնութիւններ նոյնպէս և երակների, սրտի, սեռական գործարանների մէջ:

Երրորդ կարգի արտաւորութիւնները հարուածում են անհատի ամբողջ կազմը և տանում նրան դէպի վասասեռումն:

Ժառանգական սիֆիլիսը արտադրում է վատոյժ, կծկուած, նիհար, մանր երեխաներ, որոնք այնչափ նուազ են, որ ճշալու ու ծծելու անգամ անընդունակ են: Սրանք

նորածին ծերունիներ են գէմբով, ամբողջ օրգանիզմի սպառումով, և նրանց օրերը համարուած են: Կամ երեխան ծնւում է համարեա առողջ, բայց բերում է իր հետ սրամաղբութիւն գէպի ամեն տեսակ հիւանդութիւններ, զրկուած լինելով կենսականութիւնից եւ դիմացկոսութիւնից: Սրանք առհասարակ նրբակազմ են լինում, քիչ զարգացած մկաններով, չափազանց հեշտ տկարանում են ու հիւանդանում: Սրանց փուխը կազմուածքը չէ գիմանում թեթեւ հիւանդութիւններին անգամ:

Զարմանալի յաճախ նկատուում է նրանց մէջ րախիսիզմ (ոսկրների անկանոն զարգացումն և հիւանդական կազմը), որ արտայայտուում է մեծ և ուռուցիկ (bosselé) գլխով, կոր և ծռուած ողնաշարով, նոյնպիսի կոնքով:

Շատերը երկար են ապրում, մնալով միշտ մի տեսակ դեռահաս դրութեան մէջ. նրանց ֆիզիկական զարգացումն առաջ չէ գնում. մնում են միշտ փոքրահասակ, կրճկուած, ձեռներն ու սոսները նուազ ու բարակ, յաւիտեան երեխայ:

Շատ ուրիշ ձևեր են ընդունում ժա-

ուանդական սիֆիլիսից առաջացած արատաւորութիւնները:

Քանի-քանի ողորմելի թուլամիտներ, նեվրոզաթներ, ներվայիններ, հիստերիկներ, մոլիներ, ապուշներ, ընկնաւորներ, կոյրեր ու խուլուհամբեր, դաճաճներ ու խուլախտաւորներ, բարակացաւոտներ ու թոքախտաւորներ իրանց անբախտութիւնով ծնողներին են պարտական: Հազարներով, տասն հազարներով քարշ են տալիս սրանք իրանց չարքաշ կեանքը, միշտ աւելի ցած մնալով ուրիշներից, աւելի usnr թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս, աւելի դժբախտ ճակատագրի ոյժով, անընդունակ կեանքի կռուի, հազիւ վստահանալով ապրելու ցանկութիւն անգամ յայտնելու, ամաչելով իրանց հրէշութիւնից, իրանց ահագին գլխից, որ լղար վիզը հազիւ է կարողանում կրել իր վրայ և կզացած մէջքից, ընկճուած ու տրորուած ուժեղների ոտների տակ:

Եւ այս բոլորը թէօրիաներ չեն, այլ վերցուած են կեանքից:

Ահա հարիւրների միջից մի օրինակ գէպք Պր. Տարնովսկու.

27 տարեկան մի մարդ սիֆիլիս է ստանում և այնու ամենայնիւ ամուսնանում է վեց տարուց յետոյ, գրեթէ առանց բժշկուելու: Կինը մնում է առողջ, և 11 անգամ յղանում է:

1-ին յղութիւն. երեխան կարկամումներ ունի, 11 ամսական մեռնում է ուղեղի բորբոքումից:

2-դ յղութիւն. երեխան կենդանի է, բայց ընկնաւոր:

3-դ յղութիւն. երեխան շատ դանդաղ է աճում, միջակ խելքի տէր մի աղջիկ է. ամուսնանում է 18 տ. և ծնում է երկու զաւակ, որոնք երկուսն էլ մեռնում են շուտով. մէկը կարկամումներից, միւսը գլխի ջրգոցութիւնից:

4-դ յղ. երեխան հիստերիկ ու քախիտիկ:

5-դ յղ. երեխան առողջ է մինչև հիմա:

6-դ յղ. երեխան շատ դանդաղ է աճում. 12 տարեկան հազիւ կարողանում է գրել-կարդալ սովորել. մնում է երեխանման, 19 տ. ինքնասպանութիւն:

7-դ յղ. երեխան մեռնում է ուղեղի բորբոքումից 22 ամսական:

8-դ յղ. երեխան քիչ զարգացած է. 6 տարեկան դեռ չը դառած, բոլոր ատամները թափւում են:

9-դ յղ. վիժումն եօթերորդ ամսին:

10-դ յդ. վիժումն երբորդ ամսին:

11-դ յդ. երեխան ծնւում է անժամանակ-  
գանգը անկանոն, ատամները վատ, ականջ-  
ները ցից և ցած, ներքեի ծնօտը դուրս  
սլորած:

Բացատրութիւններն աւելորդ են:

Սա մի այլասեռումն է, մի ամբողջ  
սերնդի ֆիզիկական ու մտաւոր usnrացումն,  
որ քանդում է ընտանիքի բարօրութիւնը և  
տանում է սերունդը դէպի ջնջումն, դէպի  
սպառումն:

Ահ, եթէ միայն դրանով վերջանային  
սիֆիլիսի աւերումները, եթէ միայն մեռնողը  
մեռնէր, իսկ ապրողները գոնէ տային ա-  
ռողջ սերունդներ:

Բայց այդպէս չէ լինում:

Սիֆիլիսի սոսկալի աւերիչ ոյժը, որ  
հիւանդացրել էր ու սպանել պապին, որ  
արատաւորել էր ու անբախտացրել որդուն,  
տարածւում է թոռան վրայ ևս:

Մինչև անգամ պատահում է այսպէս.  
— Հայրը առերես առողջ է, իսկ որդին  
ծնւում է ժառանգական սիֆիլիսի դրօշմը  
վրան: Ո՞րտեղից:

Հարց ու փորձ էք անում և տեսնում,  
որ երեխայի պապը սիֆիլիս է ունեցել:



Սա ասավիզմն է: Այսպէս, սիճիլիսական արասաւոր երեսոյթները նկատուով են նաեւ երկրորդ սերնդի վրայ:

Այս երեսոյթները նոյնն են, ինչ որ առաջի սերնդի վրայ նկատուածները. — վիժումներ, արատաւոր ծնունդներ, և այլն, ինչպէս վերև յիշել ենք:

Մի օրինակ միայն (բժ. Ս. Էտիէնի յիշատակած): Մարդը ժառանգական-սիֆիլիսոտ, կինը առողջ. 1<sup>4</sup> յղութիւն, որոնցից 5 վիժումն, 1 երեխայ մեռած ծնած, 5 երեխայ ուղեղային հիւանդութիւններով, 1 ապուշ, 2 երեխայ ատամների արատաւորութիւնով:

Մենք նկարագրեցինք սիֆիլիսի վտանգաւոր ազդեցութիւնը թէ իր—հիւանդի, թէ նրա ամուսնու, թէ զաւակների և թէ ամբողջ սերնդի առողջական դրութեան ու բարօրութեան վրայ:

Այժմ մի դժուարին խնդիր է դրուած մեր առջև, այն է, թէ սիճիլիս ունեցողը կարո՞ղ է արդեօք ամուսնանալ թէ ոչ. իսկ եթէ կարող է, ի՞նչ պայմաններում:

Ուրիշ խօսքով. ինչ պիտի պահանջուի

սիֆիլիսոտից, որ թոյլ տրուի նրան կին ուղելու, ընտանիք կազմելու եւ սերունդ արտադրելու:

Անտարակոյս, անխղճութիւն կը լինէր զրկել ընդմիշտ սիֆիլիսոտին ընտանեկան երջանկութիւնից, և գիտութիւնը, որի միակ ձգտումն է երջանիկ դարձնել մարդուս կարծատե կեցութիւնը, մշակել է մի շարք կանոններ ու պահանջներ, որոնք, չը զրկելով հանդերձ սիֆիլիսոտներին ամուսնանալու հնարաւորութիւնից, ապահովում են որոշ չափով կնոջ, զաւակների և սերնդի առողջութիւնը և բարեկեցութիւնը:

Այս պահանջները պրօֆ. Փուրնիէն գետեղել է հետևեալ հինգ կէտերի մէջ.

1. Բացակայութիւն որ և է սիֆիլիսական երևոյթի:
2. Հիւանդութիւնը բաւականաչափ հին պիտի լինի (վարակման օրից 5—6 տարի անցած):
3. Վերջին սիֆիլիսական երևոյթից պիտի շատ թէ քիչ ժամանակ անցած լինի:
4. Հիւանդութիւնը չը պէտք է սպառնացող (խիստ աւերիչ) բնաւորութիւն ունեցած լինի:

5. Բժշկութիւնը պէտք է բաւարար  
եղած լինի:

1. Բացակայութիւն որ եւ է սիճիլիսա-  
կան երեւոյթի:

Թէև անհաւատալի կը թուի մեր ա-  
սածը, սակայն պակաս չեն այնպիսի դէպ-  
քեր, երբ տղամարդը սիճիլիսի վարակիչ  
շրջաններում ամուսնանում է: Կասկած չը  
կայ, որ նա անմիջապէս վարակում է իր  
կնոջը: Այնուհետև վերջացաւ ընտանիքի  
երջանկութիւնը. — հիւանդութիւնը տարա-  
ծում է իր կործանիչ ոյժը զաւակներին,  
սերնդի վրայ...

2. Հիւանդութեան հասակը:

Վարակումից պիտի որոշ ժամանակ  
անցած լինի: Փորձը և հազարաւոր դէպ-  
քերի դիտումները ցոյց են տուել, որ քանի  
նոր է սիճիլիսը, այնչափ վսանգաւոր է նա-  
վաստանգը նախ կայանում է նրանում,  
որ կինը վարակում է, որովհետև եթէ  
սիճիլիսը նոր է, յանկարծ մէկ օր կարող  
են տղամարդու մարմնի վրայ երևալ դեռ  
չը հանգած հիւանդութեան երկրորդական  
երեւոյթները (կեղեր, խոցեր բերանի, լեզուի,

պռօշների, ջրջրուկային մաշկախտեր), որոնք անպայման կերպով կը վարակեն կնոջը:

Ժառանգների տեսակէտից նկատուած է, որ հօր 3—4 տարեկան սիֆիլիսը այլ ևս չէ անցնում զաւակներին, սակայն մօր սիֆիլիսը գեռ երկտր տարիներ անդրադառնում է սերնդի վրայ:

Ժամանակն առհասարակ թուլացնում է ցաւի զօրութիւնը:

Այսպէս սիֆիլիսոտ կինը առաջի տարիներում վիժում է, յետոյ ծնում է մեռած երեխաներ, յետոյ երեխաներ, որոնք շատ քիչ են ապրում, վերջը, մի բանի տարիներից յետոյ, առողջ որդիք: Այստեղից հասկանալի է, որ սիֆիլիսոտը պիտի սպասի որքան կարելի է երկար ժամանակ, յամենայն դէպս ոչ պակաս բան հինգ տարի:

3. Սակայն եթէ մինչև անգամ հինգ և աւելի տարի էլ անցած լինէր հիւանդութեան սկզբից, դարձեալ հիւանդը իրաւունք չունի ամուսնանալու, եթէ հիւանդութիւնը որ և է արտայայտութիւն է ունեցել (որչափ աննշան էլ լինէր սա):

Անհրաժեշտ է, որ վերջին արտայայտութիւնից անցած լինի ոչ պակաս քան երկու

սարի: Ուրիշ խօսքով. սիֆիլիսը պիտի երկու տարի լուռ մնացած լինի, որ հիւանդն իրաւունք ունենայ պսակուելու:

4. Այս հիւանդութիւնը միշտ մի տեսակ չէ լինում: Կան այնպիսի ձևեր, որոնք յայտնի են վաս կամ ծանր սիֆիլիս անունով: Սա հարուածում է ուղեղը, աչքը, զարմանալի աւերումներ է անում յուզաթաղանթների ու մաշկի վրայ, շուտով ընկնում է ոսկորները: Գծուար է լինում կանգնեցնել նրա աւերիչ քայլը. հէնց որ բժշկութիւնը դադարում է, սիֆիլիսը նորից գլուխ է բարձրացնում և այլն: Այսպիսի սիֆիլիսի տէրերը կարող են մի քանի ժամանակ առողջ մնալ, բայց միշտ պէտք է սպասեն մի որ և է բարդութեան:

5. Վերջապէս ամենակարեւոր կէտը բժեկուքիւնն է: Բարեբախտաբար սիֆիլիսը, եթէ ժամանակին կանոնաւոր կերպով խնամուած է, կարող է բժշկուել:

Սիֆիլիսը միանգամայն բուժելի հիւանդութիւն է:

Բայց մինչեւ բժեկուելը սիֆիլիսոսը չը պէտք է մտածի անգամ ամուսնանալու վրայ,

որովհետեւ կ'անբախտացնէ թէ՛ իր կնոջը եւ թէ՛ իր ամբողջ սերունդը:

Թէ ինչպէս պէտք է բժշկուի սիֆիլիստը, այդ մենք բացատրել ենք մանրամասն ուրիշ տեղ\*): Կ'ասենք միայն, որ պառանների ու դալլաքների բժշկութիւնը կամ անբաւարար է կամ չափազանցացրած ու վտանգաւոր:

Կանոնաւոր ու բաւարար բժեկութիւն կարող է անել միմիայն բժիշկը:

Բժշկութիւնը պիտի տւի երկար ժամանակ, գիտնականների ասելով—մի քանի տարի:

Պէտք է բժշկուել ո՛չ միայն այն ժամանակ, երբ մի որ և է կերպով արտայայտուել է հիւանդութիւնը, այլ և այն ժամանակ, երբ հիւանդի վրայ ոչինչ չը կայ, երբ նա առերես բոլորովին առողջ է:

Երբէք չը պէտք է մոռանալ, որ ամենաթեթեւ ձեւը կարող է վերջում, եթէ առանց բժշկութեան մնայ, բարդուել ամենածանր, օր. ուղեղի հիւանդութիւնով: Այս պատճառով պէտք է բժշկուի ամեն ոք, ով

\*) Տե՛ս վիշտձ դրքոյկս:

սիֆիլիս է ստացել, որչափ էլ թեթև եղած  
լինէր սա:

Մեծ քանակութեամբ գիտնականներ  
եկել են այն եզրակացութեան, որ կանո-  
նաւոր բժշկութիւնը ոչ միայն փրկում է  
հիւանդին սարսափելի բարդումներից, այլ  
և յաճախ փրկում է նոյնպէս և սերունդը:  
Յաճախ պատահում են այսպիսի դէպ-  
քեր.

Մի կին մի քանի անգամ վիժումներ է  
ունենում. մեկը հակասիֆիլիսական բժշկու-  
թիւն ենք անում մարդուն կամ կնոջը, կամ  
երկուսին էլ, և վիժումները դադարում են,  
ու կինը ծնում է առողջ երեխաներ:

—

Հիմա մի քանի խօսք ասենք նաև ժա-  
ռանգական սիֆիլիսի ամուսնութեան  
մասին:

Այս տեսակէտից էլ ժառանգական սի-  
ֆիլիսոտը ընդունւում է իբրև հաւասար իս-  
կական սիֆիլիսոտի:

Սիֆիլիսոտ ծնողներից սերուած որ-  
դիքը պիտի նոյն չափով վախենան բարդում-  
ներից, որչափ իրանց հայրը: Նրանք եւս պի-  
տի լուրջ կերպով բժշկուեն, եւ միայն լաւ

բժշկուած, (երբ այլ ևս սիֆիլիսական ոչ մի երեւոյթ չի մնացել վրաները), նրանք ընդունակ են դառնում փոքր ի շատէ լաւ սերունդ արտադրելու:

Ինչպէս տեսնում ենք, սիֆիլիսոտաների և նրանց ժառանգների ամուսնանալու խընդրի որոշման մէջ վըճոողական խօսք ունի բժիշկը:

Նա պիտի բժշկութիւն անէ, նա պիտի կարծիք յայտնէ այն մասին, թէ առողջացած է հիւանդը եւ ընդունակ է ամուսին դառնալու թէ ոչ և՛ այլն:

Հետևաբար ամեն սիֆիլիս ունեցող պիտի դիմէ բժշկի եւ ղեկավարուի նրա խորհուրդներով, եւ երբէք չամուսնանայ հակառակ նրա կամքին:

Անտարակոյս կը դայ մի ժամանակ, երբ ամուսնանալու համար պէտք կը լինի ամուսնացողների առողջութեան վկայականներ պահանջել, ինչպէս այսօր պահանջուած է մետրիկական վկայական. բայց մինչեւ այն ժամանակ, ամեն մի երիտասարդ ինքը յօժարաբար պիտի դիմէ բժշկին եւ նրա հա-



ւանութիւնն ստանայ այդ պատասխանատու  
քայլն անելու համար:

Այս է պահանջում ազնւութիւնը, այս  
է պահանջում ընտանիքի ու սերնդի բարո-  
րութիւնը, ցեղի փրկութիւնը, և աւելա-  
ցները (քանի որ մարդ եսական է նոյնիսկ  
ամուսնութեան մէջ) իր սեփական երջանկու-  
թիւնը:

IX

ԱԼԿՈՀՕԼԻԶՄ ԵՒ ԱՄՈՒՍԵՈՒԹԻՒՆ

Ալկոհոլը բոյն է. — Ալկոհոլիզմ կամ երկարատեւ  
բուճակաւորութիւն. — Ալկոհոլիզմից առաջացած վնաս-  
ները. — Արքեպոպի սեռուկը. — Յանկայի<sup>օ</sup> է արդեօֆ  
ամուսնութիւն ալկոհոլիկի հետ. — Ժառանգական ալ-  
կոհոլիկներ. — Ի՞նչ պայմաններում ալկոհոլիկները եւ  
նրանց սեռուկը կարող են ամուսնանալ:

Ալկոհոլը, սպիրտը կամ ոգին թոյն է  
և այնպիսի մի թոյն, որ հարուածում է մեր  
ամբողջ կազմուածքը, իսկ երկար գործա-  
ծութիւնից առաջանում է ընդհանուր թու-  
նաւորումն: Թունաւորութիւնը լինում է սուր  
և յարատեւ: Սուր թունաւորութիւնը իս-  
կական արբելն է:

Սակայն մարդիկ կարող են խմել ու  
թունաւորուել առանց արբելու. — այդ նրանք  
են, որոնք ամեն օր սովորութիւն են արել  
իրանց համար որոշ քանակութեամբ գինի-

արազ գործածել, թէկուզ իսկի չարքեն էլ:  
Ժողովրդի մէջ այն կարծիքը կայ, թէ  
միայն արեւն է վնաս, իսկ քանի մարդ չէ  
արքել—ոչինչ:

Այդ մի մեծ և կորստաբեր սխալ է:

Մի մարդ, որ ամեն օր կամ յաճախ է  
խմում, նա կամաց-կամաց, դանդաղ կերպով  
թունաւորում է իրան, թէև ինքն իսկի ոչ  
մի անյարմարութիւն էլ չզգար. այդպի-  
սիների կլանած սպիրտի քանակութիւնը տա-  
րուայ ընթացքում ահագին է լինում\*):  
Հարուստ Կովկասն արտադրում է մեծ քա-  
նակութեամբ գինի և օղի, որից մի մասը  
արտահանւում է, իսկ մեծագոյն մասը ծախ-  
ւում է երկրի մէջ:

Շատ հետաքրքրական է իմանալ, թէ  
նրչափ սպիրտ է ընկնում Կովկասում իւրա-  
քանչիւր բնակչին: Այդ քանակութիւնը ճիշտ  
որոշուած չէ, բայց մի քանի պաշտօնական  
տեղեկութիւնների նայելով, նա հաւասար

---

\*) Ֆրանսիայում մի բնակչի ընկնում է 7, 7 լիտր  
անարատ ալկոհօլ, Գանիայում—6, 2, Գերմանիայում—4, 4,  
Աւստրիայում 4, 3, Ռուսիայում 3, 3, Շվեյցարիայում 3,  
Իտալիայում 1, 4: Անգլիան իմիջքների վրայ ծախսում  
է 84 միլիօն ֆունտ-ստերլինգ, Գերմանիան 2<sup>1</sup>/<sub>2</sub> միլիարդ  
մարկ, Ռուսիան—400 միլիօն ռուբլի:

է ամսական մի վեդրօի: Ուրեմն կովկասաբնակ չափահաս քրիստոնեայ բնակիչը (մահմեդականները, իբրև չը խմողներ, հաշուի չեն առնուած) կլանում է տարին 12 վեդրօ մաքուր սպիրտ, գուցէ և աւելի:

Այդ մի չափազանց մեծ քանակութիւն է, և այդչափ թոյնը լցւում է մեր արեան մէջ, որ նրան տանում, տարածում է մեր կազմուածքի բոլոր անկիւնները: Այսպիսով թոյնը դիպչում է ամեն տեղ, գրգռում է, այրում ու հիւանդացնում մեր բոլոր գործարանները, մեր բոլոր մարմնամասերը — սկսած ստամոքսից մինչև ուղեղը:

Յայտնի է, որ արբածը փսխում է. այդ նշան է ստամոքսի գրգռման: Եթէ խմիչքի քանակութիւնը մեծ չէ, խմողը չէ փսխում, բայց այնուամենայնիւ նրա ստամոքսը գըրգըռում է, և ճշմարիտ որ, յարատև խմողը իր ամբողջ կեանքում տանջւում է անմարսութիւնից, փորացաւերից:

Շուտով ակներև են լինում լերդի հիւանդութեան նշանները. առաջ է գալիս դեղնութիւն, ջրգողութիւն և այլն:

Շրջելով արեան հետ սրտի ու արեան անօթների մէջ (երակներում ու շնչերակնե-

րում), սպիրտը յարատև կերպով գրգռում է այդ գործարանները. սիրտն ու անօթնե-րը հիւանդանում են, արեան շրջառութիւնը անկանոն է դառնում և առաջացնում է շքն-չարգելութիւն, ուռուցութիւն, երակ-ների պայթումն ուղեղի մէջ—որից կա-թուածներ, անդամալուծութիւններ և մահ:

Սպիրտը դուրս է մղում մեր օրգա-նիզմից շնչառութեան միջով (ուրեմն նա հա-րուածում է նաև թոքերը) ու երիկամունք-ների (պլոծիկների) միջով (մէզի հետ): Այն-պէս որ այդ գործարանները ևս անդադար գրգռման ու բորբոքման մէջ են, մանաւանդ երիկամունքները, որոնց բորբոքումն առա-ջացնում է միզարգելութիւն, ջրգողութիւն, ուռուցութիւն և այլն:

Ահագին ազդեցութիւն ունի ալկոհօլը նոյնպէս և ուղեղի վրայ: Խմողի բոլոր հո-գեկան բարձր յատկութիւնները նուազում են, կամքի ոյժը թուլանում է, ինքնազրս-պումն անհետանում և մարդ գերի է դառ-նում թէ իր սեփական կրքերին և թէ չբ-ջապատող հանգամանքների ազդեցութեան: Նրա մտաւոր ոյժը ճնշուած, թուլացած են, ընդունակութիւնները բթացած, բարոյական

սկզբունքները նուազած կամ կորած: Այսպիսով արևօձօլը հասցնում է մարդուս ընդհանուր ներվայնութեան, առաջացնում է զանազան ուղեղային ու ողնուղեղային հիւանդութիւններ (կաթուածներ, մոլութիւններ, խելագարութիւն), կամ դարձնում է նրան անբարոյական, յանցաւոր ու եղեռնագործ, ծոյլ ու անբան:

Այսպիսով ճշտւում է մեր ասածը. — արևօձօլը ուղղակի քայքայում է մեր ամբողջ կազմուածքը:

Այս գիտելիքը չափազանց մեծ կարեւորութիւն ունի մեզ զբաղեցնող ամուսնութեան տեսակէտից:

Այն ամբողջ կազմուածքը ընդհանուր թունաւորման հետքեր է կրում իր վրայ:

Արբեցողի ամբողջ մարմինը կարծես խոխոմուած է թոյնի մէջ: Նա նիհարում է, ուժակորուստ լինում, կորցնում է իր աշխոյժը, իր տոկունութիւնը, կորցնում է իր գիմացկոտութիւնն ու կենսականութիւնը, և ենթակայ է լինում ամեն տեսակ հիւանդութիւններին, որոնցից ամենաթեթեւն անգամ կարող է բարդուել ու սպանիչ ելք ունենալ. վարակիչ համաճարակ հիւանդու-

Թիւնների (խօլերա, ժանտախտ, ինֆլուէնցա) առաջին զոհերը ալկօհօլիկներն (արկօհօլով Թունաւորուածներն) են:

Սա մի ընդհանուր օրգանային քայքայումն է, որ յաճախ գինեմոլներին հասցնում է կենսասպառման ու բարակացաւի: Այս տեսակէտից ալկօհօլիզմը նոյնչափ աւերիչ ազդեցութիւն ունի ամբողջ կազմնւածքի վրայ, որչափ սիֆիլիսն ու բարակացաւը: Իսկ մենք գիտենք, (տես. գլ. VII. Ժառանգականութիւն), որ այդ հիւանդութիւնների սաղմերը, որոնք հարուածում են ծնողների ամբողջ կազմնւածքը, անցնում են ժառանգաբար զաւակներին:

Դրանով է բացատրուում այն զօրեղ ժառանգական ոյժը, որ ունի ալկօհօլիզմը սերնդի վրայ:

Թունաւորուած օրգանիզմն անկարող է առողջ սերունդ արտադրել և ալկօհօլամոլերեխտաները կրում են իրանց վրայ ծնողների աւերիչ կնիքը:

Որդիքը սարսափելի կերպով տուժում են իրանց ծնողների և պապերի մեղքի համար:

Մի նշանաւոր բժիշկ ասում է հետեւեալը.

«Արբեցողի սերունդը ո՛չ միայն թոյլ է ընդունակութիւններով, այլև բարոյական ու մտաւոր այնպիսի մի ողորմելի դրութեան մէջ է լինում, որ անկարող է դառնում ինքն էլ սերունդ ունենալու, և այդպիսով արբեցողի ցեղն սպառւում է»:

Մի ուրիշ գիտնական այսպէս է խօսում:

«Ալկօհօլիզմը մի պատուհաս է արդի հասարակութեան գլխին: Բարոյական տեսակէտից—նա ապականում, նսեմացնում և ապուշ է դարձնում մարդուն. ֆիզիկական տեսակէտից—հարուածում է մարդու կազմուածքը և վատացնում գլխաւոր գործարանների գործունէութիւնը. սերնդի տեսակէտից—նա վատթարացնում է և ամուլ դարձնում»:

«Ալկօհօլիկը, ասում է բժ. Կաղալիս, իր սեփական անձին, իր ընտանիքին, իր ծանօթներին ու շրջապատողներին վտանգաւոր լինելուց դատ, կործանում է նաև իր սերունդը: Եւ, յիրաւի, նա արտադրում է ժառանգական արբեցողներ, որոնց մի ներքին, անդիմադրելի ոյժ մղում է դէպի այդ



Թոյնը. նա ծնունդ է տալիս քիչ թէ շատ ներվային արարածների, նեվրոպատների, կամ նոյն իսկ ուղեղի ու առհասարակ ներվային սխտեմի օրգանական վնասների ու հիւանդութիւնների տէր սերնդի:

«Ալկօհօլիկի ժառանգները նոյնպէս թունաւորուած են դուրս գալիս, ինչպէս բարակացաւտիւնն ու սիֆիլիստիւնը:

«Ամենից առաջ պէտք է յիշենք սաղմի հիւանդական կազմութիւնը. — ալկօհօլիզմը, ինչպէս և սիֆիլիսն ու բարակացաւը, սաղմասպան թունաւորումն է: Բրետանի դեպարտամէնտում երկուներեք սերնդից յետոյ շատ ընտանիքներ սպառուել են ալկօհօլիզմից: Բայց միայն Բրետանում չէ, որ նա աւերումներ է գործում. պղծել է շատ երկրներ, օրինակ Պրօվանսը, որտեղ անյայտ էր առաջ, և որտեղ ընիկները շատ սակաւ էին խմում այն գինուց, որ առատօրէն տալիս է այդ նահանգը:

«Այնուհետև արբեցողի սերնդի մէջ մենք գտնում ենք այն արատաւորութիւնները (որ յիշել ենք սիֆիլիսի մասին խօսելիս), այն է. — աճման դանդաղութիւն, շեղումներ և վրիպումներ օրգանիզմի կանոն-

նաւոր զարգացումից, օրինակ, մանկանմանութիւն, զանազան ֆիզիկական անկանոնութիւններ (գանգի անհամաչափութիւն, փոքրադէլութիւն կամ դէլիւ ջրգողութիւն), բացի այդ, նրանց մէջ նկատուում են մտաւոր ու բարոյական անկատարելութիւն (թոյլ բանականութիւն, խեղապակասութիւն, սպուշութիւն) և մի առանձին արամադրութիւն դէպի ներվային ու հոգեկան հիւանդութիւններ և այլն:

«Հիստերիա և զգացողական ու հոգեկան շեղումներ չափազանց յաճախ են ստատահում ալիօհօլիկների սերնդի մէջ. դրանց հետ միասին նաև ընդունակութիւնների անհաւասարաչափութիւն, ուշադրութեան պակասութիւն, թուլահամուծիւն կամ անդիմադրելի կրքային առաջմղումներ (իմպուլս), ծայրայեղ բարոյականութիւն կամ անբարոյականութիւն, վաղաժամ զարթած հեշտասիրութիւն: Յանցագործների ստատիստիկան մի կապ է ենթադրում երիտասարդների, պատանիների, նոյն իսկ երեխաների յանցանքների թուի աւելանալու և ալիօհօլիզմի տարածման մէջ:

«Բայց ապա՞ծներովս չէ սպառւում ալ-

կօհօլիկների ժառանգների այլասեռումն.—  
սուբերկուլօզը (բարակացաւը) սպառնում է  
և յաճախ հարուածում նրանց մատաղ հաս-  
սակում և թոքախտը վերջ է տալիս այդ  
հիւանդների, այդ վատասերուածների ողոր-  
մելի կեանքին: Ո՛րքան էլ ցաւալի լինի այս  
վախճանը, բայց և այնպէս ցանկալի է, որ  
այդ հիւանդութիւնն ստացած անհատները  
անհետանան, որպէս զի չը բազմացնեն ցեղի  
մէջ այլասերուածների, արատաւորների թի-  
ւը, մտաւորապէս ու ֆիզիկապէս նսե-  
մացածների սերունդները, որոնք ո՛չ միայն  
լցնում են գժատները, յիմարանոցները կամ  
բանտերը, այլև դեր են խաղում քաղաքա-  
կան աշխարհի մէջ, գրականական ու գե-  
ղարուեստական շրջաններում, և որոնք բոլորն  
էլ ծանր բեռն են դառնում հասարակու-  
թեան վրին իրանց ապրելու անընդու-  
նակութիւնով, իրանց դատարկաշրջիկու-  
թեամբ, իրանց կրաւորական դիրքով, իրանց  
փաստաբերութեամբ և ողորմելիութեամբ  
իրբև վրիպածներ և անղօրներ, որոնք ամե-  
նուրեք և միշտ հանդիպում են անաջողու-  
թեան, մնալով միշտ սպառնացող ու միշտ  
փաստակար հասարակութեան համար»:

Յանկալի է արդեօք, որ այսպէս արատաւորուած, այլասերուած սերունդը բարգաւաճի, և հնարաւոր է արդեօք երջանկութիւն ալիօհօլիկ ընտանիքի մէջ:

Հնարաւոր է արդեօք ընտանեկան խաղաղ կեանք այն ամուսնութեան մէջ, որտեղ ինքը ամուսինը կամ արբեցող է և կամ կրում է իր վրայ ժառանգական ալիօհօլիզմի կնիքը. ամուսնութիւն, որ կամ անպտուղ պիտի մնայ, կամ պիտի արտադրէ կիսախելեր, ապուշներ, ընկնաւորներ, գինետըների, բանտերի ու աքսորի ապագայ թեկնածուներ:

«Աղջիկները, — ասում է Ռիբբինգ, յաճախ վստահանում են իրանց ձեռքը տալ այնպիսի մարդուն, որոնք իսկապէս վատ մարդիկ չեն, բայց արբեցողներ են, և այդանում են այն յոյսով, թէ կարող կը լինեն ուղղել իրանց ապագայ ամուսիններին, նրանց ետ պահել այդ ախտից:

«Յաւակցաբար այդ բանը միշտ չէ աշողուում»:

Ճշմարիտ է, մի առժամանակ նորապսակը թողնում է խմելը, բայց կիրքը

նորից զարթնում է նրա ներսում և արբեցողը վերագառնում է գինետուն:

—

Ահա այն վտանգները, որոնք կապուած են արբեցողներին ամուսնութեան հետ: Ո՛րչափ ուրեմն զգոյշ պիտի լինեն ծնողները, երբ պատրաստուած են իրանց երեխաներին պսակելու մի արբեցողի կամ արբեցողի որդու հետ:

Պէտք է միշտ յիշել, որ արբեցողութեան կիրքը մի հիւանդութիւն է, որից բխողները շատ դժուար է: Ֆրանսիական առածն ասում է. qui a bu, boira (նվ սովորած է խմելու, նա միշտ կը խմի):

Զը պէտք է մտանալ և այն, որ արբեցողի որդին կարող է ժառանգել հօր ախտը, ինչպէս թոքախտաւորի զաւակը— թոքախտ է ժառանգում: Այս ժառանգական արբեցողներին, այս դիպսոմաններէ մէջ արբեցութեան կիրքը նոյնպէս մի սոսկալի, համարեա անբուժելի հիւանդութիւն է դարձած:

Ասածներիցս երևում է.

1) Արբեցողը, իսկական ալկոհօլիկը, չը պէտք է ամուսնանայ:

2) Ձը պէտք է ամուսնանայ նոյնպէս և ալկօհօլիկի որդին, եթէ ինքն էլ ժառանգական արբեցող է, նոյն իսկ եթէ մի առժամանակ դադարած լինէր խմելուց, որովհետև կիրքը կարող է նորից բռնկել:

3) Ձը պէտք է մտաւորաբար, որ ալկօհօլիկի զաւակը կարող է արբեցող էլ չը լինել, բայց այնու ամենայնիւ կրել ժառանգական արատներ ու տրամադրուած լինել դէպի բարակացաւ, թորախտ:

4) Բոլորովին առողջ մարդը, որ թէև մի ժամանակ արբեցող է եղել, բայց երկար միջոց թողել է խմելն ու լրջակեաց կեանք է վարել, կարող է լաւ ամուսին լինել և լաւ սերունդ արտադրել:

5) Ալկօհօլիկի զաւակները, որոնց վրայ ժառանգական ալկօհօլիզմի սչ մի նշան չէ երեւում և որոնք տրամադրութիւն չունեն դէպի արբեցողութիւն, նոյնպէս պիտանի են ամուսնութեան համար:

— 811 —

/

X

**ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՉ (ԲԱՐԱԿԱՅԱԻ) ԵՒ ԱՄՈՒՍ-  
ՆՈՒԹԻԻՆ**

Տուբերկուլոզի սահմանն է նրա զոհերի բիւր.—  
Նրա արտայայտութիւնները.— Սա մի վարակիչ ու  
ժառանգաբար փոխանցնող հիւանդութիւն է.— Վա-  
րակումն ամուսնութեան մէջ.— Թոմախի նեանները.  
— Նրա նեանակութիւնը ամուսնական կեանքի  
մէջ.— Նրա աւերիչ ազդեցութիւնը սերնդի վրայ.—  
Քարակացաւոսի ու նրա զաւակների ամուսնութեան  
խնդիրը:

Տուբերկուլոզ, սիֆիլիս, ալկոհոլիզմ;—  
ահնայն երրորդութիւնը, որ կազմում է  
մարդկութեան երեքգլխանի ճիւղը: Բայց  
այս հիւանդութիւններից ոչ մէկը այնչափ  
աւերիչ զօրութիւն չունի, որչափ բարակա-  
ցաւը \*): Սոսկալի կոտորած է անում նա:

\*) Տուբերկուլոզ մենք թարգմանում ենք բարա-  
կացաւ բառով. նրանում նրան կոչում են նաև ձլերէ:  
Նատերը Տուբերկուլոզ սխալ թարգմանում են քոֆախս,  
բայց թոքախար տուբերկուլոզի արտայայտութիւններից  
մէկն է միայն:

Բոլոր մահուան դէպքերի  $\frac{1}{6}$ , մի քանիսնե-  
րի կարծիքով, նոյնիսկ  $\frac{1}{5}$ -ը, գոնէ եւրո-  
պական երկրներում, բարակացաւից է առա-  
ջանում:

Միայն Ֆրանսիայի մէջ տուբերկուլոզից  
մեռնում են տարեկան 150,000 հոգի. ու-  
րեմն 27 բնակչից մէկը:

«Եւ առհասարակ տուբերկուլոզը հա-  
րուածում է երիտասարդներին բեղմնաւո-  
րութեան շրջանի մէջ. ուրեմն նա արբե-  
ցողութեան հետ միասին կազմում են ազ-  
գաբնակութեան նուազման գլխաւորագոյն  
գործօնները»:

Եւ այս սարսափելի, անողորմ ցաւը մի  
տղբուկ է դառել, որ ծծում է մարդկու-  
թեան արիւնը և ուրեմն բացի այն, որ հա-  
րուածում է անհասներին, նա իր աւերիչ ազ-  
դեցութիւնը տարածում է սերունդների վրայ  
եւս:

Այսպիսով բարակացաւը հանդիսանում  
է իբրեւ մի ահռելի թշնամի, որ աւելի  
մեծ զոհեր է տանում, քան ամենասարսա-  
փելի համաճարակ հիւանդութիւնները —  
խօլերան կամ ժանտախտը: Եւ յիրաւի,  
տուբերկուլոզը մի զօրեղ ժառանգական



ախտ է: Ֆրանսիայում յիշած 150,000 բարակացաւոտներից 50,000 բարակացաւոտ ցեղից են. ուրեմն այս հիւանդների  $\frac{1}{3}$ -ը ժառանգական հիւանդներ են:

Տուբերկուլոզը հարուածում է մեր մարմնի բոլոր մասերը, գլխաւորապէս ոսկորները, ներքին բոլոր գործարանները, թաւթագեղձերը, ուղեղը և այլն, և ամենից յաճախ թոքերը, կազմելով զարհուրելի բոճախսը: Մենք չենք կարող նկարագրել այստեղ բարակացաւի բազմատեսակ արտայայտութիւնները:

Մենք ասացինք, թէ տուբերկուլոզը երկու սարսափելի յատկութիւններ ունի. — նա վարակիչ ու ժառանգական հիւանդութիւն է: Այսպէս, մի բարակացաւոտ մարդ ամուսնանալով, սպառնում է թէ իր կնոջը և թէ իր սերնդին:

Թոքախտաւորի խորխի մէջ գտնուում են անհամար միկրօբներ (բացիլներ), որոնք կարող են որ և է կերպով (կամ կերակրի հետ, կամ փոշու հետ) մտնել առողջի բերանը, այնտեղից արեան մէջ, բազմանալ — տարածուել մարմնի մէջ ու վարակել նրան:

Հասկանալի է, թէ ինչ հեշտութիւնով

կատարուելու է թոքախտի այս փոխանցումը ամուսինների մէջ, շնորհիւ նրանց յարատե մտերիմ կեանքի:

Եւ, ճշմարիտ որ, չափազանց յաճախ ամուսինները վարակուում են իրարից այս ցաւով:

Սկզբում երևում է մի տեսակ ուժապակասում, թուլութիւն, պակասում է աշխոյժն ու աշխատելու ընդունակութիւնը: Դէմքը դունատում է, երեկոնները քիչ ջերմ է վրայ տալիս և վարակուածն սկսում է ցաւեր ու ծակոցներ զգալ կրծքում ու կրունակում, երբեմն չոր՝որ հազում է ու մի և նոյն ժամանակ գնալով նիհարում և այլն: Երբեմն հիւանդութեան առաջին երեւոյթը — արիւնհոսութիւնն է լինում:

Եւ հազուադիւս չեն այնպիսի դէպքեր, երբ ծաղկափթիթ աղջիկը, որի առողջ կազմը երկար ու երջանիկ կեանք էր խոստանում, ամուսնանալով մի թոքախտաւորի հետ, կարճ տարիների, նոյն իսկ ամիսների ընթացքում ուղղակի հալւում, նուազում, դունատում, մեղամաղձոտ է դառնում, փախչում է այն ամեն բանից, ինչ որ առաջ նրան հրճուանք էր պատճառում,—մի խօս-

քով. ընկճուում է—Ֆիզիկապէս ու բարոյապէս և արագ քայլում դէպի դերեզման:

Ո՛վ դիտել է մի քանի այսպիսի դէպքեր, ո՛վ առիթ է ունեցել կարդալու թշուառ մատաղահաս կնոջ դէմքի վրայ ցաւի օրէցօր աւելցող աստիճանաչափը, ո՛վ նկատել է այն տարօրինակ, հիւանդին—իրան անհասկանալի, հոգեկան անօրոջ ճնշումն, այն անմխիթար յուսահատութիւնն ու հիասթափումն կեանքից, նրա սիրտը խորապէս խոցուել է կարեկցութիւնից և վառուել կատաղութեամբ դէպի այդ անսիրտ անարդարութիւնը, այդ գազանային անսրտութիւնը:

Բայց ենթադրենք, թէ կինը չէ վարակուում ու որ և է հրաշքով առողջ է մնում: Պարձեալ դառն ու անմխիթար է նրա կեանքը:

Ամուսինը, հիւանդութեան զարգանալով, սկսում է կորցնել իր ոյժերը, աշխատանքի ընդունակութիւնը,—բանուոր ձեռը պակասում է, աղքատութիւնը վրայ է գալիս: Յետոյ հազը, այս անվերջանալի, անգաղար հազը, մշտական ջերմի հետ միասին, քանդում են խեղճի ներսը, սպառում

նրա վերջին ոյժերն ու անկողին գցում է  
Այն ժամանակ սկսում է միւս ամուս-  
նու համար երկար տանջալից տարիներ.  
կեանքը նրա համար դառնում է ամենօրեայ  
յուզմունք, լաց, յուսահատութիւն: Հիւան-  
դութեան սկզբներում խեղճին դեռ ոյժ է  
տալիս բժշկուելու յոյսը, բայց շուտով նա  
իմանում է, կամ ինքն է հասկանում, որ  
իր ամուսինը, որին նա գուցէ սիրել է իր  
երիտասարդ սրտի բոլոր ոյժով, անդառնալի  
կերպով կորած է, որ վաղ թէ ուշ մահը  
խլելու է նրան իր գրկից: Ահ, գոնէ շուտով  
կատարուէր բնութեան այս անխուսափելի  
վճիռը, գոնէ շուտով սև հողը ծածկէր  
հիւանդի քայքայուած մարմինը, գուցէ նրա  
հետ թաղուէր և կենդանի մնացած ամուս-  
նու ամենօրեայ տանջանքների գոնէ մի  
մասը:

Բայց հիւանդութիւնը երբեմն երկար  
տարիներ է տևում, հասցնելով հիւանդին  
ամենասարսափելի դրութեան, դարձնելով  
նրան կմախք, մի ուրուական, գցելով նրան  
անկողին, որտեղ ողորմելին քայքայւում է,  
փտում, ախորժակը կորցրած, անողոր հազը  
կրճքում, որի միջից անդադար դուրս է

դցւում վահրախառն, թորախտային բացիլ-  
ներով լի խորխըռ լաւ է, եթէ մի օր սոս-  
կալի արիւնհոսութիւնը վերջ է տալիս այս  
տանջալից կեանքին:

Ահա թէ որչափ ողբալի և մի և նոյն  
ժամանակ զազրելի է թորախտի պատկերը  
ընտանիքի մէջ:

Նա աւելի ևս մռայլ է դառնում, երբ  
այդ ընտանիքում զաւակներ կան:

Ժառանգական տուբերկուլօզ:

Ո՛րչափ ողբերգութիւն է թագնուած  
այդ բառի տակ, ինչքան սուգ և սիրտ  
ճակեցնող լաց ու կոծ կայ այդպիսի ժառան-  
գական ընտանիքի մէջ:

Ո՛վ մօտ ծանօթ է եղել այդպիսի մի  
ընտանիքի, նա կը հասկանայ այն յուզմուն-  
քը, որով բժիշկը խօսում է այդպիսիների  
մասին:

Տուբերկուլօզի ժառանգաբար փոխան-  
ցումը կատարւում է ուղիղ դժով: Հաւանա-  
կան է, որ իսկապէս ժառանգաբար անցնում  
է ոչ թէ միկրօբը, այլ մի առանձին տրա-  
մադրութիւն դէպի բարակացաւային հիւան-  
դութիւնները: Տուբերկուլօզոտ ծնողի կազ-  
մուածքը այնպէս մի, մեզ դեռ անմբըռ-

ների, այլափոխումն է ստանում՝ բացիլի-  
ֆլասաբեր ազդեցութեան ներքոյ, որ նրա  
արտադրած սերունդը շատ հեշտ հարուա-  
ծելի (vulnérable) է դառնում այդ բացիլից-  
Ուրիշ խօսքով. բարակացաւոտ ծնողների  
որդին ժառանգում է ոչ թէ միկրօբ, այլ  
արամադրութիւն այդ միկրօբը հեշտութիւ-  
նով ներընդունելու և սննդելու:

Առհասարակ մի որ և է միկրօբ կարող  
է մտնել ու բազմանայ այնպիսի օրգանիզմի  
մէջ միայն, որ srամադիր է կամ (աւելի  
պարզ ասենք), որ պարարտ հող է ներ-  
կայացնում նրա աճման համար: Եւ որչափ  
բազմազան են լինում ժառանգական տու-  
բերկուլօզի արտայայտութիւնները: Սրանք  
ընդհանրապէս նոյն այլասերման նշաններն  
են, ինչ որ յիշել ենք սիֆիլիսի ու ալկօհօ-  
լիզմի առիթով: Նոյն սաղմային աւերումն  
արգանդի մէջ, նոյն յետարգանդային մահա-  
ցումն մանուկների, նոյն ֆիզիկական ու բա-  
րոյական նուազումն ու ստորանումն այն  
զաւակների, որոնք կենդանի են մնում:

Քբրև արտայայտութիւն ժառանգա-  
կան տուբերկուլօզի, պէտք է յիշենք, ասում  
է Լանդօւշին, ընդհանուր թուլակազմու-

թիւն, մանկայնութիւն (infantilism), այսինքն—մանկական արտաքին (որ պահպանուում է մինչև վերջ), կրծքի անկանոն կազմ (կուրծքը լինում է նեղ, սեղմուած կողերից, ինչպէս ասում են—հաւի կրծքի ձև ստացած), թոքերի կամ սրտի անկանոնութիւններ, չրթնահեղձութիւն (заячья губа—վերին չրթունքի հեղձումն), արգանդային կեանքում առաջացած ազդրի յօդախախտումն, խուլ-համրութիւն, ողնաշարի կորութիւններ, բախտիղմ (անգլիական հիւանդութիւն) և խլատ, նոյնպէս և ներվային վնասումներ և այլն:

Տուբերկուլոզ ունեցողների զաւակները լինում են նրբակազմ, վերին աստիճանի նուազարիւն, նազուկ կմախքով, բարակ, թափանցիկ մաշկով, բարակ անդամներով, խուլախտոտ, ենթակայ զանազան տեսակ—մաշկի, գեղձերի, աչքի, ականջի հիւանդութիւններ:

Ընդհանրապէս տուբերկուլոզ ծնողների աղջիկն ու տղան չափազանց հետաքրքրական են լինում իրանց գունատ ու նրբագիծ գէմքով, բարի, թափանցիկ աչքերով, հեղբնաւորութեամբ, արտակարգ ընդունակու-

Թիւններով, իդէալական հայեացքներով ու սրտի թռիչքներով, անձնուիրաբար սիրելու փափագով, մեղամաղձոտ—բանաստեղծական բնաւորութիւնով:

Այս պատճառով նրանք չափազանց համակրելի էակներ են եւ հետաքրքրական, և յիրաւի սրանք շատ դիւրալի են և վաղ են ամուսնանում: Կարծես մահուան շունչն առնելով, մի կատաղի պահանջ են զգում ապրելու:

Ի՞նչ պատասխան պիտի տայ մի բժիշկ, որին դիմում է մի թոքախտաւոր կամ մի, կասկածելի առողջութեան տէր, թոքախտաւորի սրդի այն հարցով, թէ կարո՞ղ է ամուսնանալ, թէ ոչ: Ո՛րչափ դժուար է արտասանել վճռողական ոչը, որ թեւադրում է բժշկին ներքին համոզմունքն ու խիղճը: Ի՞նչպէս փշրել մատաղ սրտի ամենագեղեցիկ յոյսերը. ի՞նչպէս մի խօսքով փլատակել ապագայ երջանկութեան հրաշակերտ պալատները, որ տարիների ընթացքում երազել է հիւանդի դիւրաբորբոք երևակայութիւնը...

Դժուար է դատապարտել ում և իցէ—միակեցութեան, ամուրիութեան, ընտա-



նիքից զուրկ մնալու տախտկալից կեանքի։  
Ի՞նչ սոսկալի զոհաբերութիւն է, որ պահանջուած է թորախտաւորից կամ նրա ժառանգից.— խեղդել իր մէջ բուռն սէրը, կին, զաւակ ունենալու երջանկութեան բաղձանքը։ Բայց միւս կողմից ի՞նչպէս դառն է մի առողջ, սիրած էակի մատնել վարակուելու սպառնալիքի, և ամբողջ սերունդներ—վաղաժամ մահուան կամ ֆիզիկական արատաւորման։ Ի՞նչ աչքով պիտի նայէ մի ծնող իր նիհար, հիւանդ, կիսազարգացած զաւակին, որի ամբողջ կեանքը անընդհատ տանջանք պիտի լինի։

Յանուն ապագայ սերունդների բարօրութեան, յանուն մարդասիրութեան, յանուն ազնւութեան թորախտաւորը չը պէտք է կապէ իր կեանքը ուրիշի հետ։

Պատժում են գողին, գլխատում են մարդասպանին, որ մէկի կեանքն է ոչնչացրել, այն էլ երբեմն ակամայ կերպով, բայց չէ որ թորախտ ունեցողը գիտակցօրէն ո՛չ թէ մէկ, այլ մի քանի մարդկային էակներ, գուցէ և մի ամբողջ ցեղ անբախտութեան, տանջալից կեանքի ու սոսկալի մահուան է դատապարտում։

Եւ մեր առաջ մի դիլեմմա է դրուած.  
— քաղցրացնել գոնէ ժամանակաւորապէս  
մի թորախտաւորի կարճատև կեանքը, թոյլ  
տալով նրան պսակուելու, թէ՛ մի կնոջ ու  
նրա զաւակների կեանքը փրկել:

Դեռ ոչ մի օրէնք չէ արգելում թո-  
քախտաւորին ամուսնանալու, գուցէ շու-  
տով այդ ահագին պակասը լրացուի և  
վճուուի այս դիլեմման, բայց մինչեւ այդ  
ցանկալի ժամանակները հիւանդը ինքը պի-  
տի զօհէ իր երջանկութիւնը և ամուրի  
մնայ, չը մոռանալով, որ մարդիկ յաճախ  
զօհաբերութեան մէջ են գտնում սփոփանք  
և հանգիստ!...

Բարեբախտաբար տուբերկուլօզը որոշ  
սկզբնական շրջաններում բուժելի հիւանդու-  
թիւն է: Թո՛ղ բժշկուեն կասկածելիները, և  
երբ որ կ'առողջանան, վարուեն բժշկի խոր-  
հրդի համաձայն:

Նոյնը պէտք է ասել նաեւ ժառանգա-  
կան տուբերկուլօզի մասին:

Իսկ ինչ վերաբերում է բարակացաւորի  
որդուն, մենք չենք կարող արգելել նրան  
ամուսնանալու, միայն անհրաժեշտ է, որ  
նա մինչեւ 25—30 տարեկան հասակը բո-

լորովին առողջ եղած լինի և ոչ մի կասկածելի երեւոյթ չունենայ վրան. իսկ այդպիսի դէպքերը բարեբախտաբար հազուադիւտ չեն:

## XI

### ՆԵՐՎԱՅԻՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏԻՑ \*)

Մեր «ներվային դարը».— Հասարակական կեանքի զարգացումն ու մտաւոր մրցումն, իբրև զլիաւոր պատճառ բուլաներվուրեան կամ նեվրասթենիայի.— Նեվրասթենիան եւ նրա բնորոշ գծերը.— Հիստերիա ու նրա նշանները.— Ընկնաւորութիւն.— Խելագարութիւն.— Ներվային դրութիւնները եւ նրանց բացատրութիւնը.— Հիպոխոսոցիա եւ մելամաղձութիւն.— Ներվախսոսը եւ ամուսնութիւն:

*Ներվային դար:*

Այդ անուշն ստացաւ տասնիննորդ դարը, շնորհիւ այն անսովոր տենդային դործունէութեան, որ ցոյց տուեց նա:

Հասարակական կեանքը բարդուեց,

---

\*) Մեր լեզուի մէջ *nervus*, *нервъ* սխալ թարգմանում է ջիղ, *нервный*—ջղային, այն ինչ ջիղ—*жила*-ն է (*tendon*), որով մկանները կաշում են ոսկրին. գրում են և նեարդ: Մենք բնդունել ենք ամեն լեզուներում դործածուած լատինէրէն բառը—*ներվ*:

պահանջները շատացան, մրցումը գժուարացաւ, և կեանքի կռիւը սկսեց պահանջել մարդուց աւելի և աւելի մեծ լարումն մտքի, ընդունակութիւնները:

Միւս կողմից հաղորդակցութիւնների հեշտացումն առաջ բերեց տարբեր քաղաքակրթութեան տէր ազգերի անդադար շրջումն, որից բղխում է ընդօրինակման անդիմադրելի ձգտումն և մարդիկ սկսեցին պատճէնել իրարից այն ամենը, ինչ որ գատում էր նրանց միմեանցից: Յսած քաղաքակրթութեան աստիճանի վրայ դանուած անհատները ճիգ էին թափում հաւասարուելու բարձրերին, իւրացնելու նրանց դադափարները, ապրելու նրանց կեանքով, խօսելու նրանց լեզուով...

Մրցումն դադարել էր ֆիզիկական լինելուց. զէնքը—գիտութիւնը, արհեստն էին: Մարդիկ կուռում էին հնարագիտութիւնով, ճարպիկութիւնով, գիտութեամբ, խելքի ճկնութեամբ: Եւ դպրոցն սկսեց կրթել նորանոր սերունդներ հէնց այդ ուղղութեամբ, հարստացնելով նրանց մտաւոր աշխարհը, ծայրայեղ զարգացման հասցնելով նրանց հոգին ի վրաս մարմնի, որ, ընդհակառակը,

առանց խնամքի թողուած, գնալով թուլանում էր ու նուաստանում:

Եւ, ճշմարիտ որ, մտաւոր զարգացման պահանջը կեանքի կռուի համար այնչափ մեծ էր, որ ֆիզիկականը բոլորովին բարձի թողի էր արուած և մոռացուած էր հին Իմաստալից առածը, թէ — առողջ միւսը առողջ մարմնի մէջն է:

Վերջապէս քաղաքային կեանքի զարմանալի զարգանումն, քաղաքների արագ աճումն, որոնք դարձել են մարդկային մլրջնանոցներ, որոնց մէջ խլրտում են միլիոնաւոր էակներ մի կտոր հացի ետեւից ընկած, կամ անգործ, շուայտութեան ու զեղխութեան մէջ խրուած, ջլատելով իրանց կենսական ոյժերը, մէկը — արհեստանոցների թունաւոր օդի մէջ, միւսը — գինետներում, մի երրորդը — մտաւոր անչափաւոր աշխատութեան մէջ...

Եւ երևան եկան ներվային սիստեմի այս արտասովոր, այս անտանելի ճգման հետեանքները. — նեվրասթենիան, կամ ներվաբուլուրթիւնը:

Ամեն գործարան, ամեն մարմնամասը և ամեն համակարգութիւն (լինի նա մկանային

թէ ներվային), երկար արտաոյժ աշխատանքից յետոյ, ուժասպառուում է: Նոյնն է լինում և ներվային սխտեմին: Նա թուլանում է, ընկճւում, կորցնում է իր դիմացկոտութիւնը, և այդ թուլանումն, ի հարկէ, անմիջապէս անդրադառնում է մարդու կազմուածքի վրայ:

Բայց այդ բոլորը չէ:

Մեր նկարագրած երեքգլխանի ճիւղաղբ—տուբերկուօղբ, սիֆիլիսը և ալիօհօլիզմը, սարսափելի դժբախտ են դցում մարդու ամբողջ կազմուածքի մէջ, չը խնայելով, ի հարկէ, և ներվային սխտեմը:

Ալիօհօլիզմը իրաւացի կերպով «ներվային թոյն» է համարւում. սիֆիլիսը չափազանց յաճախ հարուածում է մարդու ուղեղը, սղնածուծը, առաջացնելով մի շարք ներվային վնասումներ ու հիւանդութիւններ, հասցնելով խելագարման: Իսկ տուբերկուօղբ, ծծելով կեանքի հիւթերը, սրկասացնելով արեան կենսատու ոյժը, նոյնպէս ընդհանուր թուլացման է հասցնում ներվային սխտեմը, կամ առաջացնում է ուղեղի սրընթաց մահացու բորբոքումն:

Այս բոլոր ներվային խանգարումները

(միևնոյն է, առաջացած լինեն նրանք տեն-  
դային արագընթաց կեանքից թէ հիւան-  
դութիւններէ) անցնում են ժառանգաբար  
սերնդից սերունդ. սրանք էլ, նոյն պայման-  
ների մէջ գտնուելով, աւելի ևս ներվային  
են դառնում և այսպէս անդադար:

Ներվային հիւանդութիւնների արտա-  
յայտութիւնները այնչափ բազմաթիւ են, որ  
նրանց մանրամասն նկարագրութիւնը հա-  
տորներ են կազմում:

Մենք մի թեթեւ ակնարկ միայն կը ձը-  
գենք այս հիւանդական դրութիւնների վրայ:

Նեվրասթենիան կամ թուլաներվու-  
թիւնը, կարելի է ասել, ընտրուում է ներ-  
վային ոյժի սպառումով, որ հետեանք է  
խեղճի ու զգացմունքների (հոգսեր, մտաւոր  
պարապմունք, սաստիկ կսկիծ, վիշտ) ծայ-  
✓ քայեղ լարման:

Այս հիւանդները մի առանձին ճնշում  
ու ծանրութիւն են զգում գլխում, որ դը-  
ժուարացնում է մտաւոր կանոնաւոր աշ-  
խատութիւնը: Հիւանդները կորցնում են  
տոկունութիւն աշխատանքի մէջ: Օրինակ,  
անկարող են լինում երկար ժամանակ գրել  
կամ կարդալ: Յաճախ տանջւում են անքը-



նութիւնից, որից, ի հարկէ, աւելի ևս յոգ-  
նածութիւն են զգում: Բնաւորութիւնները  
վատանում են—դառնում են մռայլոտ և  
մեղամաղձոտ:

Թեթև ձևի ներվաթուլութիւնը այն-  
չափ տարածուած է արդի հասարակութեան  
մէջ, որ ոչ-հմուտ աչքը չէ կարող նկատել  
նրան, և մարդիկ շարունակում են զբաղուել  
իրանց գործերով:

Բայց ծանր գէսքերում հիւանդը բոլո-  
րովին կորցնում է աշխատելու ընդունակու-  
թիւնը և բարձի թողի է անում իր գործե-  
րը, այնչափ թուլանում են նրա ֆիզիկական  
ու մտաւոր ոյժերը:

Այս բոլորին աւելանում է ցաւեր (մէջ-  
քի, անդամների, գլխի և այլն), սրտի բա-  
բախումն, մարսողական դանդաղումն, ընդ-  
հանուր անսննդութիւն:

Մենք այստեղ կանգ կ'առնենք աւելի  
խոշոր ներվային ու հոգեկան խանգարում-  
ների ու հիւանդութիւնների վրայ, որովհե-  
տև նրանք ահագին դեր են խաղում ամուս-  
նութեան մէջ:

Այս կարգի հիւանդական դրութիւն-  
ների մէջ նկատուում է մի հիմնական գիծ,

այն է—Ես-ի նուաստանումն ու ընկճումն շրջապատող դրդիչներն առաջ. ներվայնոտ մարդը այնքան ներքին ոյժ չունի, որ կարող լինի դիմադրել արտաքին երևոյթներէ ազդեցութեան:

Արտաքին դրդման ու ես-ի մէջ անընդհատ ընդհարումներ կան: Բնական մարդու մէջ ես-ը աւելի ուժեղ է հանդիսանում և յաղթում է դրսից ստացած դրդման. այդ է կազմում մեր կամքի ազատութիւնը, ինքնուրոյնութիւնը: Թուլաներվոտի ես-ը հեշտութեամբ ընկճում է, նրա բնաւորութիւնը անհաստատ է, նա հեշտ ենթակայ է շրջապատող անձանց կամ հանգամանքների ազդեցութեան, դիւրաթեք է, հեշտ համոզուող, մի խօսքով—զուրկ համոզմունքից, կամքից, ես-ի անկախութիւնից:

Հիստերիան այդ եսագրկութեան ծայրայեղ արտայայտութիւնն է: Դա մի վերին աստիճանի բազմանշան հիւանդական դրութիւն է, որի գլխաւոր բնորոշ գիծն է արտաքին ազդեցութիւնների գերակշռումն ուղեղի (կամքի) վրայ: Ուղեղն անզօր է կանդնեցնելու այն գորդիւնը, որ արտաքին

գրգռիչները (խնայուլաները) գցում են նրա ամբողջ ներվային սխառեմի մէջ.—նա կորցրել է, ինչպէս ասում են, արգելաոյժը, որով առողջ մարդն ընդունակ է լինում կանգնեցնել իր շարժումները, կամ նրանց որոշ ուղղութիւն տալ ու որոշ սահմանների մէջ պահել: Օրինակ, երբ բարկութիւնը բարձրացնում է նրա ձեռքը հարուածի համար, ուղեղը կարող է կանգնեցնել նրան, այն ինչ հիստերիկն անկարող է այդ անել, այս պատճառով յաճախ (ասենք համարեա միշտ) հիստերիկը գործում է ըստ էի ազդեցութեան ներքոյ, թէև հասկանար էլ իր վարմունքի անտեղիութիւնը: Այսպէս, աֆֆէկտի ազդեցութեան տակ նրանք յանցանքեր են կատարում, կամ ինքնասպանութիւն գործում և այլն:

Հիստերիկն ընդհանրապէս հեշտ է գրեգուում, զարմանալի նրբազգաց է, ենթակայ բռնկումների, քմահաճ, պահանջող, հեշտ յուսահատուող ու հեշտ ոգևորուող: Նա յաճախ ու յանկարծակի փոխում է իր տրամադրութիւնը, մի ծայրայեղութիւնից միւսի մէջ ընկնելով, միշտ զանազան տարօրինակ բաներ է անում.—մէկը հրաժար-

ւում է ուտելուց, միւսը իրան միշտ սիրահարուած է կարծում, մի ուրիշը յաւիշտակւում է, օրինակ, երաժշտութեամբ, կամ տարօրինակ կոստիւմ է հագնում, կամ ծայրայեղ բարոյականութիւն ու անբարոյականութիւն ցոյց տալիս, և այլն և այլն:

Չը նայելով կամքի թուլութեանը, հիստերիկները զարմանալի ստախօս ու խորամանկ մարդիկ են: Իրանք ընդունակ են երկար պատմութիւններ հնարել և նրանց հաւաստիութեան այնպիսի ձև տալ, որ նոյնիսկ դատաստանատները համոզւում են ու նրանց սխալ վկայութիւնների հիման վրայ դատապարտում անմեղ մարդկանց:

Հիստերիկը իրապէս անդադար տանջանքների մէջ է. ամեն տեսակ (գլխի, անդամների, ստամոքսի, կրծքի, ներքին անոթոյ) ցաւեր հանգիստ չեն տալիս նրան, այն ինչ մարմինը տեղ-տեղ միանգամայն անզգայ է: Աւելի բարդ դէպքերում յառաջանում են հիստերիկ ցնցումներ, կարկամումներ, ջղաձգութիւններ: Խեղճերը վայր են ընկնում, թրփրտում. նրանց ոտերն ու ձեռները ձգձգւում են, կարկամում և այլն: Պակաս

չեն նոյնպէս և հիստերիական կուրուլթիւն,  
խլուլթիւն, անդամալուծութիւն:

Գրանք զանազան խարէական լսողական  
ու տեսողական ցնորքներ ունեն: Լսում են  
տարօրինակ ձայներ ու տեսնում են օտա-  
րոտի բաներ և այլն:

Հիստերիայով հիւանդանում են կանայք  
և տղամարդիկ, գլխաւորապէս երիտասարդ  
հասակում:

Հիւանդութիւնը ժառանգական է  
(25<sup>0</sup>/<sub>10</sub>). կարող է առաջանալ նաև ուրիշ զա-  
նազան տեսակ սրտածառներից, որոնք մեծ  
դժբերութիւն են գցում կնոջ կամ մարդու ներ-  
վային սխտեմի մէջ.— սաստիկ յուզմունք,  
վախ, սիրահարութիւն, կամ կսկիծ, վիշտ,  
յեւոյ հիստերիկ են դառնում յղի կամ զա-  
ւակատան հիւանդութեան տէր կանայք,  
թորախտաւորների զաւակները և այլն:

Ընկնաւորութիւնը (էպիլեպսիա): Հե-  
ղինակները գտել են, որ ընկնաւորների հա-  
մարեա կէսը սերւում են ներվային ծնող-  
ներից: Ալկօհօլիկ ծնողների զաւակները յա-  
ճախ ընկնաւոր են լինում (համարեա 12<sup>0</sup>/<sub>10</sub>),  
պէտք է իմանալ նոյնպէս, որ արբած ժա-

մանակ բեղմնաւորութիւնը յաճախ ընկնաւորներ է տալիս: Յետոյ իբրև պատճառ պէտք է յիշել—չափազանց հասակաւորների և մօտ ազգակիցների ամուսնութիւնը, երկիւղ յղութեան ժամանակ, կամ հարուած փորին և այլն: Ինչ էլ լինէր պատճառը, հիււանդութեան բնորոշ գիծը (որով նա տարբերոււմ է հիստերիայից), ուսագնացութիւնըն է:

Երբեմն, յանկարծ հիւանդը ուշը կորցնում է, վայր է ընկնում, ուր որ պատահի (երբեմն իրան վնասում է ընկնելիս և նոյնիսկ մահանում), և սկսում է կարկամութեան ու ամբողջ մարմնի ձգձգոտումն, բոլոր մկանների կծկումն: Շրթունքների վրայ երևում է արնախառն փրփուր, հիւանդն ընկնում է ու միքանի ժամանակ մնում է անզգայ կիսաշունչ գրութեան մէջ, յետոյ ուշքի է գալիս, առանց որևիցէ յիշողութիւն պահպանած լինելու պատահածի մասին: Երբեմն բոլոր հիւանդութիւնը կայանում է վայրկեանական ուշադնութեան մէջ: Յանկարծ հիւանդը ձեռքի իրերը վայր է գցում, կամ խօսակցութիւնն ընդհատում, առանց այդ նկատելու: Ընդմիջումներում այդ հիւ-

ւանդները բոլորովին առողջ են, թէև ներ-  
վային շտապող, այսպէս ասած, տենդային.  
Նապօլէօնը, Մահամմէդը, Կեսարը, Ժ. Ժ.  
Բուսսօն, Գոստօեվսկին և շատ ուրիշ հան-  
ճարեղ մարդիկ ընկնաւորներ էին:

Համարեա անբուժելի հիւանդութիւն  
լինելով, նա վերջ ի վերջոյ թուլացնում է  
մտաւոր ոյժը, և մարդիկ դառնում են թու-  
լամիտներ, ապուշներ, նոյնիսկ խելագար-  
ներ:

Սրանք առհասարակ ցնորքներ ունեն  
ու սարսափելի կրքոտ են: Ընկնաւորի կիրքը  
անսանձ է, կատաղի, իսկապէս դազանային,  
և այդպիսի բոպէներում նա սոսկալի ոճիր-  
ներ է գործում:

Խելագարութիւն: Անկասկած, ամուս-  
նութեան տեսակէտից խելագարութիւնը  
ամեն ներվային անկանոնութիւններից կա-  
րևորագոյնն է, և նա մեծ մասամբ ժառան-  
գական է (ըստ ոմանց մինչև 90<sup>0</sup>/0), այսինքն  
խելագարները հիւանդոտ ծնողների զաւակ-  
ներ են:

Սարսափելի բան է, երբ ընտանիքի  
անդամներից մէկը խելագար է, և երբէք չը

պէտք է յոյս դնել ժամանակաւոր ընդմիջումների վրայ: Այսպիսի հիւանդները կարող են առժամանակ առողջ երևալ, և յուսաւով, որ բոլորովին ազատուել են իրանց ցաւից, ամուսնանալ, բայց կ'անցնեն միքանի ամիսներ ու տարիներ և մի օր հիւանդութիւնը կը նորոգուի:

Ահա այն գլխաւոր հիւանդական ներկային դրութիւնները, որոնք ահագին դեր են խաղում ամուսնութեան մէջ:

Այս հիւանդութիւնների տէր ծնողները, խօսք չը կայ, որ կ'արտադրեն հիւանդոտ զաւակներ:

Պէտք է նկատել, որ մի հիւանդութիւն կարող է իսկօրէն չանցնել սերնդին, այլ փոխանցնել իբրև ներկային քրտնազրուքիւն: Այս տրամադրութիւնը զանազան ազդեցութիւնների ներքոյ կարող է փոխուել ամեն տեսակ ներկային դրութիւնների, քանի որ բոլոր ներկային խանգարումների մէջ մի տեսակ ազդակցութիւն կայ:

Ժառանգական ներվախտատէրերը (ներկային հիւանդների զաւակները) իրանց հիւանդ ծնողներից ստանում են կիսազարգա-



ցած, ինչպէս ասում են, մանկայնութեան մէջ մնացած ներվային սխտեմ, որ նոյնպէս անկատար կերպով է գործում, ինչպէս որ մանուկների ներվային սխտեմը:

Այսպէս պէտք է բացատրել, ճիշտ որ, այն զարմանալի դիւրազգացութիւնը, վախկոտութիւնը, ինքնասիրութիւնը, կամքի ոյժի թուլութիւնը, տոկոսութեան ու դիմացկոտութեան բացակայ լինելը, կամ յանկարծակի, իմպուլսիվ ակտերը, կրքով վերաբերումն ամեն գործի, որոնք բնորոշում են նեվրաստիկիկին:

Հոգեկան հիւանդական կազմը շատ վաղ է արտայայտուում, դեռ մանկական հասակում: «Ըստ երևոյթին, ասում է մի հոգեբան, երեխաները բոլորովին առողջ են, սակայն անհանգիստ են քնի մէջ ու հեշտ գրքագրութեամբ: Նրանք հակումն ունեն դէպի կարկամումներ և յաճախ լուսնոտ են դառնում: Միքիչ յետոյ նկատուում է մի զարմանալի յակումն դէպի զառանցանք,—ամենափոքր ջերմը զառանցանքի մէջ է գցում նրանց: Աեռական կեանքը չափազանց վաղ է զարթում: ակներև են լինում մտքի զանազան տարօրինակութիւններ ու սեռական բնազ-

դուժի շեղումներ: Նրանց միշտ սպառնում են հոգեկան հիւանդութիւններ. կսկիծը, ծննդաբերութիւնը, հոգեկան ու մարմնական ոյժերի լարումն կարող են առաջ բերել այս հիւանդութիւններից մէկը կամ միւսը: Նրանք շատ զգայուն են, ցնորական մըտքերով տոչորուող. նրանց սէրն ու զգուանքը ոչ մի հիմք չունեն, բայց չափազանց հեշտասէր են:

«Ծանր ժառանգական դէպքերում աչքի է ընկում զաւակների բնաւորութեան վատաշրջումն (dégénération — вырождение). նրանք լինում են ծոյլ, կրքոտ, միշտ անբաւական ու ըստ բնականին հակուած դէպի չարը, լինելով անսիրտ ու հպարտ: Ամենամատաղ հասակում նրանք մի առանձին հակումն են ցոյց տալիս դէպի սուտը, գողութիւնը: Ոչ մի կարգապահութեան չեն ենթարկւում, շատ դժուար են դիմանում ֆիզիկական ցաւերի և անտարբեր են մնում դէպի ուրախութիւնն ու կսկիծը, այն ինչ առանձին բաւականութիւն են զգում կենդանիների տանջանքները դիտելիս: Մտաւոր ընդունակութիւնները շատ վառ են և յիշողութիւնը լաւ, բայց երբոր սեռական

Աւագ

Իրաւաբան

Իրաւաբան  
ԿՅԾՅԲ

զարգացման են հասնում, դառնում են անընդունակ ու վատ են սովորում:

Մտաւոր զարգացման շեղումները բնականից շատերին գցում է վերին աստիճանի անմխիթար ու անբուժելի ներվային տանջալից դրութիւնների մէջ— հիպոխոնդրիայի (ախոնդաջաւ) եւ մելամաղձութեան:

Հիպոխոնդրիկը միշտ զբաղուած է իր սեփական անձով, ո՛չ իբրև անձնասէր, որ ձգտում է ամեն ինչ և ամեն մէկին ծառայեցնել իրան, իր բարօրութեանը, այլ իբրև մի երևակայական հիւանդ, որ միշտ մի որևէ հիւանդութիւն ու անկանոնութիւն է գրտնում իր օրգանիզմի մէջ. ամենից շատ զանդատուում են նրանք մարսողութիւնից: Մակայն մտաւոր ոյժը, տոկունութիւնը աշխատանքի մէջ երկար ժամանակ պահպանուած է, մինչև որ այդ կասկածանքը, թէ նա հիււանդ է, չէ տիրապետում նրան ամբողջովին,— այն ժամանակ նա ծուլանում է, կամ աւելի ճիշտն ասած, զբաղւում է միմիայն երևակայական հիւանդութիւններով:

Մելամաղձոսութիւնը աւելի լուրջ հիււանդութիւն է: Առաջի երեւոյթն այն է, որ հիւանդը բոլորովին անտարբեր է դառ-

նում գէպի այն ամեն բաները և մարդկանց, որոնք նրա համար անհրաժեշտ էին առաջ: Աշխատանքը, զուարճութիւնները, հասարակութիւնը նրա համար կորցնում են իրանց արժէքն ու հանգստացնող ազդեցութիւնը: Նա սառնասիրտ է դառնում գէպի այն անձինք, որոնց սիրում էր: Նա կորցնում է զուարճանալու և տխրելու ընդունակութիւնը: Աշխարհը կորցնում է նրա համար իր հրապոյրը, իր դոյութեան իմաստը: Այս տրամագրութիւնը գնալով զարգանում է, առօրեայ կեանքը սաստիկ տաղտկալի է դառնում: մեղանխօլիկը կորցնում է հաւատ գէպի գործը. այս պատճառով էլ նա կորցնում է աշխատելու աշխոյժը, և դառնում է մի «սառած էակ, որ զուրկ է սկզբնաւորութեամբ, որի բոլոր մտքերն ու հոգսերը պտոյտ են դալիս իր, իբր թէ, փչացած, քայքայուած անձի և շրջապատի ոչնչութեան շուրջը»: Այսպիսի հոգեկան դրութիւնը յաճախ մղում է խեղճ մեղամաղձոտին գէպի անձնասպանութիւն:

Այդպիսի հիւանդութեան տէր մարդիկ (կինարմատ թէ տղամարդ) իրաւունք չուն-

ներն ամուսնանալու. առաջինն այն պատճառով, որ նրանց ներվախտային դրութիւնը անդադար յուզման ու անհանգստութեան մէջ կը պահի ամուսնունս:

Հիստերիկ կնոջ ամուսինը ոչ մի օր հանգիստ չունի. ներքասթենիկ տղամարդու կինը ամենասանրախտ մի արարած է: Էլ չեմ խօսում խելագար և ընկնաւոր ամուսինների մասին:

Բայց մեզ այստեղ աւելի է հետաքրքրում սերունդների վիճակը:

Մենք գիտենք, որ ժառանգական ներվախտութիւնը շատ ձևեր է ընդունում: Պիտենք նոյնպէս, որ ներվախտային ժառանգականութիւնը կարող է թուշել մի սերունդ (ատավիզմ):

Սերունդը կարող է լինել ներքոպաթ, հիստերիկ, ապուշ, յիմար, թուլախել կամ ուղղակի խելագար և այլն, ու կրել իր վրայ այն բազմաթիւ ֆիզիկական արատները, որոնք մենք նկարագրեցինք իբրև այլասերման յատկանիշներ ժառանգական սիֆիլիսի, տուբերկուլոզի ու ալկոհօլիզմի մասին խօսելիս:

Սակայն ասենք, ի մխիթարութիւն արգէն ամուսնացածների, որ կանոնաւոր և ուշադիր, զգոյշ կրթութիւնը կարող է, գոնէ մասամբ, ուղղել ժառանգական արատը, և (քանի որ զաւակները ժառանգում են ընդհանրապէս *սրամաղբութիւն* զէպի հոգեկան հիւանդութիւններ) նոյնիսկ ոչնչացնել այդ բնածին տրամադրութիւնը:

Նախընթաց գլուխներում մենք մանրամասն նկարագրեցինք այն խոշոր հիւանդութիւնները, որոնք պիտի անսպասման արգելք լինեն ամուսնութեան:

Բայց սրանցով չի սպառուում ի հարկէ այդ ցաւերի շարքը: Կան և ուրիշները, որոնց մասին երկար կը լինէր խօսել այստեղ, կասենք միայն, որ որևէ լուրջ հիւանդութիւն ունեցող անձը չը պէտք է ամուսնանայ առանց բժշկի խորհրդի:

## XII

### ՍԻՐՈՅ ԴԵՐԸ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Սիրոյ արտայայտութիւնները հների մէջ.—Նրա դերը ամուսնութեան խնդրում.—Հաճոյանալու բաղձանքը, իրեն բնագոյային զգացմունք.—Մեղի հասարակութեան հայեացքը սիրոյ վրայ.—Հարուստ հարսնացուն.—Օժիտի անբարոյականացնող ոյժը.—Սէրը բազմում եւ գիւղում.—Հարուստ երիտասարդների պակար.—Սէր եւ յափեսակում.—Սէրը կուրացնում է.—Նօտանդէի իմաստը.—Ամուսնացողների բնաւորութիւնների տարբերութիւնը.—Ծնողների դերը զաւակների ամուսնութեան մէջ.—Օջախը.—Դասակարգի, ծագման եւ զարգացման տարբերութիւնը ամուսնացողների մէջ:

Սրբի հասարակութեան մէջ սէրը յետին տեղն է բռնում ամուսնութեան շարժառիթների շարքում, այն ինչ հին ժամանակներում նա ահագին, գերակշիռ գեր է խաղացած եղել այս հարցում:

Ի հարկէ այդ զգացմունքը ամեն դաս

րերում և ամեն տեղ նոյնն է եղել, բայց նրա արտայայտուելու ձևերը տարբեր են եղած և կախուած ազգերի քաղաքակրթութեան աստիճանից:

Հնագոյն դարերում—իսկ մեր ժամանակները կիսավայրենի ազգութիւնների մէջ — աղջկայ առեւանգումն կամ գնումն, որոնց մասին մենք սկզբում խօսել ենք, հիմնուած էր միմիայն սիրոյ զգացմունքի վրայ, այսինքն սիրած աղջկան տիրապետելու բազմանքի վրայ:

Սիրած աղջկայ համար տղամարդը պիտի զոհաբերութիւն անէր, որպէս զի արժանանար նրա սիրուն: Այս զոհաբերութիւնը զանազան ձևեր էր ընդունում տարբեր երկրներում: ԱՆՍՈՒՆ կոչուած ցեղի մէջ ամուսնանալը մի շատ վտանգաւոր բան էր. պսակից յետոյ հարսը փախչում—գնում էր ծնողների մօտ և փեսան պէտք է այնքան բաջ լինէր, որ զօռով մանէր տուն և յափըշտակէր նրան, ուչ չը դարձնելով գլխին տեղացող փայտի հարուածների վրայ: Մի ուրիշ տեղ նշանածը պէտք է ուղղակի կատաղի կռիւ մղէ իր հարսնացուի ու նրա ընկերուհիների հետ, որպէս զի մօտենայ իր



կնոջը: Այս կռուի մէջ նա երբեմն սպանւում է, երբեմն կռիւը տարիներ է տևում, երբեմն էլ յաղթուած հեռանում է: Միջին դարերում ասպետները տուրնիրներ էին սարքում, մենամարտում էին իրար հետ, կեանքները զոհում, որպէս զի դուր գան սիրած էակին, կամ թէ չէ հեռաւոր երկրներ պատերազմի էին գնում—անուն վաստակելու և դուլցիկնէիկն արժանի դառնալու համար:

Իրապէս սա նոյն դուր գալու ձևերն էին, որոնք մենք գտնում ենք կենդանիների մէջ ևս: Միրամարգը փռում է իր պոչը, սոխակը գեղգեղում է իր դայլայլիկը որձերին հաճոյանալու համար:

Հաճոյանալ հաւանած էակին, | սա մի բնազդային ձգտումն է, որ գտնւում է կենդանիների մէջ և որ մարդկային ցեղի մէջ իր գազաթնակէտին է հասել, ընդունելով իսկական բանական սիրոյ կերպարանք:

Սէրը այսպիսով տիրում է բնութեան մէջ. նրա հոգին ու նրա շունչն է:

Սիրոյ մեծ ոյժով է կատարւում բնական ընկրողութիւնը, որով իրար հաւանում են ու միաւորւում այն էգերն ու որձերը, որոնք բնական յատկութիւններով միւսներէջ

գերազանց են: Այսպէս է կենդանական աշխարհում, այսպէս է եղել առաջ և մարդկային ցեղի մէջ:

Բայց կեղծ քաղաքակրթութիւնը, որ խեղդել է կամ աղաւաղել մարդուս մէջ շատ բնազդային լաւ յատկութիւններ, աշխատում է խեղդել և հէնց խեղդել էլ է այս ամենասուրբ զգացմունքը ևս:

Այո՛, սէրը կորցրել է իր հրապոյրը, իր մեծ դերը: Արդի ամուսնութիւնը (այս կանոնաւորուած բնական ընտրողութիւնը) աւելի ուշադիր է դէպի կողմնակի հանգամանքները, քան սէրը, և սա մի մեծ չարիք է, մի ահագին անբախտութիւն, որ եկել է մարդկութեան գլխին:

Ժամանակակից հայերիս վերաբերմամբ ևս իրաւացի են բժիշկ Մինեկրելի խօսքերը.

«Մեր հասարակութիւնը, ասում է նա, հեռացել է ամուսնութեան իսկական նպատակից, և սա դարձել է ուղղակի մի աճուրդ: Ո՛չ որ, նախ քան ամուսնանալը, չէ հետաքրքրում իմանալու, թէ ինչ բարոյականութեան, ինչ բնաւորութեան, ինչ յակումների տէր է այն անձը, որի հետ պէտք է յաւիտեան կապի իր կեանքը: Միակ հոգսը, միակ

խնդիրը դառել է հարսուրիւնը, օժիտը, որ բոլոր առաքինութիւններէց բարձր է դասուումն:

Եւ, յիրաւի, դլխաւոր դերը խաղում են օժիտը, հասարակական դիրքը և այլն, բայց ոչ սէրը: Այն ինչ սէրն է ընտանիքի բախտաւորութեան միակ երաշխաւորը. այն ինչ նա է, որ պիտի լուսաւորի, ազնուացնի, բանաստեղծական ոգի ներշնչի առօրեայ տաղակալի կեանքին:

Շատերը, իբր թէ առաջաւոր դիտական գաղափարներով լցուած, սէրը համարում են հիւանդական երևոյթ: Եթէ մէկը սիրում է առոյգ սիրով, որին զոհում է ամեն բան, զոհում է իր հասարակական դիրքը, իր փայլուն ապագան,—շատերը կարծում են, թէ այդպիսիները փսիսօպաթներ են, տըխմարներ:

Գիտութիւնը, նրանց կարծիքով, միանգամայն հերքում է այս զգացմունքը: Չէ որ սէրը կիրք է, իսկ ամեն կիրք պիտի խեղդուի, հետեւաբար ամեն «խելօք» մարդ պիտի խեղդի իր մէջ սէրը:

Այս է իսկապէս այն գիտնական կոչուած հիմունքը, որով սէրը աւելորդ բալ-

լաստ է համարուում ամուսնութեան խնդրի մէջ:

Բայց սէրը հերքողները ընդհանրապէս գիտնական լինելու հաւակնութիւն չունեն: Նրանք աւելի գործնական գիտումներով են խուսափում իսկական սիրուց: Հաշիւը, շահը ընտանիք կազմելու միակ պատուանդանը դարձած, անհրաժեշտաբար պիտի դարձնէր մարդուն փարիսեցի, ստախօս, պիտի ստիպէր նրան սիրահարուած ձեւանալ, որպէս զի հարուստ կին ուզելիս կարող լինի իր պրօզայիկ ձգտմանը բանաստեղծական աստու կպցնել...

Անտարակոյս ոչինչ չը կայ աւելի զզուելի, քան այս կեղծումը, որ ստորացնում է մարդուս:

Ես չեմ մոռանալ այն խօսքերը, որ մի ֆրանսիական (Օգիւստ Վաքըրիի) պիէսի մէջ արտասանում է մի հարուստ աղջիկ, երբ հայրը զարմացած հարցնում է, թէ ինչի է բոլոր փեսացուներին մերժում:

— Մի՛թէ կարծում ես, հայրիկ, որ իւզաներկ պատկերը ուրախ է, երբ փառահեղ շրջանակի մէջ է դրուած: Ես համոզուած եմ, որ կան գրքեր, որոնք նախանձում են

իրանց կազմին: Ես էլ օժիտիս եմ նախանձում. նրա շնորհիւ են երիտասարդներն այցելում մեզ, նրա վրայ են սիրահարւում: նա վտանգաւոր ախոյեան է ինձ համար: Ես կը փափագէի արտաքսել նրան ու աղքատ մնալ: Ո՛վ գիտի, գուցէ կայ մի ազնիւ երիտասարդ, որին ես հաճելի եմ, բայց նա չէ համարձակւում իր զգացմունքը արտայայտել, երկընչելով մի գուցէ կարծեն, թէ հարստութեան համար է: Իսկ եթէ մէկն էլ վստահութիւն է ունենում խօսելու, խօսում է այնպիսի խուլ ձայնով, որ նրա խօսքերը կորչում են մեր տանը շարժուող ոսկու աղմուկի մէջ: Լռեցրու ոսկու այդ աղմուկը, որպէս զի ես կարողանամ լսել նրանց ձայնը և լսածիս պատասխանել»:

Ո՛րչափ հոգեբանութիւն կայ այդ մի քանի խօսքերի մէջ, և որքան լրջահայեաց ու խելացի պիտի լինի աղջիկը, որ կարողանայ այդ դժուար հարցը վճռել:

Յաւակցաբար մեր օրիորդները այդչափ դիտակցութիւն չունեն, և օժիտը նրանց (կամ, աւելի ճիշտ ասած, նրանց ծնողների) ձեռքին մի լաւ միջոց է «փեսայ որսալու»:

Եթէ կան «փեսայ որսողներ», աւելի

ևս բազմաթիւ են հարուստ հարանացու  
«ճանկողներ»:

Ի հարկէ, լինում են դէպքեր, երբ երկու  
տասարդը հաւանում է ու անկեղծօրէն սիր  
ում մի հարուստ աղջկայ, բայց ընդհան  
րապէս նրանք սիրում են օժիտը, նաւթա  
բաժինները և ամուսնանում են դրանց վրայ  
և ոչ թէ աղջկայ:

Այս դէպքում արդէն փեսան ստորա  
նում է մինչև շողքորթութիւն, ստութիւն,  
և ոչ կեղծիք...

Օժիտի անբարոյականացնող ոյժը յայտ  
նի էր հին դարերում ևս: Պատմում են, որ  
Սօլօնը (յունաց մեծ օրէնսդիրը) նկատելով,  
որ կանայք փողով իրանց ամուսին են դնում  
և այդպիսով պսակը մի առևտուր դարձնում,  
հրամայեց, որ կինը իր հետ երեք ձեռք հա  
դուստ միայն բերի և մի քանի էժան կա  
րասիք:

Սօլօնի պատուէրը երևի արմատախիլ  
չարեց օժիտի սովորութիւնը, որ այսօր իր  
դադաթնակէտին է հասած և ամբողջովին  
խեղդել է դէպի ամուսնութեան մղող միւս  
բոլոր շարժառիթները:

Մեզ նման մի կիսաքաղաքակիրթ ազգի մէջ այս պայմաններում կատարուած միութիւնը հազիւ թէ անվրդով մնայ: Եւ, յիշաւի, մեր մէջ հազուագիւտ են հարուստ տղամարդիկ, որոնք իրանց աղքատ կնոջ չք յիշեցնեն մի օր նրանց օրիորդ ժամանակուայ չքաւորութիւնը:

Անողոր է քաղաքային հասարակական կեանքը գէպի իսկական սէրը, նպաստող չէ այդ սիրուն նաև գիւղական կենցաղը:

Գիւղում սէրը «յետոյ է գալիս», պսակից յետոյ, քանի որ պսակից առաջ աղջիկների ու տղաների մէջ յարաբերութիւնները որոշ հասակում արդէն կտրոււմ են, — ճիշտ այն հասակում, երբ նրանք նոր ընդունակ են դառնում ճանաչելու և գնահատելու միմեանց: Երբ որ աղջիկը «հասած» է, նա հարսնացուների շարքն է անցնում և գաղարում է տղաների հետ խօսելուց ու խաղալուց: Այսպիսով գիւղումն էլ սէրը անկարող է լինում զարգանալ. «հաւանում են» ծնողները, երեխաներին մնում է միայն գնալ եկեղեցի իրանց այն-ն ասելու, երբեմն հէնց այնտեղ էլ իրար հետ ծանօթանալու... Յայտնի է, որ մեր մէջ այսպիսի պսակները

առօրեայ երևոյթ են, գոնէ գիւղերում, որտեղ տղայի մայրը տան «բան անող», իր համար օգնական է բերում տուն և ոչ թէ հարս, և որտեղ սակաւ չեն նաև բաւիմարքմաները ծծկեր երեխաների մէջ:

Այս է ահա սիրոյ վիճակը.— նա վաւրնդուած է հասարակութեան համարեա բոլոր խաւերի միջից:

Կայ սակայն մի դասակարգ, որ առերես իսկապէս ոչ մի ակնկալութիւն չպէտք է ունենար աղջկանից և որ կարող էր թոյլ տալ իրան այդ աւելորդ շքեղութիւնը— սիրային ամուսնութիւն. դա մեր հարուստ, միլիօնատէր երիտասարդների դասակարգն է: Եւ, իրօք, պատահում են դէպքեր, երբ մի հարուստ երիտասարդ կին է վերցնում աղքատ, անյայտ տնից. բայց այս օրինակները ցաւակցաբար նոյնպէս բացառութիւն են: Այստեղ ևս դժուար է հաստատ ասել, թէ դա իսկական սէր է եղել: Յաճախ այսպիսի պատկները կատարւում են զարմանալի արագութեամբ մի-երկու շաբաթուայ ընթացքում, որի միջոցին ի հարկէ անհնար է փոխադարձ յակման ծագումն ու զարգանումն: Աղջիկը գեղեցիկ է—բաւական է:



Այսպիսի զգացմունքը չէ կարող ի հարկէ երկարատե լինել.—չուտ թէ ուշ նա կ'անցնի, և լաւ է, եթէ նա փոխուի իսկական սիրոյ,—ցաւակցաբար յաճախ նա թողնում է իր ետեւից միայն զզջումն: Իսկական սէրը ոչինչ առնչութիւն չունի յափշտակման հետ, —նա գոյանում է ու զարգանում նոյնչափ ուղեղի մէջ, որչափ սրտի, որովհետեւ խեղքի, բանակութեան կօնտրօլի տակ է կռում-կոփւում առողջ սէրը:

Զահէլ աղջիկները սեռական հասունութեան մէջ յափշտակում են մի երիտասարդով, նրա մէջ գտնելով այն բոլոր յատկութիւնները, որոնք նրանք ուսումնասիրել են Շէկսպիրի Բոմէօյի, Գեօթէի Հերմանի, Աբբայ Պրեվօյի Պօլի մէջ: Մանաւանդ որ իրանք ժիւլիետտը, Դօրօթէան, Վերջինին են դառնում: Մատաղ աղջկայ վառ երեւակայութիւնը, նրա բանաստեղծական հոգին իդէալացնում են սիրած երիտասարդին, ազնուացնում են նրա նոյն իսկ վատ կողմերը, կամքօղարկում են աչքերից նրա պակասութիւններն ու արատները:

Այստեղ քննադատական ոգին կորած է, այստեղ «սէրը կուրացրել է» աղջկան:

Մրա միակ իդէալն է—նուիրել, զոհել իրան  
այդ երիտասարդին, դառնալ նրա գերուհին,  
—միայն թէ մօտ լինէր նրան: Եւ այդպիսի  
ները գցում են իրանց սիրած մարդու  
գիրկը, առանց տատանուելու, առանց քըն-  
նադատութեան և երջանիկ են զգում  
իրանց մինչև այն սոսկալի ժամը, երբ քօղը  
ընկնում է աչքներից ու անմխիթար, սպեղ  
իրականութիւնը բացում է նրանց առջև  
իր բոլոր յուսահատեցնող անճոռնիութեամբ:  
Մեր դարը այնչափ «գործնական» է դարձել,  
որ ցաւակցաբար մենք պարտաւոր ենք  
զգուշացնել մեր օրիորդներին արդի երիտա-  
սարդների ստախօս ու փաղաքշող լեզուից,  
բայց այդ չէ նշանակում ի հարկէ, թէ սրանց  
մէջ չը կան և անկեղծ մարդիկ:

Այնուամենայնիւ, անկեղծը կեղծից ջո-  
կելու համար հարկաւոր է երկար ծանօ-  
թութիւն: Դա նոյնչափ կարևոր է աղջկայ  
համար, որչափ և տղայի, որովհետև աղջիկ  
ները նոյն չափով ձևացող են ու կեղծող  
Երկար ծանօթութիւնը հնարաւորութիւն է  
տալիս աւելի սառնասիրտ վերաբերուելու  
դէպի մարդիկ, աւելի քննադատական աչ-  
քով նայելու նրանց վրայ:

Նշանդրէքը անտարակոյս նոյն նպատակն է ունեցել սկզբներում: Մօտեցնելով միմեանց փեսացուին ու հարսնացուին, նա միջոց էր տալիս նրանց աւելի մօտ ճանաչել իրար: Յաւակցարար այս սովորութիւնը այժմ ծէս է դարձած և նշանածները այլևս անբաժան են համարուում, թէև զզջացած լինէին: Այն ինչ նշանդրէքը մի իմաստ կ'ունենար, եթէ ամօթ չը լինէր, որ նշանդրածները հեռանային իրարից, երբ չեն հաւանում միմեանց: Ինչ և իցէ, ահագին կարեւորութիւն ունի այն հարցը, թէ որչափ ժամանակ է անցնում նշանդրէքի ու պսակի մէջ: Չափազանց կարճ ժամանակամիջոցը բաւարար չէ նշանդրածներին իրար ճանաչելու համար, իսկ չափազանց երկար նշանդրած մնալն էլ սառնութիւն է գցում նրանց մէջ:

Եթէ նշանդրածները հիասթափուում են, հազար անգամ աւելի լաւ է ազնուաբար բաժանուել, քան թէ անբախտ ամուսնութիւն կազմել, երկնչելով «ինչ կ'ասեն» ից:

Մի հոգեդէտ շատ իրաւացի կերպով

նկատում է, թէ ցանկալի չէ, որ ամուսինները միատեսակ բնաւորութիւն ու միատեսակ տեմպերամենտ ունենան: Ընդհակառակը կապը աւելի ամուր է այնտեղ, որտեղ բնաւորութիւնները միմեանց լրացնում են կամ, աւելի ճիշտն ասած, քիչ են հակառակ լինում: «Երկու կրքոտ և հեշտ բռնկուող բնաւորութիւններ նոյնչափ քիչ շանս ունեն երջանիկ լինելու, որքան երկու չափազանց հանդարտ ու անտարբեր անձինք»:

Տղամարդը պիտի բերի կամքի ոյժ, տոկունութիւն, գործնական խելք, առողջ, մեծ զգացմունքներ, իսկ կինը—հեղութիւն, քաղցրութիւն, մեղմութիւն իր բոլոր գործերում:—Երկուսը ևս համբերողութիւն:

Անտարակոյս անբախտ ամուսնութիւնների մեղքը մեծ մասամբ, եթէ ոչ անբողջովին, ծնողների վրին է:

Նրանք, իբրև աւելի հմուտ մարդիկ, պիտի ղեկավարեն իրանց զաւակներին բնորութեան գործում: Իրապէս ծնողների բոլոր բարեացակամութիւնը կայանում է մեզ մօտ նրանում, որ իրանց որդու համար

«լաւ հարսնացու» կամ «լաւ փեսացու» են ճարուճ: Իսկ «լաւ» ասելով նրանք հասկանում են հարուստ, լաւ դիրք, գեղեցիկ արտաքին ու լաւ կապեր ունեցողին:

Այս յատկութիւնները բաւարար են համարուում, քանի որ ներքին աշխարհը բողարկուած է պահուում գիտողի աչքից:

«էլ չեն հարցնում, ասում է Դըրէն, թէ ինչ ձգտումների, ինչ կրքերի, ինչ բնաւորութեան ու բարոյականութեան տէր է իրանց աղջկայ ձեռքը խնդրողը: Ամենքի վրայ նայում են հարստութեան տեսակէտից և ի նկատի են առնում միայն այն դիրքը, որ փեսացուն կարող է տալ իր ապագայ կնոջ: Եւ երբ որ այսպիսի շարժառիթներով մարդու տուած աղջիկը անբախտ է դուրս գալիս, այն ժամանակ ծնողները էլ խօսք չեն դանում կշտամբելու ու հայհայելու իրանց փեսային և երես են դարձնում նրանից, մոռանալով, որ իրանք են խեղճ աղջկայ դժբախտութեան պատճառը: Չէ որ իրանք էին, որ ետ մղեցին այն աղքատ փեսացուին, որին սիրում էր աղջիկը և որ ազնիւ մարդ էր, և ետ մղեցին այն պատճառով միայն, որ աղքատ էր... Ծնողի

հեղինակութիւնը իր զաւակի ամուսնութեան խնդրում ահագին է: Սակայն նա էլ պէտք է լուրջ նայի խնդրին և գիտակցօրէն վերաբերուի:

Բազմաթիւ օրինակներից կարելի է դուրս բերել, մեր կարծիքով, այս ընդհանուր կանոնը.

Ծնողները կարող են և պարտաւոր են խանդարել ցանկացած ամուսնութիւնը (եթէ ի հարկէ անյարմար են համարում նրան), բայց երբէք չը պէտք է ստիպեն նրան ամուսնանալու իրանց (ծնողների) ընտրածի հետ:

Նրանք երբէք չը պէտք է մոռանան, որ փեսան իրանց համար չէ, այլ իրանց աղջկայ համար է, որ իրանք կը մեռնեն, իսկ աղջիկը ստիպուած է յաւիտեան ապրելու իր ամուսնու հետ: Ես կարծում եմ, որ եթէ բոլոր ծնողները հասկանան այս տարրական բանը, այն ժամանակ զօռով չեն «կապի իրանց զաւակի վզին» մի փեսացու, որին աղջիկը չէ հաւանում և երբէք չի սիրելու:

Եթէ աղջիկը յափշտակուած է մի անարժան մարդով, ծնողների պարտքն է հա-

մոզել, իրատել ու մեղմութիւնով, սիրով ու բարեկամաբար ետ կանգնեցնել իրանց զաւակին սխալ բայլից. իսկ եթէ համոզմունքը չէ ազդում, յետաձգել պսակը երկար ժամանակով, միջոց տալ աղջկան լուրջ խորհելու, իր սիրածին ուրիշների հետ համեմատելու:

Իսկ եթէ աղջկայ ընտրած փեսացուն ամեն տեսակէտից արժանի անձնաւորութիւն է, բայց միայն չքաւոր է կամ ծագում չունի և այլն, այն ժամանակ ծնողները բարոյական ոչ մի իրաւունք չունեն արգելելու այդ ամուսնութիւնը:

Թո՛ղ յիշեն նրանք Թեմիստոկլէսի հռչակաւոր պատասխանը իր աղջկան ուզող երկու փեսացուներին, որոնցից աղջիկը ազբատին էր հաւանել. «Ես գերադասում եմ մարդուն առանց փողի, քան փողը առանց մարդու», կամ այն վաճառականի պատասխանը, թէ «ինձ աւելի հաճելի է, որ իմ աղջիկը երջանիկ լինի ոչ-ազնուական մարդու հետ, քան դժբախտ—դքսուհու տիտղոսով»:

Բայց որպէս զի զաւակները ընդունակ լինեն լաւ ընտրութիւն անելու, ծնողների

պարտքն է վաղօրօք հասկացնել նրանց, թէ ինչ է ամուսնական կեանքը, ինչ է ամուսինը, մայրը և ինչ են նրա պարտականութիւնները: Նրանք պիտի հասկանան, որ շատ անբախտութիւններ աղջկայ կեանքի մէջ հետեանք են այն անգիտութեանը, որի մէջ պահուում է «լաւ կրթուած» «միամիտ» աղջիկը և որի պատճառով այդ խեղճը նետում է իրան առաջին փաղաքշողի գիրկը...

Շատ անբախտութիւններից է փրկում մեզ մեր յարգանքը դէպի օջախը: Օջախը մեծ նշանակութիւն ունի մեր մէջ հարս ու փեսայ ընտրելու հարցում: «Աղջիկը լաւ տնից է», և այդ հանգամանքն իրաւացի կերպով համարւում է բաւարար գրաւական, որ նա բարոյական կին կը լինի ու լաւ մայր: Ի հարկէ լաւ օջախից զաւակ լինելը բացարձակ գարանտիա չէ, բայց ժառանգականութեան օրէնքի համաձայն, պէտք է յուսալ, որ լաւ ընտանիքներում, աւելի հեշտ է գտնել լաւ փեսացու ու լաւ հարսնացու, քան վատերում:

Մեր կիսակիրթ հասարակութեան մէջ դաւակցաբար դեռ ևս կրթութիւնը, բա-



րոյականութիւնը, ազնուութիւնը չեն կարողանում մոռացնել տալ usnr ծագումն: Մի արիստոկրատ կոչուած երիտասարդ միշտ մի քանի աստիճանով բարձր է կարծում իրան իր կնոջից, որ մի որ և է բազաղի ազջիկ է, թէկուզ այդ մեռչանկան իրանից աւելի կրթուած, աւելի զարգացած լինէր: Եւ ընդհակառակը:

Այս տխուր երևոյթը ի հարկէ անքաղաքակրթութեան նշան է, մտաւոր մակերևոյթի ցածութեան արտայայտութիւն է, այնու ամենայնիւ անուսնական խնդրում նա պիտի հաշուի առնուի:

Բեմի վրայից յաճախ նշաւակուել է այս արատը. շատ պիէսներում դուրս են բերուել այն դատարկասիրտ ու դատարկազլուխ «արիստոկրատները», որոնք «իրանց քայքայուած ֆինանսները դրստելու համար» պսակւում են մի որ և է հարուստ մեղչանկայի վրայ, և յետոյ արհամարհանքով, իրանց արիստոկրատութեան բարձրութիւնից նայում նրա ու նրա ծնողների վրայ, անդադար զգալ տալով, որ մեծ բարերարութիւն ու պատիւ են արել նրանց...

Եթէ այդպիսի անախորժութիւնների,

Եթէ չասենք ուղղակի անդադար կռիւների, առիթ են տալիս կարողութեան ու ծագման անհաւասարութիւնը, ինչ հետեւանք պիտի ունենայ ընտանեկան կեանքում ամուսինների մտաւոր զարգացման տարբերութիւնը:

Այս խնդրի լուծումն չափազանց դժուար է, քանի որ այս տարբերութիւնը կարող է շատ մեծ լինել, հետեւաբար և տարբեր կերպով կարող է ազդել ընտանեկան երջանկութեան վրայ:

Եթէ, օրինակ, մարդը համալսարանական է, իսկ կինը գիմնադիան աւարտած աղջիկ, նրանք կարող են գաղափարակից լինել և հասկանալ միմեանց: Իսկ եթէ կինը բոլորովին ուսում չունի, իսկ ամուսինը մեծ ուսման տէր է, կամ ընդհակառակը, երբ մի լաւ կրթուած, ուսում առած աղջիկ (ի հարկէ աղքատ) մի գոռհիկ, անկիրթ ու անուսում տղայի (ի հարկէ հարուստ) կին է դառնում, այն ժամանակ նրանց մէջ քիչ վերև նկարագրուած յարաբերութիւններն են սահմանուում: Վերջին ձևի կապերը այժմ աւելի յաճախ են տեղի ունենում շնորհիւ այն զարմանալի երևոյթի, որ գիւղից եկած ու նոր տուեխները հանած

երեկուայ հասարակ բանուորը, բախտի բերմունքով յանկարծ ահագին կարողութեան տէր է դառնում: Բագուն այդպիսի սիւրպրիզներ սիրում է անել: Ի հարկէ այդպէս հարստացածը իր աղջկան էլ հասարակ մարդու չի տայ, — փողի զօւով և մեր երիտասարդների ստոր փողասիրութիւնից էլ օգտուելով, հեշտութեամբ իր աղջկայ համար մի ինժեներ, կամ մի բժիշկ կը ճարի: Մենք վերցրինք ծայրայեղ դէպքեր, բայց ոչ-բացառիկ դիտող աչքը ամեն տեղ տեսնում է այդպիսի օրինակներ: Ընդհանրապէս ամուսինները այսչափ չեն տարբերում միմեանցից կրթութեամբ, և սիրող մարդը հեշտութիւնով կարող է կրթել-զարգացնել իր կնոջ և բարձրացնել-հասցնել նրան իր զարգացման մակերևոյթին: Գիւղական ազգաբնակութիւնը այնչափ պահանջող չէ դէպի կինը. անուսում լինելը մի խոչընդոտ չէ լաւ ընտանիք կազմելու համար, բայց քաղաքային կեանքում արդէն մեր մէջ ևս սկսում է ծագել հասարակական կրթութեան պահանջ:

Սէրը, փոխադարձ յարգանքը հաւասար

բեցնում է ամուսիններին, ինչ դասակարգի էլ պատկանէին նրանք, ինչ շրջանից էլ դուրս եկած լինէին: Ընդհակառակը, երբ այս փոխադարձ համակրութիւնը բացակայ է, այն ժամանակ ամենամանր անհարթութիւնները սարեր են դառնում, որոնք բաժանում են կենակիցներին միմեանցից:

Շատ միամիտ (յամենայն դէպս չափազանց մեծամիտ ու ինքնահաւան) է այն մարդը, որ կարծում է, թէ պսակուելուց յետոյ իրան «սիրել կը տայ»: Յաճախ զուր կը լինի նրա ջանքերը.— գուցէ աղջիկը հեզ ու հնազանդ կին դառնայ և օրինակելի մայր, բայց նրա սիրտը միշտ սառը կը մնայ, ինչպէս գերեզման: Մի անդունդ յաւիտեան կը բաժանի երկուսի սրտերը, — անդունդ, որ անկարող կը լինեն լցնել աշխարհիս բոլոր աղամանդները...

---

### XIII

#### Վ Ե Ր Ջ Ի Ն Խ Օ Ս Ք

Քնուրբան կենսական ոյժը.— Հիւանդոս սերունդների վիճակը.— Ընտանիքների և ազգերի բարոյական անկումն.— Կենդանական ու բուսական ցեղերի ազնուացումն.— Վերջին խօսք:

Սքանչելի բնութիւնը անդադար բեղմնաւորում է ու մայրանում: Կեանքի թելը չէ կտրւում երբէք: Նա անցնում է անհամար դարերի միջով, որովհետև հիւսուած է բնութեան անսպառ կենսական նիւթերից: Կեանքը մահից է ծնւում!

Հինը, փտածը, բայքայուածը մեռնում է, ձուլւում մայր բնութեան հետ, և կեանքի այս փլատակների միջից բուսնում են նորանոր կեանքեր:

Եւ միայն կենդանիներն ու բոյսերը չեն, որ ապրում են ու բեղմնաւորում:

Քարն ու հողը, ջուրն ու օդը նոյնպէս ապրում են բնութեան այն ոյժով, որ մահուան մէջ ևս կեանք է դրել: Եւ որչափ մեծ է այդ ստեղծագործիչ ոյժը, ամեն կենդանի էակ, ամեն բոյս իր մէջ պարունակում է անհամար կեանքերի սաղմեր. նորածին աղջիկը կրում է իր մէջ 300,000 երեխայի սերմեր, տղան աւելի ևս:

Եթէ այս բոլոր սերմերը բեղմնաւորուէին, երկրի երեսը մի օրուայ մէջ կը ծածկուէր բոյսերով ու կենդանիներով:

Բայց այս սոսկալի աճմանը խանգարում է կեանքի կռիւը:

Կեանքի կռիւը, ապրելու այս պայքարը կատաղի կերպով մղւում է ամեն տեղ, բնութեան բոլոր անկիւններում, կենդանական ու բուսական էակների մէջ:

Ամեն էակ կուտում է այն զէնքով, որ բնութիւնը նրա ձեռքն է տուել: Այս անողոք պատերազմի մէջ ընկնում, տապալւում, ոտի տակ տրորւում է տկարը, անզէնը: Այսպիսով անհետացել են, ու մեր աչքի առջև անհետանում են բուսական և կենդանական ցեղեր, մարդկային ամբողջ ազգեր:

Ասպարէզը մնում է ուժեղին, յաղթողը

Նա է, ով լաւ զինուած է այս կռուի համար, ով ստացել է բնութիւնից ֆիզիկական ու մտաւոր զօրեղ ոյժ, գիմնաստութիւն, տոկունութիւն:

Ի՞նչ պատասխանատու գործ—ծնունդ տալ նոր էակի!

Այս էակը հիւսուած է մեր սեփական կազմուածքի հիւթերից,—այսպիսով նա մեզ է նմանում: Նա ժառանգում է մեզնից իր ֆիզիկական և բարոյական յատկութիւնները:

Տկար ծնողները օր են տալիս տկար, ցաւազար ու արատաւոր սերնդի, որ անընդունակ է գիմնաստութիւն կեանքի կռուին և խոնարհեցնում է իր գլուխը բախտի հարուածների տակ... Այլասեռումն, ցեղի վատանումն, անուժանումն, ապրելու անկամութիւն և անկարելիութիւն:

Այո՛, պատասխանատու գործ է զաւակ ստեծելը, գցել նրան կեանքի հնոցը անպաշտպան, անզէն, վատոյժ, այլասերուած և անպէտք կռուի համար:

Ի՞նչ է այդ ողորմելի արարածի վիճակը: Նա ոտի տակ է ընկնում, տրորւում:

տապալուում կամ քարշ տալիս իր խղճուկ կեանքը, միշտ հասարակական ցած պատուանդանների վրայ մնալով, միշտ նախանձով ու ատելութեամբ նայելով ներքեից վեր նրանց վրայ, որոնք տաղանդի, ընդունակութիւնների ու կամքի ոյժով բարձրացել են վեր, դէպի յաղթական պալատները...

Ի՞նչ դառն, յուսահատեցնող վիճակ:

Ձգտել, փափագել հասնելու մի որ և է դրութեան, ուսանել ամբողջ տարիներ, նոյն իսկ համալսարան աւարտել և անդադար զգալ իր մարմնի խորքերում հիւանդական ժառանգական սաղմերի աճումն ու անդադար զարգանումն, որ կամաց-կամաց անողորմ կերպով բարակացնում է կեանքի թելերը:

Սարսափելի է, այն, տարիներով ճըգնել մի արհեստ, գիտութիւն ձեռք բերելու, և երբ որ վաղեմի փափագին հասած, մարդ յուսալից սրտով պատրաստուում է օտք դնել կեանքի մէջ, յանկարծ սոսկալի թորբախտը տապալում է խեղճին ծաղիկ հասակում, կամ ժառանգական ներկայութիւնը մղում է դէպի խելագարութիւն և ինքնասպանութիւն:



Մեռնել, ոչնչանալ, երբ այդչափ կենսական ոյժ է զգում մարդ իր մէջ, երբ այդքան պայծառ է փայլում կեանքի արևը, անհետանալ հազիւ աչքերը բացած, հազիւ երկրի բարիքների համն առած, հազիւ իր երակներին մէջ կեանքի հոսանքն զգացած: Սնհետանալ, կորչել և այն էլ ծնողների մեղքից...

Ծնողներ, որչափ խղճալի են դրանք ևս, ի՞նչ անմխիթար, սիրտ տոչորող կսկիծ, տեսնել ինչպէս աչքի առաջ հալւում են որդիքը, անվերջ տարիներ դիտէն սիրած էակներին արատաւորուած, հիւանդոտ, այլանդակուած—մէկը խուլ-համր, միւսը ընկնաւոր և հիստերիկ, մի երրորդը անգլիական ախտով բռնուած, կուզիկ, ողնաշարը կորացած, յօդերն ուռած, ոսկորները փած, մի ուրիշը սակաւարիւն, նիհար, կուրծքը խոր ընկած, նուազ, բարակ անդամներով, վզի խլերը բորբոքուած, թարախակալած, ու հազը, թոքախտի այդ սարսափելի նշանը, կրծքում...

Եւ եթէ մահը առժամանակ խնայում է այս տառապեալներին, այս այլասերուածներին, ծնողներին վիճակուած է ականա-

տես լինել այս թոյլ էակների անյաջողութեանը կեանքի կռուի մէջ, նրանց ոստումները կեանքի ուղիում, նրանց անկամութեանը, նրանց տանջանքներին ու յուսահատութեանը, նրանց վերջնական տապալմանը:

«Այո, նոր էակի ստեղծելը մի ծանր դործ է, ասում է Կաղալիս: Ստեղծել և ստեղծելիս նրա աչքերը կուրացնել, ականջները խլացնել, կամ դարձնել նրան անդամալոյծ, պակասաւոր, արատաւոր, կամ նրա ուղեղի վրայ այնպիսի դրոշմ դնել, որ երեխան ծընւում է անխելք, ապուշ, անբնական, վտանգալից թէ իր և թէ ուրիշների համար, ծանր բեռն թէ իր և թէ ուրիշների վրին, — ստեղծել, գցել նրան կեանքի մէջ, որտեղ նա իր արատաւոր կազմութեամբ, իր ներվային վրիպութիւններով պիտի հանդիպի ամենադժբախտ վիճակի»:

Ընտանիքը բաղկանում է անհատներից, ազգը ընտանիքներից:

Եթէ ընտանիքի անդամները տկար են, վատասերուած, — տկար ու վատասերուած է և ազգը:

Եթէ անհատները անընդունակ են դառնում իրանց գոյութիւնը պահպանելու և կորչում են,—կորչում և անհետանում է նաև այն ազգը, որ այդպիսի անհատներից է բաղկացած:

Անողոր է այդ բնական օրէնքը, անդիմադրելի է այն սարսափելի հոսանքը, որ ըջում տանում է վատասերուած ազգերը:

Մեր ազգը արդէն ընկած է, աւելի ընկած, քան թէ կարծում ենք: Պէտք է կոյր լինել չը տեսնելու համար այս արագ գլուրումն, ազգային տոկուն դիմացկոտութեան փլատակուելը կեղծ բաղաքակրթութեան ազգեցութիւններից: Ազգերի ֆիզիկական կորստեանը առաջնորդում է բարոյական այլասեռումն, այն, ազգային ոգու, աւանդութիւնների, դարևոր փայփայած ու մշակուած գանձերի կորցնելը ազգութեան կորստի առաջաւոր երևոյթներն են: Երբէք, մեր երկար պատմութեան ընթացքում, մեր ցեղը այսչափ մօտ չէ եղել ջնջման և երբէք մեր ժողովրդի բարոյական մակերևոյթը այնքան ստորացած չէ եղած, ինչպէս այսօր, այն ինչ երբէք նա չէր կարող այնչափ բարձր լինել, որչափ այսօր:

Այ՛ո, երբ շուրջդ տեսնում ես միայն կեղծիք, երբ առևտուրը, աճուրդը սիրոյ ու համակրանքի տեղ են բռնում, երբ երեկուայ տրեխաւոր անգրագէտ, այսօր հարըստացած գիւղացիին ստորութիւն է համարում իր համագիւղացու աղջիկն ուզել, երբ համալսարան աւարտած, գիտութեան տաճարից նոր դուրս եկած երիտասարդը, վերագառնալով հայրենիք, որոնում է ոչ թէ սէր, այլ դիրք, այլ օժիտ, ինչ կրօնի և ինչ ազգութեան էլ պատկանէր այդ օժիտը, երբ մայրը իր ծծկեր, դեռ ոչինչ չը հասկացող, մանկիկի ականջները լցնում է ամեն տեսակ հնչիւններով, միայն թէ մայրենի հնչիւններ չը լինեն նրանք, երբ մի ազգի մէջ կորել է ինքնաճանաչութիւնը, ինքնազգացումն, երբ отъ Бога отсталъ и къ черту не присталъ,—

Օհ, այն ժամանակ մօտ է այդ ազգի բարոյական սնանկութիւնը, որին յաջորդելու է ֆիզիկական անհետանումն:

Մարդ սոսկում է, դիտելով այն սարսափելի ու անմիտ ինքնասպանութիւնը, որ կատարում ենք մենք մեր սեփական ձեռքով: Մի ամբողջ մարդկային ցեղ անձնասպանութիւն է գործում և այդ անում է

կարծես գիտակցօրէն, համարեա համոզմունքով, որոշ պրօգրամով:

Միայն տխմարներն են կարծում, թէ մի ազգի բարոյական այլասեռումն անկախ է նրա ֆիզիկական ու առողջական դրութիւնից: Ո՛չ, բարոյական անկումն սերտ կապուած է ֆիզիկականի հետ և բարոյական արատի հիմքը ֆիզիկական պակասութիւնն է: Առողջ կազմուածքի, առողջ ուղեղի ու ներվերի տէր մարդը կ'ունենայ առողջ գիտակցութիւն, առողջ հայեացքներ, առողջ իդէալներ: Եւ այդ օրէնքը ամենքը կարող են ստուգել, նայելով իրանց շուրջը, դիտելով այն ընդհանուր ֆիզիկական ու բարոյական այլասեռումն, որ կլանել է մեր «ինտելիգենտ» կոչուած դասակարգը:

Եթէ ուսումնասիրենք «ինտելիգենտ գողի», նաւթախողովակներ ծակողի, կեղծ մուրհակներ գրողի ազգատօհմը, երեւի մի որ և է ներվային արատ կը գտնենք:

Միայն ընտանիքները, լաւ կազմուած ընտանիքները կարող են փրկել մի ազգութիւն, և փրկութեան այդ զէնքն էլ գուլայցել, փտել է:

Մարդիկ դարերի ընթացքում ձգտել են ազնուացնելու ձիերի, ոչխարների, նոյն իսկ կաքաւների ու շների ցեղերը, ընարելով ամենալաւ, ամենաառողջ անհատներ և միաւորեցնելով նրանց. այսինքն արել են արուեստօրէն այն, ինչ որ բիւրաւոր դարերի ընթացքում բնականաբար անում է բնութիւնը: Այսպիսով համարեա ստեղծուել են նորանոր, աւելի գեղեցիկ, աւելի ուժեղ կենդանական ցեղեր:

Եւ մարդը, այդչափ հոգալով անասունների ազնուացման մասին, միանգամայն անուշադիր է մնացել դէպի իր ցեղի բարելաւումն և նոյն իսկ կարծես ձգտում է աւելի ևս վատացնելու նրան:

Նայեցէք ձեր շուրջը: Հարիւրաւոր գեղեցիկ, առողջ կաղմուածքի տէր օրիորդներ, որոնք կարծես հէնց մայրեր լինելու և յաղթանդամ, անարատ սերունդ տալու համար են ծնուած, օժիտի պակասութեան պատճառով տանն են մնացել. այն ինչ, ուրիշները, նուազ և այլասերուած արարածներ, ներվախտութեան ու տուբերկուրօղի զաւակներ և թոքախտի թեկնածու-

ներ, հեշտութեամբ մարդու են գնում, շնորհիւ նաւթային բաժնեթղթերի:

Իսկ աղամարդիկ, կորցրած ամօթն ու բարեխղճութիւնը, զինուած միմիայն սիրուն կին ունենալու եսամոլ ցանկութեամբ, ինչպէս նաև պապաւեա-ի դատած արժէթղթերով, ընտրում է իր ճաշակի համեմատ աղջիկ, կարծես վարունգ ջոկելիս լինէր, և աղջիկը չլացած նրա հարստութեամբ, կամ բժշկի տիտղոսով ու ճարտարապետի կօկարդով, որոշում է կին դառնալ յաճախ մի անբարոյականի, մի սպառուածի, մի դատարկ այլասերուածի, որի առողջութիւնը գինետներում ու հասարակաց տներումն է վատնուած, որի խելքը թղթախաղի կամ ձիարշաւի մէջն է զարգացել և որի միակ արժանաւորութիւնն այն է, որ նա հարուստ հօր որդի է!..

Գիտութիւնը այժմ կանոններ է սահմանել ամուսնութեան համար: Անտարակոյս հեռու չէ գուցէ այն օրը, երբ նա իբրև անվիճելի կօնարօլ յաղթանակով կը մտնի ամուսնութեան շրջանը ևս, ինչպէս մտել է արդէն հասարակական կեանքի միւս շրջան-

ներք: Անտարակոյս մի օր օրէնադրութիւնը իր հսկողութեան տակ կ'առնի այս կենսական ակտը և կը հսկի, որ նա կատարուի գիտութեան ցուցմունքների համաձայն: Այն ժամանակ կը սկսուի մի նոր դար առողջապահութեան համար: Այն ժամանակ միանգամից կը վերանան արատաւորների, վրիպածների ու այլասերուածների լեգիօնները, որոնց պահպանութեան ու բժշկութեան համար հասարակութիւնը ստիպուած է այժմ պահել բազմաձախ հիւանդանոցներ, դժատներ, անկելանոցներ և այլն:

Այն, մի օր հասնելու է այս երջանիկ ժամանակը:

Բայց մինչև այդ ոսկեդարի հասնելը մենք կը ցանկանայինք բանալ ծնողների և ամուսնացող երիտասարդների ու աղջիկների աչքերը և հասկացնել նրանց, թէ որչափ մեծ ու լուրջ քայլ է ամուսնութիւնը և որքան չրջահայեցողութիւն ու զգուշութիւն է հարկաւոր այդ քայլն անելու համար:

Անտարակոյս, ապրուստի ապահովութիւնը մեծ նշանակութիւն ունի ընտանիքի մէջ, բայց նա երկրորդական է, համեմատելով յիշած առողջական պայմաններին: Ա-



առողջ տղամարդը և առողջ կինը չեն կորչի  
կեանքի մէջ, թե թե ի տուած վստահ կ'ըն-  
թանան դէպի բարեկեցութիւն ու երջանիկ  
կեանք.— երջանիկ իրանց սեփական առող-  
ջութեամբ, երջանիկ զաւակների ֆիզիկա-  
կան ու բարոյական բարգաւաճմամբ, եր-  
ջանիկ այն համոզմունքով, թէ կարող եղան  
մի կաթիլ փրկարար բալզամ կաթեցնել մեր  
վշտերի ուկիանի մէջ!...

Վ Ե Ր Ջ



# Ց Ա Ն Կ

էջ

Առաջարան

3

I. Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Զ Ա Բ Գ Ա Յ Մ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը. — Ամուսնութիւնը հին դարերում. — Բազմաչրութիւն և բազմակնութիւն. — Ամուսնանալու երեք սիւտեմները. առեանգումն (աղջիկ վախցնելը), գնումն (բաշլըղ) և փոխադարձ համաձայնութիւն. — Կնոջ զբոսութիւնը. — Նախնական ընտանիք, արեւնակցական ընտանիք, պունալուա.

5

II. Ա Մ Ո Ւ Ս Ն Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի Ա Ռ Ա Ի Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Բ Ը. Ամուսնութեան օգտաւէտութիւնը առողջապահական տեսակէտից. — Պատճառները. — Աղապանների հիւանդութիւնները. — Ամուրիների ներվաչին զբոսութիւնը. — Հիստերիա և խելագարութիւն. — Ընտանեկան կեանքի բարոյական կողմը.

15

III. Ա Մ Ո Ւ Ս Ն Ա Ց Ո Վ Ն Ե Բ Ի Հ Ա Ս Ա Կ Ը. — Սեռական հասունութիւն. — Ամուսնական հասակը. — Վաղաժամ ամուսնութիւն. — Դաշտանը և սեռական հասունութիւնը. — Վաղաժամ ամուսնութեան վտանգները թէ՛ ամուսինների և թէ՛ զաւակների համար. — Ցարաժամ ամուսնութիւնը և դրա հետեանքները.

29

IV. Չ Հ Ա Ս Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ի Ն. — Չհասութեան զաղախարը հին ու նոր ազգերի մէջ. — Մահամմէդն ու Մովսէսը. — Արեւմտեան և արեւելեան եկեղեցական ժողովների որոշումները ազգակցական ամուսնութեան վերաբերմամբ. — Հայոց եկեղեցու սահմանած կանոնները. — Ի՞նչ հիմունք ունէր արեւնակցական ամուսնութեան արգելումն. — Հնների տուած բացատրութիւնները. — Բարոյական հիմունքը. — Արեւնակցական ամուսնութեան ազդեցութիւնը թէ՛ ամուսինների և թէ՛ սերունդի վրայ. — Սրան վերադրած հիւանդութիւնները (խուլ-համբուսութիւն, ներվաչին հիւանդութ., խելագարութիւն, վատասեռումն և ուրիշ.). — Նորագուն գիտական հալեացքները և ժառանգականութեան խաղացած դերը արեւնակցական ամուսնութեան մէջ.

44

**VI.** ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՕՏԱՐ ԱԶՂՈՒԹԵԱՆ  
 ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՄԷՋ.—Ազգերի միակերպու  
 մն ու ձուլումն ամուսնութեան միջոցով.—Մանտե  
 դացցայի կարծիքը պայպիսի միատրութիւնների մա  
 սին.—Սրանց վտանգատրութիւնը սերնդի տեսակէտից. 76

**VII.** ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Ֆիզիկական ու  
 բարոյական ժառանգականութիւն.—Ատալիզմ.—Առաջ  
 ցնաց ու լետազնաց ժառանգականութիւն.—Ծնողների  
 համանման և հակասական շատկանիշների փոխանցումն  
 սերնդին.—Վայսմանի թէօրիան.—Հիւանդական ժա  
 աանգ.—Ժառանգականութեան ոյժը.—Ընտրողութեան  
 օրէնքը ամուսնութեան մէջ.—Ժառանգաբար փոխանց  
 նող հիւանդութիւնները.—Պէտք է բացատրել ժողո  
 վրդին հիւանդական ժառանգականութեան օրէնքները 83

**VIII.** ՍԻՖԻԼԻՍ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.—Սիֆի  
 լիսով վարակուելու ձևերը.—Սիֆիլիսի արտաբնական  
 թիւնները.—Նրա խաղացած դերը ամուսնութեան  
 մէջ.—Հիւանդին—իրան սպառնացող վտանգը.—Ըն  
 տանիքին սպառնացող վտանգը.—Սիֆիլիսի ազդեցու  
 թիւնը ժառանգների վրայ (վիժումն, երեխաների մա  
 հանումն).—Ժառանգական սիֆիլիսի արատաւոր երե  
 տլիքները.—Վատասեռումն ու նրա նշանները.—Սի  
 ֆիլիսի ազդեցութիւնը երկրորդ սերնդի վրայ.—Սի  
 ֆիլիս ունեցողը կարո՞ղ է ամուսնանալ և ի՞նչ պայ  
 մաններում.—Յուրնիէի հինգ պայմանները.—Սիֆի  
 լիսը բուժելի հիւանդութիւն է.—Բժշկութեան փոր  
 կարար ազդեցութիւնը.—Բժշկի դերը ամուսնութեան  
 խնդրի մէջ . . . . . 104

**IX.** ԱԼԿՈՀՕԼԻԶՄ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.  
 Ալկոհօլը թոյն է.—Ալկոհօլիզմ կամ երկարատե  
 թունատրումն.—Ալկոհօլիզմից առաջացած վնաս  
 ները.—Արրեցողի սերունդը.—Յանկալի՞ է արդեօք  
 ամուսնութիւն ալկոհօլիկի հետ. ժառանգական ալ  
 կահօլիկներ.—Ի՞նչ պայմաններում ալկոհօլիկները  
 և նրանց սերունդը կարող են ամուսնանալ . . . . . 132

**X.** ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶ (ԲԱՐԱԿԱՏԱԻ) ԵՒ ԱՄՈՒՍ  
 ՆՈՒԹԻՒՆ.—Տուբերկուլոզի տարածումն և նրա զոհերի  
 թիւը.—Նրա արտաբնականութիւնները.—Նա մի վարա  
 կիչ ու ժառանգաբար փոխանցնող հիւանդութիւն է.

—Վարակումն ամուսնութեան մէջ.—Քոքախտի նշանները.—Նրա նշանակութիւնը ամուսնական կեանքի մէջ.—Նրա աւերիչ ազդեցութիւնը սերնդի վրայ. Բարակացատտի ու նրա զաւակների ամուսնութեան խնդիրը.

147

XI. ՆԵՐՎԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏԻՑ.—Մեր շներվային դարը.—Հասարակական կեանքի զարգացումն ու մտաւար մրցումն, իբրև զյխատր պատճառ թուլաներվութեան կամ նեվրասթենիայի.—Նեվրասթենիան և նրա բնորոշ գծերը.—Հիստերիա ու նրա նշանները.—Ընկնատրութիւն.—Թելազարութիւն.—Ներվային դրութիւնները և նրանց բացատրութիւնը.—Հիպոխոնդրիա և մելամաղձութիւն.—Ներվատտորը և ամուսնութիւն .

158

XII. ՍԻՐՈՅ ԳԵՐԸ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ. Սիրոյ արտայայտութիւնները հների մէջ.—Նրա դերը ամուսնութեան խնդրում.—Հանդիմանալու բաղձանքը, իբրև բնազդային զգացմունք.—Արդի հասարակութեան հայեացքը սիրոյ վրայ.—Հարուստ հարսնացուն.—Օժիտի անբարոյականացնող ոյժը. Սէրը քաղաքում և գիւղում.—Հարուստ երիտասարդների պտակը.—Սէր և չափըտակում.—Սէրը կտորացնում է.—Նշանդէքի իմաստը.—Ամուսնացողների բնատրութիւնների տարբերութիւնը.—Ծնողների դերը զաւակների ամուսնութեան մէջ.—Օջախը.—Գասակարգի, ծագման և զարգացման տարբերութիւնը ամուսնացողների մէջ.

179

XIII. ՎԵՐՋԻՆ ԽՕՍԳ.—Բնութեան կենսական ոյժը.—Հիանդոտ սերունդների վիճակը.—Ընտանիքների և ազգերի բարոյական անկումն.—Վենդանական ու բուսական ցեղերի ազնուացումն.—Վերջին խօսք.

201

Վ. Բիպակ. VI-ի տեղ պէտք է լինի V և այդպէս լաճորդարար:







